

5283

ՄԵՐԳԵՑ ՄԻՐՈՆՈՎԻԶ
ԿԻՐՈՎ

3 Կ 111 Գ

4 - 534

U.S.



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

32.5.3



Սերգեյ Միրնովիչ Կիրովը 1934 թ.

ՅԱՌԻԳ
Կ-53
ԿՅՐ

1 0 AUG 2005

1 DEC 2009

ՍԵՐԳԵՅ ՄԻՐՈՆՈՎԻՉ Կ Ի Ր Ո Վ

1886—1934

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
ՀԱՄԱՌՈՏՆՈՒՐՎԱԳԻԾ



Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ԲԱՆԱԳԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ • 1939

30 JUL 2013

5283

3523
39СЕРГЕЙ МИРОНОВИЧ
КИРОВ

1886—1934

КРАТКИЙ БИОГРАФИЧЕСКИЙ ОЧЕРК

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԸ

Ռուսաստանի հեռավոր հյուսիսի փոքրիկ հետընկած Ուրթում քաղաքում կես դար սրանից առաջ, 1886 թվականի մարտի 27(15)-ին ծնվեց մի մարդ, վորը դարձավ մեր դարաշրջանի ամենահանավոր և պայծառ մարդկանցից մեկը, Ստալինի ողնականը, դործակիցը և բարեկամը:

Կիրովի (Կոստրիկովի) մանկությունը ծանր էր, դաժան: Այն անցնում էր դառն աղքատության մեջ նախկին վյատկայի նահանգի (այժմ Կիրովի մարզի) ճահիճների և անտառների մեջ ընկած դավառական քաղաքի դավառական խուլ անկյունում:

Վյատկայի նահանգը լավ ծանոթ էր քաղաքական վտարանդիներին: Ուրթումը, վորը հեռու չէր ընկած յերկաթուղային ճանապարհից, համարվում էր Մերձուրալյան յերկրի ամենահեռընկած քաղաքներից մեկը: Քաղաքային չքավորությունը մատրնված էր քաղցած կյանքի: Շատերը դատումի էլին գնում Ուրալ կամ Սիբիր:

Կիրովի հայրը՝ Միլոն Իվանովիչ Կոստրիկովը որից որ մի կերպ յուր յեր գնում պատահական աշխատանքով: Մի ժամանակ ծառայում էր իբրև անտառապահ, հետո գրողներ էր ստանում, իր անակի բաղում սրտասպարան տալով չուկա յեկած գյուղացիներին, իրեն նման չքավորներին: Միլոն Կոստրիկովը համառորեն աշխատում էր հաղթահարել կարիքը, և միշտ անհաջող: Նրան մի յեղ էր մնում—աշխատանք փնտռել մի այլ տեղում: Թողնելով ընտանիքը, նա ուղևորվեց Ուրալ և այնտեղ անհետ կորավ:

Կոստրիկովի վորդի Սերյոժան այդ ժամանակ հենց նոր էր չորս տարեկան դարձել: Նա ուներ յերկու քույր էլ—մեկն իրենից փոքր, իսկ մյուսը՝ մեծ: Յերեխաները մնացին մոր, Յեկատերինա Կուզմինիչնայի կամ, ինչպես հարևանուհիներն էլին ան-

վանում նրան, Կուզմովնայի խնամքին: Մայրը կաշվից գուրտ եր գալիս, վորպեսզի մի կերպ կերակրի յերեխաներին: Հետընկած այդ քաղաքում նա հանձն եր առնում ամեն տեսակ աշխատանք. գնում եր տեղական վաճառականների և չինովնիկների տները լվացք անելու, աշխատում եր որավարձով, չոր եր վերցնում տանը կարելու: Բայց Ուրթումում շատ չքավորներ կային, վորոնք պատրաստ էյին ամեն տեսակի աշխատանք կատարելու, իսկ չինովնիկներն ու խանութպաններն, ինչպես ամենուրեք, ժլատ էյին ու գծուծ: Մանր աշխատանքով եր ձեռք բերում Կուզմովնան յուրաքանչյուր կուպեկը: Ուշից վեր աշխատանքը, յերեխաների հոգսը, հավիտենական կարիքը քայքայեցին նրա ուժերը: Յերբ Սերյոժան յոթը տարեկան եր, Յեկատերինա Կուզմինիչնան վախճանվեց Թոքախտից:

Պառավ Մելանյա Ավդեյևնա տատը, վորը հենց այստեղ, Ուրթումում ծառայում եր իբրև դայակ, ստիպված յեղավ դայակութունը Թոքեն և վորբերին իր խնամքի տակ վերցնել: Բայց վաղ ուժերն էյին հերիքում, վոչ ել Կովկասում սպանված գինվոր-ամուսնու համար ստացած դրոշանոց կենսաթոշակը, վորպեսզի Թոքենին տանը մեծացներ:

Մելանյա Ավդեյևնան ստանում եր ամսական ընդամենը յերեք ռուբլի կենսաթոշակ, այլև բնակարանադրամ՝ տարեկան մեկ ռուբլի յոթանասուն կուպեկ: Մտածելն անգամ ավելորդ եր այս փողով ապրելու մասին, առավել ևս յերեք յերեխաներով: Մի յելք եր մնում՝ յերեխաներին հանձնել վորբանոց: Մելանյա Ավդեյևնան հարկադրված յեղավ յերկար ժամանակ գլուխ խոնարհելու Ուրթումի հարուստ-հոգաբարձուների առաջ, բայց նրանք վորբանոց ընդունեցին միմիայն Սերյոժային:

Սերյոժան այդ ժամանակ նոր եր ութ տարին լրացրել. նա դառը լաց եր լինում, չեր ուզում վորբանոց գնալ, բայց վոչինչ չեր կարող անել:

«Փոքրահասակ վորբերի խնամակալության տանը» սովածություն եր, ցուրտ եր, հրապույր չկար. յերկար ժամանակ Սերյոժան չեր կարողանում ընտելանալ տրտում, տխուր կյանքին: Քիչ էյին կերակրում, վատ էյին հագցնում, բայց ստիպում էյին յերկար ազդեցել: Միայն յերբեմն-յերբեմն Սերյոժային Թուլյատրում էյին գնալ տատին տեսության:

Թեպետ և ծանր եր վորբանոցում ապրելը, բայց Սերյոժան իր կայտառությունը չեր կորցնում:

Թխական սաների մեծամասնությանը հակառակ, նա ուժեղ, ժիր և կենսուրախ տղա յեր, առաջինն ամեն տեսակ խաղերի և հնարամտությունների մեջ, հանդես եր բերում սեփական արժանապատվության գլխակցություն և բնավորության մեծ անկախություն:

Ուրթումի հարուստների կուշտ սնված տղաները շարունակ ծաղրում, իսկ յերբեմն ել փողոցում ծեծում էյին վորբանոցի յերեխաներին, վորոնց գլուխները տակից խուզած էյին, վորոնք խղճուկ էյին, վատ կարած չորեր էյին հագնում, գունատ էյին և կորացած:

Մի անգամ վաճառականների տղաները հարձակվեցին նաև Սերյոժայի վրա, բայց նա այնպիսի մի հակահարված տվեց, բռունցքներով այնպես դաս տվեց իր յակից կաշոյ դժբանդից մեկին, վոր դրանից հետո այլևս չէյին համարձակվում Սերյոժային ձեռք տալ: Նա վորբանոցի յերեխաների աչքում իսկական հերոս դարձավ:

Վորբանոցի յերեխաները սովորում էյին յեկեղեցական-ծխական դպրոցում: Հենց այդ նույն դպրոցը տվին նաև Սերյոժային:

Նա լավ եր սովորում, հետաքրքրվող եր ու ընդունակ. դըպրոցը վերջացրեց իբրև առաջիններից մեկը: 1897 թվին վորբանոցի վարչությունը Սերյոժային, վորպես լավագույն աշակերտներից մեկի, ուղարկում ե քաղաքային ուսումնարան: Այստեղ ել Սերյոժան գերազանց ե սովորում:

Հարցասեր խելքով Սերգեյն արդեն ըմբռնեց իր ճանապարհին հանդիպած մարդկանց դրության և բախտի տարբերությունը. հարուստներին ամեն ինչ կարելի յե, նրանց համար են կյանքի բոլոր բարիքները, իսկ աղքատների համար միայն կարիքը, միայն վիրավորանքներն ու նվաստացումները: Սերգեյի ամբողջ համակրանքը, ամբողջ կարեկցությունն այս վերջինների կողմն ե:

Սերգեյի առանձին ուշադրությունն էյին գրավում ու նրա համակրանքն առաջ բերում Ուրթումում բնակվող քաղաքական աքսորականները—ուսանողներն ու բանվորները: Ուրթումի ողբ-վատելները խուսափում էյին աքսորականներից, նրանց անվանում էյին «խուժարարներ», նրանց մասին խոսում էյին միշտ վորոշ յերկյուղով, զգուշաբար:

Արդեն մենակ այս խորհրդավորությունը Սերգեյի մեջ արտակարգ հետաքրքրություն եր առաջացնում, ինչպես և այն, վոր քաղաքական աքսորականները և ամառային արձակուրդներին

Ուրժում յեկող ուսանողները քաղաքից դուրս գտնվող պուրակում յերգում եյին այնպիսի հիանալի, կայտառ, բոլորովին առանձնահատուկ յերգեր:

Սերգեյը գիտեր և սիրում էր յերգել, իսկ «քաղաքականներ» յերգերն այնպես ըստ էյին հիշողության մեջ պահվում, թեև յերբեմն խոսքերն անհասկանալի եյին յերեխաների համար:

1901 թվին, տասնհինգ տարեկան հասակում, Սերգեյն ավարտում է քաղաքային ուսումնարանը, և, իբրև լավագույն աշակերտներից մեկին, նրան Ուրժումի բարեգործական ընկերությունն ուղարկում է Կազան՝ մեխանիկական-տեխնիկական տարրական ուսումնարանում սովորելու:

Ուրժումի բարեգործական ընկերության նախագահն ուսումնարանին հանձնելու համար Սերգեյին տվեց մի պարտավորագիր՝ «Հազցնել Սերգեյ Կոստրիկովին սահմանված տարազ, մատակարարել ուսումնական բոլոր պիտույքները և ժամանակին մուծել ուսման իրավունքի համար սահմանված վարձը», ինչպես նաև ընձեռել նրան «ուսումնական պարագմունքների համար անհրաժեշտ հարմարություններ»: Սակայն իրականում Սերգեյին ցույց տրվող ամբողջ ոգնությունը սահմանափակվեց ամսական հինգ ռուբլի թոշակ նշանակելով: Ճիշտ է, Ուրժումի «բարեգործներ» մեկը Կազանում բնակվող իր բարեկամուհու անունով Սերգեյին մի հանձնարարական նամակ ևս տվեց, և նա (բարեկամուհին) Սերգեյին պատսպարեց, տեղավորելով նրան մութ միջանցքում գտնվող սնդուկի վրա: Այստեղ յերկար ժամանակ էլ ապրեց Սերգեյը. քնում էր, կուչ գալով կարճ սնդուկի վրա. գիշերները պարապում և գծադրում էր խոհանոցում, յերբ խոհարարուհին վերջացնում էր ամաններ հավաքելը:

Կազանի տեխնիկական ուսումնարանի աշակերտները մեջ քիչ չքաղվորներ չկային: Բայց այս չքաղվորների մեջ էլ Կիրովն ամենից ավելի կարեքավորներից մեկն էր:

Տեխնիկական ուսումնարանի դասաւորւնները հիշում են, վոր Սերգեյ Կոստրիկովն իսկապես քաղցած էր, հնարավորություն անգամ չունենալով վճարելու ամենաեփանազին ճաշի համար:

Սերգեյի՝ Կազանում անցկացրած ուսման յերեք տարիները—գրանք ծանր գրկանքների յերեք տարիներ եյին: Նպաստ տալու վերաբերյալ խնդրի վրա չինովնիկի ձեռքը գրել է պատասխան. «Վճարել 5-ական ռուբլի յերեք ամիս»: Մի անգամ Սերգեյը

ժամանակավորապես հեռացվեց ուսումնարանից, վորովհետև չկարողացավ ուսման վարձը մուծել:

Բայց ծանր կարիքը չընկճեց Սերգեյին: Կազանի ուսումնարանումն էլ ամբողջ յերեք տարի նա ուսման մեջ առաջիններից մեկն էր և դասարանից դասարան էր փոխադրվում պարզեններով: Նա հրապուրանքով յերկար ժամերով աշխատում է ուսումնարանի արհեստանոցներում, նույնպիսի հրապուրանքով աշխատում է պրակտիկայում:

Նրա ընկերների և ուսուցիչների հիշողությունների համաձայն կարելի յե հետևել, թե ինչպես էր այդ տարիներին կազմակերպվում Կիրովի բնավորությունը: Նրա մեջ արդեն այն ժամանակ յերևան են գալիս հաստատակամություն, համառություն, անկախություն և միևնույն ժամանակ մի տեսակ հատուկ ջերմություն դեպի ընկերները, դեպի իր նման կարիքի և գրկանքների մեջ գտնվող մարդիկ, հիանալի ազնվություն—գծեր, վորոնք բնորոշում եյին Կիրովին նրա կյանքի, նրա պայքարի բոլոր ժամանակաշրջաններում:

Ահա մի դեպք, վորը բավականաչափ բնորոշում է Սերգեյ Կոստրիկովի վերաբերմունքը իր մոտիկ ընկերների նկատմամբ:

Սերգեյը, յերկար ժամանակ լարված աշխատելով, իր ծանոթ ուսանողներից մեկի հետ մեկտեղ հորինեց և պատրաստեց մի փոքրիկ մոտոր: Գործը հաջողվեց, դրանով հրճվում եյին նրա բոլոր բարեկամները: Բայց ահա ընկերներից մեկը դժբախտության մեջ և ընկնում. նա այլևս չի կարող պարագմունքներին հաճախել. վերջնականապես մաշվել էր շարվարը: Կիրովը, ստանց յերկար մտածելու, շուկայում վաճառում է մոտորը, վորի վրա այնքան շատ աշխատել էր: Այդ վոդով հենց այնտեղ, շուկայում, գնվում է մի նոր շարվար:

Ուսումնարանի տեսչին, վորը մի կոպիտ և կամակոր մարդ էր, Սերգեյը բացահայտորեն բոլորի ներկայությամբ խորհուրդ է տալիս փոխել իր վերաբերմունքը աշակերտների նկատմամբ: Կոստրիկովի հաստատակամությունը և արժանապատվությունը չվարեցնում են նույնիսկ ցարական հին ծառայողին, և նա այլևս ուսի չի անում ծաղրել աշակերտներին: Սերգեյի այս վարմունքի հետևում թաղնված է շատ ավելի բան, քան սովորական պատանեկական համարձակությունը,—այդ տարիներին սկսում է կազմակերպվել նրա քաղաքական գիտակցությունը:

1901—1904 թվականները,—Կազանի մեխանիկական-տեխնի-

կական ուսումնարանում Կիրովի սովորելու տաքինքը, — այդ՝
ամբողջ յերկրում հեղափոխական շարժման աճող վերելքի ժամա-
նակաշրջանն է:

Արդյունաբերական խոշոր կենտրոններում տեղի ելին ունե-
նում բանվորների մասսայական դործադուլներ, վորոնք յերբեմն
ընդհանուր բնույթ ելին ընդունում, ավելի ու ավելի հաճախ
ելին նկատվում դյուղացիներէ յելույթները, հատկապէս Ուկրաին-
այում և Պոլովոժեյում, ուժեղանում ելին հեղափոխական տրա-
մադրություններն առաջավոր ինտելիգենցիայի լայն շերտերում,
հատկապէս ուսանողության մեջ: Յերկիրն ընդգրկած հեղափո-
խական ընդհանուր վերելքը համալսարանական բաժանան խո-
շոր կենտրոն Կազանում առանձնապէս ուժեղ եր արտահայտվում
հեղափոխական անլեզալ ուսանողական կազմակերպություններէ
արագ աճման մեջ:

Կադանի տեխնիկական ուսումնարանի աշակերտները, վորոնք
մոտիկից չվիում ելին ուսանողության հետ, նույնպէս հեռու
չելին մնում արագորեն աճող հեղափոխական շարժումից:

Սկսիեց համեմատաբար անմեղ բողոքներից՝ ուղղված աշա-
կերտների համար ատելի առարկայի՝ կրօնի դաստիարակության
դեմ: Ավելի ուշ տեղի ունեցաւ մեխանիկո-տեխնիկական ուսում-
նարանի աշակերտների խոշոր ընդհարումն իրենց վարչության
հետ, վորը վերջացաւ ժողովով և փողոցային ցույցով:

Կոստրիկովը, ուսումնարանի վարչությունից սահմանված
թույլտվությունը չխնդրելով, միջանի ընկերների հետ դնաց
ուսանողների կազմակերպած ներկայացումը տեսնելու և այնտեղ
հայտարարելից տեխնիկական ուսումնարանի տեսչի կողմից այն
մոմենտին, յերբ թատրոնի առաջ ուսանողները պատրաստվում
ելին ցույց կազմակերպել:

Մյուս ուր կոստրիկովին, ընկերների հետ, կարցեր նստեց-
րին, իսկ ապա ուղում ելին ուսումնարանից վոնդել:

Ամբողջ ուսումնարանը վոտքի կանդնեց, հանդերձարանում
հավաքվեցին բոլոր աշակերտները և բացատրությունների համար
իրենց մոտ պահանջեցին վարչությանը, իսկ վորովհետև վարչու-
թյունը վախեցաւ, հանգես չեկաւ, ուստի աշակերտներն ուսանո-
ղական յերգեր յերգելով փողոց դուրս յեկան և դերեկտորի բնա-
կարանի առաջ նրա համար «հավերժ հիշատակ» յերգեցին:

Նահանգապետը դադանի ղեկուցադրով հաղորդում եր, թե
նոյեմբերի 19-ին «արդյունաբերական ուսումնարանի աշակերտ-



Ս. Մ. Կիրովը 1903 թ.



ները, պարագամենքներից հետո, յերեկոյան ժամը 5-ին խմբով
զուրս դալով ուսումնարանից, ուսանողական յերգեր յերգելով
անցան Գրուզինական փողոցով մինչև Դերժավինյան այգին,
վորտեղից վոստրիկանության պահանջով ցրվեցին տները»:

Վարչութիւնը վախեցած եր աշակերտների հեղափոխական
յելույթից, և Կոստրիկովին թողին ուսումնարանում:

Կազանում կար Կրեստովնիկովի մի մեծ դորժարան, վորը
ամբողջ Ռուսաստանին ոճառ և մոմ եր մատակարարում: Կրես-
տովնիկովն ամենաչար շահագործողն եր: Նրա դորժարանը բան-
վորների համար տաժանաւայր եր: Մեխանիկո-տեխնիկական
ուսումնարանի աշակերտներն այդ դորժարանն ելին ուղարկվում
պրակտիկայի: Սերգեյը դիտում եր, թե ինչպես են ապրում
Կրեստովնիկովի դորժարանի բանվորները, և ահա թե ինչ ե
զրում նա Ուրժումում՝ իր քաւորակնովը, շնորհավորելով մոտե-
ցող գատիկի տոնը:

«Այո, մոտենում ե տոնը... բայց վոչ բոլորի համար.
որինակ, աշատեղ կա Կրեստովնիկովի դորժարան (գիտեք,
կան Կրեստովնիկովի մոմերը): Այստեղ բանվորներն աշ-
խատում են որ ու գիշեր և տարին բոլոր, առանց վորեւ
տոնի. բայց հարցրեք զուք նրանց՝ ինչո՞ւ դուք տոներին ել
եք աշխատում: Նրանք ձեզ կպատասխանեն. յեթե մենք
մի որ անգամ չաշխատենք, ապա՝ մեզ մոտ ստեարինը և
ճարպը կսառեն-կթանձրանան, և կարիք կլինի նորից տա-
քացնելու, վորի համար հարկաւոր կլինի 50, և՛ 70, և՛ 100
ռուբլի: Բայց առացեք, ի՞նչ արժե Փարբիկանտի կամ դոր-
ժարանատիրոջ համար զրկվել 100 ռուբլուց, չե վոր ուղ-
ղակի վոչինչ չարժե: Այո, այս մասին մտածողը կասի.
ինչո՞ւ այս մեկը յերանության մեջ ե, վոչինչ չանելով,
իսկ մյուսը վոչ մի հանդիստ չունի և ապրում ե սարսա-
փելի կարիքի մեջ, ինչո՞ւ յե այս, դուք ի՞նչ եք կարծում»:
Նույն նամակում Սերգեյը պատմում ե, թե ինչ ուժեղ տպա-
վորութիւն ե թողել իր վրա այն նոր պիեսան, վորը գրել ե
Կազանի գիմնադիտաներից մեկը:

«Ներկայումս, — վերջացնում ե Սերգեյը, — այդ գիմ-
նադիտան ամենայն հավանականությամբ արդեն հեռացված ե
ուսումնարանից: Չե վոր ձեզ հայտնի յե, հավանորեն, վոր
մեզ մոտ Ռուսաստանում ուսումնարաններում հրամայում
են կատարել, նմանապես և մտածել միայն այն, ինչ հար-

կալուր և վարչութիւնը: Իսկ յեթե աշակերտը սկսեց դարձա՞նալ, ինչպէս հարկն է, և սկսեց մտածել չափից ավելի բաներ, ապա նրան սովորաբար արտաքսում են և նրանց համար վոնդելը հո բոլորովին հեշտ բան է, մի՞թե այս անասնականութիւնն չէ»:

Արձակուրդներին Ուրժում գալով, Սերգեյը մտերմանում է քաղաքական աքսորականներին հետ: Դեռ յերեւա յեղած ժամանակ նա նրանցից հեղափոխական յերգեր եր սովորում: Իսկ այժմ Սերգեյը ամբողջ ժամեր և անցկացնում աքսորականների հետ ունեցած խոսակցութիւններով, նրանցից հեղափոխական դրականութիւնն է վերցնում: Իր տեխնիկական առաջին ունակութիւնները նա ոգտազօրծում եր նրա համար, վորպեսզի հեկտոգրաֆ պատրաստի: Հեկտոգրաֆի վրա, իր ընկերներից մեկի հետ մեկտեղ, նա գաղտնի կերպով հեղափոխական թուղթիկներ և տպագրում և դրանք ցրում շուկայի հրապարակում, վորտեղ հաւաքվում են չրջակա գյուղերի գյուղացիները:

Կազանում Սերգեյը կապ է հաստատում ուսանողական և բանվորական ընդհատակյա խմբակների հետ: Նա կարգում է հեղափոխական անլեզալ գրականութիւն, ազատարար ունկնդրում խմբակներում մղվող վեճերին:

Այստեղ ել Սերգեյը հեղափոխական թեորիայի ուսումնասիրութիւնն հետ միացնում է հեղափոխական պրակտիկան. նա կազմակերպում է ձեռքի տպագրական մեքենայի հափշտակումը հենց այն տեխնիկական ուսումնարանից, վորտեղ սովորում եր, և այն համաձայն է ընդհատակյա կազմակերպութեան՝ հեղափոխական թուղթիկներ տպագրելու համար:



ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1905—1907 թ.թ.

1904 թվին Կիրովն ամբարտում է Կազանի տեխնիկական ուսումնարանը և 1905 թվին հեղափոխութեան հենց նախորդակին մեկնում է Սիբիր, Տոմսկ: Նա արդեն հեղափոխականորեն տրամադրված յերխառասարդ է, հաստատ վճռականութեամբ լցված՝ իր ուժերը տալու տիրող բռնութեան դեմ մղվելիք պայքարին: Տոմսկում Կիրովը տեղավորվում է վորպես դժադրող Քաղաքային

վարչութեան մեջ և մտնում յերեկոյան հանրակրթական կուրսերը, վորպեսզի պատրաստվի տեխնոլոգիական ինստիտուտ մտնելու համար:

Բայց Տեխնոլոգիական ինստիտուտ Սերգեյ Միրոնովիչին չհաջողվեց ընկնել. հեղափոխական ալիքն ավելի ու ավելի յե վեր բարձրանում: 1904 թվին Նիկոլայ Ռոմանովի կառավարութեան կողմից հանցավորաբար սալքված պատերազմը Յապոնիայի դեմ բաց արեց Ժողովրդի ամենալայն մասսաների առաջ ցարիզմի նեխածութիւնը:

«Յարական կառավարութիւնը հույս ուներ, վոր պատերազմըն իրեն կօգնի ամբացնելու իր քաղաքական դրութիւնը և կանգնեցնելու հեղափոխութիւնը: Բայց նրա հաշիվները չարդարացան: Յարիզմը պատերազմից ել ավելի թուլացավ:

Ռուսական բանակը, վոր վատ եր գլխաված, վատ սովորեցրած ու ղեկավարվում եր ապիկար ու ծախու գեներալների կողմից, սկսեց մեկ պարտութիւն մյուսի հետևից կրել»¹:

Պորտ-Արտուր բերդի առումը յապոնացիների կողմից, ցարական բանակի ջախջախումը Մուկդենի մոտ, Բալթիկ ծովից պաշարված Պորտ-Արտուրին ողնութեան ուղարկված ցարական նավատորմի խորտակումը Յուսիմայի նեղուցում, — այս ամենը նշանակում եր, վոր պատերազմը ցարական Ռուսաստանի կողմից վերջնականորեն տանուլ եր տրված: Յարական կառավարութիւնը հարկադրված յեղավ խայտառակ հաշտութիւն կնքելու Յապոնիայի հետ: Բանվորների վրա, գյուղացիների վրա դրվեց զրկանքների ու զոհերի ամբողջ ծանրութիւնը: Քաղաքի և գյուղի աշխատավորների զայրույթն ու վրդովմունքը դուրս եյին պոռթկում ավելի ու ավելի ահաւոր հեղափոխական յելույթների ձեով: Հեղափոխական գրականութիւնն սկսեց մասսաների մեջ շտեմնելով՝ պահանջ և ամենակենդանի արձագանդ գտնել: Ամենուրեք հեղափոխական անլեզալ խմբակներ եյին ստեղծվում՝ դործարաններում, ֆաբրիկաներում, արհեստանոցներում, ուսումնական հաստատութիւններում, վերջապես, բանակում և նավատորմում:

Տոմսկի հանրակրթական կուրսերում Կիրովը բարեկամութիւն հաստատեց տաղաքիչ-բանվորների հետ: Առանձնապէս մտերմացավ Կոնոնով յեղբայրների հետ, նրանց աջակցութեամբ նա մտաւ հեղափոխական խմբակի մեջ և 1904 թվին վերջից դար-

¹ Համկ(բ)ի պատմութիւն: Համառոտ դասընթաց, Հայքագրատ., էջ 74:

ձալ Տոմսկի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության բող-
չեիկյան խմբի անդամ, կազմակերպություն, վորն այն ժամանակ
միացյալ եր:

Ահա թե ինչպես է նկարագրում Կիրովին ընդհատակյա խմբ-
բակի անդամներից մեկը այդ ժամանակաշրջանում. ցածրահա-
սակ, թիկնեղ, նոր ծլած բեղիկներով, հետ սանրած մազերով,
հագած քրքրված բաճկոն, սև կամ կապույտ վերնաշապիկ: Փոքր
ինչ խոժոռված հոնքերի տակից քննախուռլը և ուշադիր հայացք:

Համեստ, նույնիսկ մի քիչ ամաչկոտ, Սերգեյ Միրոնովիչը
իր լրջմտությամբ, վճռականությամբ և հեղափոխության դործի
հանդեպ ունեցած անհուն նվիրվածությամբ արագորեն նվաճում
է այն բոլոր մարդկանց խորը հարգանքը, վորոնց վիճակվում է
նրա հետ մոտիկից չլիվել:

Սոցիալ-դեմոկրատների ընդհատակյա խմբակում Կիրովին
առաջին անգամ կարդում է Լենինի «Ի՞նչ անել» բրոշյուրը: Այն
մարդիկ, վորոնք ճանաչում էին Կիրովին այդ տարիներին, հի-
շում են, վոր այդ բրոշյուրը նրա վրա ամենաուժեղ տպավորու-
թյուն թողեց:

1904 թվականի վերջին Կիրովը մտնում է սոցիալ-դեմոկրա-
տական կազմակերպության «յենթակոմիտեյի» կազմի մեջ: Սեր-
գեյ Միրոնովիչը յեռանդուն կերպով ձեռնամուխ է լինում հեղա-
փոխական աշխատանքի, հեկտոգրաֆի և միմեոգրաֆի վրա
թուղցիկներ և տպագրում, բանվորների մեջ ագիտացիա յե
մղում՝ ջերմորեն պաշտպանելով լենինյան դիրքերը:

Սկսվում է փոթորկալից 1905 թվականը: Հունվարի 9-ի ար-
յունոտ կերակին ահավոր արձագանգով տարածվում է ամբողջ
յերկրով մեկ: Տոմսկում ևս յեյուլյթ է սլատրատուվում:

Հունվարի 12-ին, «տատյանայի ուրը», ուսանողական տրադի-
ցիոն տոնի ուրը, Տոմսկի լիբերալները քաղաքական բանկետ են
կազմակերպում, մտադրվելով ցուցադրել իրենց ոսկողիցիոն տրա-
մադրությունները, վորոնք ցարական կառավարության այս կամ
այն միջոցառման շատ համեստ և «վայելուչ» քննադատությու-
նից դենը չեն զնում:

Սերգեյ Միրոնովիչը սոցիալ-դեմոկրատական յենթակոմի-
տեյի վորոշմամբ կազմակերպում է բանկետի «գլավթումը». կու-
սակցության յերկու հարյուր անդամների և հեղափոխականորեն
տրամադրված բանվորների հետ ներս է մտնում ժողով և լիբերալ
բանկետը փոխարկում հեղափոխական միտինգի: Հանկարծաստեղծ

միտինգում տարածվում են հեղափոխական թուղցիկներ և յե-
յուլյթ է ունենում մի հուետոր, վորը կոչ է անում մասնակցել Տոմ-
սկի սոցիալ-դեմոկրատական կոմիտեյի կողմից կազմակերպ-
վող ցույցին:

Կիրովի վրա միջանի ուրիշ ընկերների հետ մեկտեղ կոմիտեն
դնում է ցույցի անմիջական կազմակերպումը: Սերգեյ Միրոնո-
վիչը, աջակցություն ստանալով բոլշևիկներն տրամադրված բան-
վորների կողմից, պնդում է, վոր այս յեյուլյթը զինված լինի:
Թեև ատթճանակները, այն ել շատ վատերը և հները, բավական
էին միայն տասնհինգ-քսան մարդու համար, այնուամենայնիվ,
վորոշվեց զինված ցույց կազմակերպել:

Հունվարի 18-ին ցույցի հավաքվեցին միջանի հարյուր բան-
վորներ և ուսանողներ: Դրուժինիկներին գլխավորելով, Կիրովը
պահպանում էր ցույցի դրոշակակրին, իր բարեկամին, տպագրիչ
բանվոր Իոսիֆ Կոնոնովին: Սկզբում ցույցն ընթանում էր անար-
գել, բայց քաղաքի գլխավոր փողոցում ցույցի վրա հարձակվե-
ցին վոստիկաններն ու կազակները և կրակ բաց արին: Յուցա-
բարներն ատթճանակներից պատասխան-համադարկ տվին: Հար-
ձակվողների մեջ իրարանցում ընկավ, միջանի կազակներ ձիերից
վայր ընկան, ըստ յերեուծին, անսպասելիությունից և յերկյու-
ղից: Բայց իրարանցումը չուտով անցավ, ցուցարարների զնդա-
կոծությունը վերսկսվեց: Միջանի ցուցարարներ ծանր վիրավոր-
վեցին, և մոտ հարյուր մարդ ծեծվեցին և թեթև վերքեր ստա-
ցան: Մահացու վիրավորվեց Իոսիֆ Կոնոնովը: Յուցը ցրեցին:
Սերգեյ Միրոնովիչը հաղիվ փրկվեց դադաղած կազակներից-
թրի հարվածից նրա վերարկուն ճղվեց:

Միջանի ընկերներ հիշում են, վոր կազակների յերկյուղն ու
փախուստը յերկու տասնյակ վատթար ատթճանակներից արձակ-
ված համադարկից Կիրովի վրա մեծ տպավորություն թողին.
ուրեմն, ճիշտ ուղի յե ընտրված, հարկավոր է միայն մասսաներին
ավելի լավ կազմակերպել և ավելի ուժեղ զինվել: Նույն յերե-
կոյան ցույցից հետո Կիրովը, ոիսկ անելով ընկնել դադաղած
ժանդարմների ճանկը, անցնում է վոստիկանական գիշերապահ
պահակախմբի միջով, փնտրում-գտնում է մեռելատան մի ան-
կյունում Կոնոնովի դիակը, վորի կրծքին թաղցված մնում էր
դրոշակը: Կիրովը վոստիկանության ձեռքից փրկում է Տոմսկի
բանվորների հեղափոխական դրոշակը, վորը ներկված էր ընկած
մարտիկի արյունով:

Հունվարի 26-ին սոցիալ-դեմոկրատական կոմիտեն կազմա-

կերպեց Կոնոնովի թաղումը, վորի համար հավաքվեցին մոտ
յերկու հազար մարդ: Թաղումը վերածվեց խոշոր ցույցի: Յու-
ցարարները լցված էին այնպիսի ահավոր վճռականությամբ,
վոր վոստիկանությունը ուսկ չարեց նորից նրանց վրա հարձակ-
վելու:

Նրանք, ովքեր գնում էին Կոնոնովի դադաղի յետևից, ճա-
նապարհին կարգում էին «Իբրև սպանված ընկերոջ պսակ» թու-
ցիկը: Այդ թուցիկը գրել էր Կիրովն իր ընկերների հետ մեկ-
տեղ: Թուցիկն ուղարկվեց արտասահման, և այնտեղ բուլճա-
կյան «Вперед» թերթում Լենինը տպագրեց սղաշրջանակով: Թե-
թի նույն համարում մի թղթակցություն տպագրվեց Տոմսկի ղին-
ված ցույցի մասին:

Ցույցից մի քանի ուր հետո, փետրվարի 2-ին, Կիրովին առա-
ջին անգամ ձերբակալեց վոստիկանությունը, վորը հանկարծակի
բռնել էր կուսակցական ընդհատակյա ժողովը: Ժանդարմները
պետին զեկուցում են, վոր «Կոստրիկովը հրաժարվեց ցուցումներ
տալ իր ձերբակալման գործի վերաբերյալ»: Ձեկուցումը պերճա-
խոս է: Կիրովը տասնինը տարեկան հասակում արդեն ամուր
բուլճակ-հեղափոխական էր:

Կիրովի առաջին ձերբակալությունը տևեց մոտ յերկու
ամիս: Բոլոր ձերբակալվածները Կիրովի հետ միասին հրաժար-
վեցին վորևէ ցուցմունք տալ: Վոստիկանությունը, իր ձեռքը
վոչ մի հանցանշան չստանալով, ստիպված յեղավ ձերբակալված-
ներին ազատ արձակել:

Բանտից դուրս գալով, Կիրովն անմիջապես նորից հեղափո-
խական աշխատանքի ձեռնամուխ յեղավ: Նա յեր վարում սո-
ցիալ-դեմոկրատական կուսակցության Տոմսկի կոմիտեյի անդե-
զավ տպարանը, ղեկավարում բանվորական խմբակները:

Հունիսի 14-ին սոցիալ-դեմոկրատական կուսակցության
Տոմսկի կոմիտեն սգո միտինգ կազմակերպեց Իոսիֆ Կոնոնովի
գերեզմանի վրա. ներկա յեր ավելի քան հազար մարդ: Միտինգը
պահպանում էր կոմիտեյի ղինված մարտական դրուժինան: Վոս-
տիկանապետի գլխավորությամբ կազակների մի հարյուրյակ
անցավ միտինգի մոտով, բայց գերադասեց չմիջամտել: Սոցիալ-
դեմոկրատական կուսակցության Տոմսկի կոմիտեյի անունից մի-
տինգը բաց արեց Սերգեյ Միրոնովիչը:

1905 թ. հուլիսին Սերգեյ Միրոնովիչն ընտրվեց ՌՍԴԿ
Տոմսկի կոմիտեյի կազմի մեջ:

1905 թվի ամառը Տոմսկի կազմակերպության մեջ, հատկա-

պես տեղի ունեցող սոցիալ-դեմոկրատական կազմակերպության-
ների Միրոնովի միություն կոնֆերենցիայի կապակցությամբ, ուժեղ
կերպով սրվում են տարածականությունները բուլճակների և մեն-
չեիկների միջև: Սերգեյ Միրոնովիչը կանգնում է բուլճակների
խմբի գլուխը, վորը շուտով փաստորեն փոխարկվում է բուլճա-
կյան ինքնուրույն կազմակերպության:

Որեցոր մեծանում է հեղափոխության ալիքը: Գալիս է
1905 թվականի աշունը:

Տասնիննամյա Կիրովը, Տոմսկի կոմիտեյի հանձնարարու-
թյամբ, ղեկավարում է Տոմսկից 80 կիլոմետր հեռու գտնվող
հանդուցային Տայգա կայարանի յերկաթուղայինների գործադու-
լը, վորտեղ աշխատում էին հազարից ավելի յերկաթուղային
բանվորներ: Կիրովը կազմակերպում է խմբակներ, յեղվթներ և
ունենում միտինգներում, բանվորներին անդադրում բացատրում
է ինքնակալության դեմ մղելիք վճռական դոտեմարտերի անխու-
սափելիությունը: Նա յերկաթուղային բանվորներից դրուժինիկ-
ների մի ջոկատ է կազմում, նրանց համար ղենք ձարում, նրանց
հետ մեկտեղ սովորում տիրապետել ղենքին:

Բորբոքվում էր յերկաթուղիների ընդհանուր գործադուլը:
Կայարանում և յերկաթուղու կից գեմասում փաստորեն ամ-
բողջ իշխանությունը պատկանում էր Տայգա կայարանի գործա-
դուլային կոմիտեյին, վորին գլխավորում էր Սերգեյ Միրոնո-
վիչը: Գործադուլային կոմիտեն ղինաթափ էր անում ժանդարմ-
ներին ու վոստիկանությունը և խլած ղենքով ղինում բանվորնե-
րին, տալիս էր գնացքների մեկնման թույլտվություն, փաստո-
րեն ղեկավարում յերկաթուղային յերթեկույնությունը: Գործադու-
լային կոմիտե էին գալիս վոչ միայն բանվորները, այլև նրանց
կանայք ամեն տեսակի բողոքներով և ինդիկներով ողնություն
հասցնելու մասին:

1905 թվի հոկտեմբերին է: Քերկաթուղիները կանգ են առ-
նում ամբողջ յերկրում, փոստն ու հեռագրատունը դադարեցնում
են աշխատանքը, ընդհանուր գործադուլներն ընդգրկում են ար-
դյունաբերական խոշորագույն կենտրոնները: Կառավարության
ուժը ջլատված է: Սաստիկ վախեցած ցարը ստիպված է ղիջում-
ներ անել: Հոկտեմբերի 17-ին լույս է տեսնում ցարական մանի-
ֆեստն անձի անձեռնմխելիության և քաղաքական ազատույն-
ների խոստումով: Բուլճակները բացատրում են, վոր մանիֆեստը
թակարգ է, վոր ցարական կառավարությունը ուղում է ժամա-
նակ շահել, ուժեր հավաքել և հետո հարվածել հեղափոխու-



Թշաճը: Բողեկները բանվորներին կոչ են անում ղենք վերցնել, նախապատրաստվել զինված ապստամբության համար:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցության Տոմսկի կոմիտեյի ճնշող մեծամասնությունը կանխած է մենչևիկներին զիրքի վրա: Մենչևիկները պնդում են, վոր դործադուլների և զինված յեղույթների ժամանակն անցել է, հարկավոր է միայն մտածել «չնորհված» ազատությունների լավագույն ողտադործման մասին: Մենչևիկները տվյալ մոմենտի համար վորսկես հիմնական խնդիր առաջադրում են անցկացնել քաղաքային դոմայի «դեմոկրատական» ընտրությունները: Կիրովը, վորը պաշտպանում է լենինյան դիրքերը—զինված ապստամբության համար նախապատրաստվելու անհրաժեշտությունը,—Տոմսկի կոմիտեյում համարյա թե մենակ մնաց:

Հոկտեմբերի 20-ին, «ամենավորմած» մանիֆեստի հրապարակումից հետո ընդամենը յերեք ուր անց, սեհարյուրյակայինները խոշոր վաճառականների գլխավորությամբ, նահանգապետի ղեկավարությամբ, արքեպիսկոպոսի որհնությունով, գաղա-նային ջարդ են սարքում Տոմսկում. սեհարյուրյակայինները հրկիզում են Յերկաթուղային վարչություն տունը, վորտեղ թաղնվել էյին մոտերքում տեղի ունեցած միախույզի մասնակիցները: Մոտ 300 մարդ այրվեց, սպանվեց և խեղանդամ դարձվեց: Ձոհերն էլ ավելի շատ կլինեյին, յեթե մարտական դրու-ժինան Կիրովի գլխավորությամբ զինված հակահարված չկազմակերպեր սեհարյուրյակային բանդիտների դեմ:

Բողեկներն տրամադրված բանվորների պահանջով սոցիալ-դեմոկրատական կոմիտեն ավելի լայնորեն է ծավալում դրուժինաների կազմակերպումը: Սեհարյուրյակայինները և վոստիկանությունը վախկոտաբար պոչերը քաշում են և սիրտ չեն անում նոր յեղույթ ունենալ:

Մոսկվայի ղեկամբերյան զինված ապստամբությունը 1905 թվականի հեղափոխության դարդացման բարձրագույն կետն է: Բանվորական հերոսական դրուժինաները, վորոնք թույլ էյին զինված և բազմաթիվ չեյին, բայց ուժգին պաշտպանվում էյին Կարմիր Պրեսնյայի և Մոսկվայի բանվորական մյուս ծայրամասերի բանվորական բնակչության կողմից, մի շարք ուրերի ընթացքում սարսափի մեջ են պահում ցարական կառավարությունը:

Բայց ղեկամբերյան ապստամբությունը ճնշված է, ուսակցիան գլուխ է բարձրացնում: Ամբողջ յերկրով մեկ ձերբակալություններ են, հեղափոխական կազմակերպությունների ջախջախում:

Խում: Սիրիբի մագիստրալով, վոր մինչև այդ փաստորեն դառնում էր բանվորների ձեռքում, շարժվում են պատժիչ եքսպեդիցիանների գլուխ անցած ցարական ղեներալները: Ֆապոնացիներից հաղթված, նրանք այժմ ցույց են տալիս իրենց «ռազմական արիությունը», կախելով և ղեղակահարելով անդեն բանվորներին: Տոմսկում նույնպես մասսայական ձերբակալություններ: Ձերբակալում են նաև Կիրովին այն ուրվա նախորդակին, յերբ նա մտադիր էր մեկնելու Մոսկվա, ուր կազմակերպությունն ուղարկում էր նրան ընդհատակյա տպարանի համար սարքավորում բերելու: Կիրովի բնակարանում ժանդարմները դտան անլեզալ գրականություն: Այդ 1906 թվականի հունվարին էր: Միքանի ամսից հետո Կիրովը Տոմսկի կոմիտեյի աջակցությամբ դրամական գրավականով կարողանում է ազատվել մինչև դատավարությունը:

Կիրովը դուրս է գալիս բանտից և նորից անհապաղ ձեռնամուխ լինում հեղափոխական աշխատանքի: Կոմիտեյի հանձնարարությամբ նա ուրիշ ընկերների հետ միասին կազմակերպում է անլեզալ մեծ տպարան: Տոմսկի ծայրամասում՝ Ապոլլինարի փողոցում գտնվող մի տան տակը վորում են նկուղ, մուտքը սրամուտորեն քողարկում են հողով լեցուն արկղով, վորը տեղաշարժվում է փողբիկ անխնեքով: Աշխատելը բացառապես զժվար է,—հարկ յեղալ դուրս հանել ավելի քան 300 խորանարդ մետր հող, զիշերները հողը դուրս բերել բակը և զգուշությամբ այն հավասարեցնել, վորպեսզի հարևանների կասկածը չհարուցվի: Այդպիսի աշխատանքին սովոր չլինելու հետևանքով ընկերների ձեռքերն արյունըլա յեղան, բայց աշխատանքները վոչ մի ուր չեյին ընդհատվում:

Առաջագրանքը կատարվեց կարճ ժամանակում (մոտ մեկ ու կես ամսում): Տպարանն արդեն պատրաստվում էյին դործի գցել, յերբ այն տունը, վորտեղ տեղավորված էր տպարանը, հանկարծ ներս թափվեցին ժանդարմները: Հոյակապորեն քողարկված տպարանը նրանք չհայտարեցին, բայց «նորոգող բանվորներին», այդ թվում նաև «Ուրժումի մեչչանին Սերգեյ Միրոնովիչ Կոստրիկովին», ձերբակալեցին: Այդ 1906 թվականի հուլիսի կեսերին էր: Ձերբակալության ժամանակ «հանցադործ դործունեյություն» վոչ մի ապացույց չհայտարարվեց, անլեզալ տպարանի մասին ժանդարմներին չհաջողվեց դործ ստեղծել: Սերգեյ Միրոնովիչի ընկերներին չուտով աղատ արձակեցին, իսկ իրեն յո-

Թամսյա բանտարկությունից հետո դատեցին հին «դործով» : Ժանդարմերիան հաշիվ եր մաքրում պրոլետարական հեղափոխականի հետ : Փետրվարի 27 (14) —ին դատարանը Կիրովին դատապարտեց, անչափահասության պատճառով ժամկետը պակասեցնելուց հետո (նա դեռ 21 տարեկան չկար), մեկ տարի 4 ամսյա բանտարկության : Ռեակցիայի հաղթանակը զգացվում եր նաև բանտում : Բանտապահները ցույց ելին տալիս իրենց բարքերը : Որենք հրատարակեց, վորի համաձայն մարմնական պատիժներ ելին մտցվում բանտերում, նույնիսկ քաղաքական բանտարկյալներին համար :

Կիրովը պատրաստվում ե փախչել, բայց փախուստը չի հաջողվում : Յերկու տարի (հաշվելով նաև նախնական բանտարկությունը) Կիրովն անց ե կացնում Տոմսկի բանտում : Հաճախակի յեն սուր ընդհարումները բանտապահների հետ : Բողոքի ամենաչնչին փորձերի դեպքում բանտ են ներս տանում զինվորներին, սկսվում ե հրաձգություն կամերաների պատուհանների վրա : Հաճախ բանտարկյալների մեջ հայտարարվում են վերափոխվածներ, իսկ յերբեմն նաև սպանվածներ : Գիշերները Կիրովը լսում ե մահվան դատապարտվածների հրաժեշտի աղաղակները, վորոնց տանում ելին դեղահաճարելու : Բայց Կիրովն ինքն իրեն պինդ ե պահում : Նա պատրաստվում ե ապագա պայքարի համար, չկորցնելով իրողը վոչ մի ուր : Նա շատ ե կարդում, համաոտրեն, հաստատաբամորեն աշխատում ե ինքն իր վրա, ոգնում ե բանտակից ընկերներին սովորել, բանտում ես հաջողությամբ պայքար ե մղում մենչեիկներին ե եսերներին դեմ :

Ամառը, 1908 թվի հուլիսի 29 (16) —ին վերջանում ե Կիրովի բանտարկության ժամկետը : Նա տեղափոխվում ե Իրկուտսկ, վորովհետև Տոմսկում նրան տառացիորեն ճանաչում ե ամեն մի մատնիչ ե վոստիկան : Իրկուտսկում Սերգեյ Միրոնովիչը կարգի յե բերում հին կապերը բանվորների հետ, քիչ-քիչ վերականգնում ե ջախջախված կազմակերպությունը : Սակայն Կիրովին չվիճակվեց յերկար մնալ Իրկուտսկում : Կիրովի կազմակերպած հենց այն տպարանը (Տոմսկում Ապոլլինարյեվյան փողոցի վրա), վորը, չնայած բոլոր ջանքերին, չկարողացան հայտարարել ժանդարմները 1906 թվի հուլիսին, յերեք տարի հետո — 1909 թվի ապրիլի 7 —ին — բռնակց (այս բառի իսկական ե վոչ թե փոխաբերական իմաստով) : Յերբ սկսեցին քանդել փորվածքի տեղը, դռան տպագրական սարքավորում : Այսպիսով, ժանդարմներն այնուու-

մենայնիվ դռան այն տպարանը, վորը կառուցել եր Կիրովը Տոմսկում, ե այժմ բոլոր ուժերով փնտռում ելին նրա կազմակերպչին, վորպեսզի նրա գլխին դաժան դատաստան տեսնեն : 1909 թվի մայիսին Կիրովն Իրկուտսկից անհետանում ե, մեկնում ե Հյուսիսային Կովկաս, Վլադիկավկազ (այժմ Որջնիկիձե) քաղաքը :



ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՍ

1909 թ. — Փետրվար 1917 թ.

Վլադիկավկազը Թերեքի մարզի գլխավոր քաղաքն եր, բնակչության վայրը Թերեքի կազակային զորքի նշանակովի առամանի, վորն իր անձի մեջ միացնում եր մարզի քաղաքացիական ե զինվորական իշխանությունը : Դրանով հանդերձ դա մեծ թվով զինվորականություն ունեցող պրովինցիալ քաղքենիական-չինովնիկական բավականին խուլ մի քաղաք եր : Քաղաքի ծայրամասերում, արվարձաններում ապրում ելին «մանր մարդիկ» : վարձու բանվորներ, մանր տնայնագործներ ու արհեստավորներ, մանր առևտրականներ ե այլն : Արվարձաններում ապրում ելին բավականաչափ լեռնցիներ, հատկապես ոսեր ե ինգուչներ :

Վլադիկավկազում քիչ թե շատ խոշոր արդյունաբերական յերկու ձեռնարկություն կար միայն՝ Վլադիկավկազի յերկաթուղու արհեստանոցները ե ցինկի փոքրիկ գործարանը : Միաժամանակ քաղաքում կար ահադին կադետական կորպուս, վորում յեղած կազակական քաղնականության, ինչպես նաև լեռնցի Ֆեոդալներին տղաներից ցարիզմը արխիսեհարյուրյակային սպայության հուսալի կադրեր եր դաստիարակում : Վլադիկավկազը հնուց ցարիզմի՝ Կովկասում վարած դադութացման քաղաքականության գլխավոր հենակետերից մեկն եր, մի քաղաքականություն, վոր կիրառում եր կռավարությունը, լեռնցի Ֆեոդալների, կուլակների ե լեռնցի հողևորականության հետ դաշնակցած՝ լեռնցի ժողովրդական մասսաներին դաժանորեն ճնշելու ե ուղղակիորեն կողոպտելու միջոցով :

Այն ժամանակ Վլադիկավկազում սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն գոյություն չուներ : այն ջախջախված եր վոստիկանության կողմից դեռևս 1906—1907 թվականներին :

1908—1912 թ. թ. — սև ռեակցիայի տարիները — հեղափոխա-

կան աշխատանքի համար ամենադժվարին ժամանակներն ելին: Վլադիկավկազ գաղութը հետո Սերգեյ Միրոնովիչը ձեռնամուխ ելինում վերականգնելու բոլշևիկյան կուսակցական կազմակերպությունը, կապեր ե հաստատում տարաններ, յերկաթուղային արհեստանոցների և այլնի բանվորների հետ, նրանց մեջ պրոպագանդիստական աշխատանք ե տանում, կապեր ե հաստատում Վլադիկավկազ յեկող ասանձին ընկերների հետ, հարաբերություններ ե պահպանում և իր խորհուրդներով, ցուցումներով ոգնում մերձակա բանվորական կենտրոնների (Գրոգնիի, Հանքային ջրերի և այլնի) բոլշևիկյան կազմակերպություններին: Սերգեյ Միրոնովիչը միաժամանակ աշխատում ե տեղական «Թերեք» թերթում և նրա եջերում, հաղթահարելով դրա քննական արդյունքները, մերկացնում ե ցարական ինքնակալության քաղաքականությունը և հունիսյերեքյան ռեժիմի «հերոսներին»:

Սերգեյ Միրոնովիչը շատ ժամանակ եր անցկացնում դրքի վրա—տանն՝ իր համեստ փոքրիկ սենյակում կամ դրադարանում: Հաճախ դիրքը ձեռքին դնում եր քաղաքից դուրս, յերբեմն բարձրանում եր լեռները, հասնում լեռնային առլները, դրուցում լեռնայինների հետ, ուսումնասիրում նրանց կենցաղը, ունկնդրում նրանց բողոքներին, կոնկրետ փաստերի վրա ուսումնասիրում ինքնակալության գաղութացման քաղաքականությունը: 1912 և 1913 թվականներին Սերգեյ Միրոնովիչը իր թե պատահաբար շրջում եր Երրուսի մոտի լեռնային կիրճերում, հենց կարգիներին հայտնի «բուռնի» ժամանակ, կարարդիներին, վորոնք վորճում եյին ուժով պաշտպանել լեռնային արտադարների (Չոլկայի) վրա ունեցած իրենց իրավունքը: Իր ճանապարհորդությունների ժամանակ Սերգեյ Միրոնովիչը դարձյալ «պատահաբար» հանդիպում և ծանոթանում եր լեռներում թաքնված կարարդիական գյուղացիներին ղեկավարներին հետ:

Սերգեյ Միրոնովիչի համար դա իր վրա ահաբեկ աշխատանք տանելու մի ժամանակաշրջան եր, մի աշխատանք, վորը մերձավորագույն ցարիներում այնպիսի հարուստ պտուղներ տլեց:

Վլադիկավկազում Կիրովը հանդիպում ե իր ապագա կնոջ—Մարիա Լվովնա Մարկուսին, վորը Սերգեյ Միրոնովիչի հավատարիմ բարեկամը մնաց մինչև նրա կյանքի վերջին օրը:

1910 թվի աշնանը Սերգեյ Միրոնովիչը յերկար ընդմիջումից հետո առաջին անգամ քաղաքից դուրս անտառում դամարում ե բանվորական մասսովկա: Մասսովկայում նա հանդես ե դալիս

ձևով պարզ և բովանդակութամբ խորը մի ճառով: Ճիշտ ե, առաջին մասսովկային միայն տասնհինգ բանվոր կային, բայց սառույցն արդեն ջարդված եր, մասսայական աշխատանքի սկիզբը դրված եր:

Սակայն 1911 թվի ոգոստոսին, յերկամյա վորոնումներից հետո, ժանդարմները հայտարարում են Սերգեյ Միրոնովիչին և ձերբակալում նրան Տոմսկի տպարանի վորճի առթիվ: Նույնպիսի, առաջման բոլոր փայտղլանոցները յերկու ամիս շրջելուց հետո, 1911 թվականի նոյեմբերի 4-ին Սերգեյ Միրոնովիչին բերում են Տոմսկ և նստեցնում բանտ, նրան լավ ծանոթ «Տոմսկի ուղղիչ կալանավորական № 1 բաժանմունքը»:

Չորս ամիս հետո, 1912 թվականի մարտի 16-ին դատն ե: Բայց այստեղ իշխանություններին արտակարգ կոնֆուզ եր սպասում: Սերգեյ Միրոնովիչը 1906 թվականից հետո նշանակելի չափով փոխել եր իր արտաքինը, և մեղադրանքի գլխավոր վկան, վոստիկանական պրիստավը, վորը 1906 թվին Ապոլլինարիյեվյան փողոցում դտնվող տանը ձերբակալել եր բավականին պատառոտված շորերով, չսափրված և չսանրված բանվորներին, հրաժարվեց կարգին հագնված յերիտասարդի մեջ ճանաչել հենց այն ջահել բանվորին, վորին նա հինգ տարի առաջ ձերբակալել եր: Բացի այդ պատարանը չեր կարող հաշի չառնել ամբողջ յերկրում սկսված հեղափոխական նոր վերելքը: Յեվ... «Ուրժումի մեղչանին Սերգեյ Միրոնովիչ Կոստրիկովը» արդարացվեց «հանցանշանների բացակայության պատճառով»:

Սերգեյ Միրոնովիչը նորից Վլադիկավկազումն ե, նորից Վլադիկավկազի բանվորների հետ ե և նորից «Թերեք» թերթի խմբագրության մեջ ե: Այստեղ նա գետեղում ե իր հողվածները «Ս. Կիրով» կեղծանունով: Այս գրական կեղծանունը հեղափոխություն տարիներին դարձավ Սերգեյ Միրոնովիչի նոր ազգանունը, վորով նա հայտնի դարձավ միլիոնավոր մարդկանց:

1912 թվականի նոյեմբերին «Թերեք»-ում «Ս. Կիրով» ստորագրություն դետեղվում ե «Բարքերի պարզություն» մեծ հոդվածը, վորի մեջ Սերգեյ Միրոնովիչը դրաքննությունը յենթակա մամուլի այն ժամանակվա բոլոր սահմաններից դուրս գալով, մերկացնում ե Պետական դումայի դերը, իրենց «ժողովրդի ներկայացուցիչներ» անվանող՝ Դումայի անդամների հետադիմականությունը ու ստորաքարշությունը:

1907 թվականի հունիսի 16 (3)-ի ընտրական ռեակցիոն օրենք-

քի համաձայն ճշդ մեծամասնությամբ Դումա կարող էլին ընկնել միայն կառավարությանը միանգամայն հավատարիմ չինողները, կալվածատերերը, տերտերներն ու խոշոր բուրժուաները:

Նիկոլայ Ռոմանովի կառավարությանն այդ շիրման անհրաժեշտ էր ինչպես ներքին, այնպես էլ հատկապես «արտաքին» դործածության համար: Չե՞ վոր յուրաքանչյուր դժվարին դեպքում կարելի լիք վկայակոչել, թե այս-ինչ որենքը, հատկապես աշխատավոր մասսաներին ատելի որենքը, հավանություն է գտել «Ժողովրդի ներկայացուցիչներին» կողմից: Յե՞ վոր դրանից էլ ավելի կարևոր է—արտասահմանում, յերբ հարկավոր է դես ու դեն ընկնել (իսկ դա հարկ էր լինում հաճախ անել) ոտաբերկրյա նոր փոխառություն ստանալու համար, ցարական կառավարության համար շատ կարևոր էր իր ձեռքում ունենալ այս կողմը: Կառավարության փոխառություններն իրր թե հավանություն են գտել «Ժողովրդի ներկայացուցիչներին» կողմից, և այդ պատճառով հարկ չկա վախենալու ցարին փոխ տված փողերի անվնասության և պահպանվածության համար:

Պետական III և IV դեպիտները հաջողությամբ էլին կատարում նրանց համար նախորոշված այդ ամսթալի շիրմայի դերը, վորը քողարկում էր ցարական ինքնակալության բռնությունն ու խավարամոլությունը:

Դուման փաստորեն դարձավ Նիկոլայ Ռոմանովի իշխանության հենարաններից մեկը:

Յե՞ վ ահա հետընկած պրովինցիալ փոքրիկ քաղաքում մինչև այդ ժամանակ բոլորի համար անհայտ «Ս. Կիրովը» համարձակվում է մերկացնել «Ժողովրդի» յերևակայական «ներկայացուցիչներին» չինծու դերը: Նա թերթում մի հոդված է գետեղում, վորի մեջ հայտարարում է, թե «Ռուսաստանի մեջքին և բարձրացել մի այնպիսի «պառլամենտ», վորտեղ մեծամասնությունն ոժտված է մեկ առաքինությամբ՝ սքանչելի կերպով տիրապետում է «ռեփինին»,¹ վոր «Պուրիշկինի նման խեղճատակները խաղում են ժողովրդից առաքվածների դերը», վոր «յերկիրն որենքներ պետք է ընդունի այն մարդկանց ձեռքից, վորոնք, գուցե, արժանի յեն ամեն մի կոչման, բայց միայն վոչ ժողովրդական ներկայացուցիչների կոչման»:

1) Թափանցիկ ակնարկ է այն բանի, վոր Պետական դումայի շատ դեպուտատներ մասնակցել են հրեական ջարդերի կազմակերպմանը:—Խմբ.:

Կիրովը հոգվածի մեջ մատնացույց էր անում «այդ կողմում նստած քաղաքական դործիչներին՝ անհրաժեշտության դեպքում իրենց դուշնը փոխելու դարձանալի ընդունակությունը»:

«Այս դեպուտատական քամեկեռնությունը բացատրվում է նրանով,—չարունակում է Կիրովը,—վոր մեր պատգամավորների ահագին մեծամասնությունը, բազմաթիվ պայմանների հետևանքով, շատ հեռավոր հարարերություն ունի ընակչության հետ... Այդ պատճառով նրանք իրենց ամեն մի վարմունքի վրա նայում են «ինչպես կհրամայեք»—ի տեսակետից»:

Հասկանալի յե, վոր այն մարդուն, վորը հարձակվում էր ցարական ինքնակալության հենարաններից մեկի վրա, ամենադժան պատիժն էր սպասում:

Հոգվածի հեղինակի և թերթի հրատարակչի դեմ քրեական հետապնդում է հարուցվում: Վաղելիավկադի շրջանային դատարանի դատախազը քննություն է կատարում, վորը տեղում է կես տարի: Բայց այստեղ վրա հասավ Ռոմանովների տան 300-ամյակի առթիվ բաց թողած «բարձրագույն մանիֆեստը», և շրջանային դատարանը վորոշեց դործի վարումը կարճել, իսկ իրեղեն ապացույցը («Թերթ» թերթի բռնագրավված համարը) վոչնչացնել:

1914 թվականի ոգոստոսին Ռուսաստանը համաշխարհային պատերազմի մեջ մտավ: Ընդդեմ հեղափոխությունից մենչեղիկյան-եսերական հրաժարման և ընդդեմ՝ պատերազմի ժամանակ «քաղաքացիական խաղաղություն» պահպանելու դավաճանական լողունդի՝ բոլշևիկները առաջ քաշեցին «խմպերիալիտական պատերազմը քաղաքացիական պատերազմի փոխարկելու» լողունդը:

Իմպերիալիստական պատերազմի տարիները շարունակ ուժեղացող կարիքի և զրկանքների տարիներ էլին բանվորների և գյուղացիական չքավորների լայն մասսաների համար ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ առանձնապես Հյուսիսային Կովկասում, վորտեղ մինչև այդ էլ այսպես կոչված «այլաքաղաքային» դյուղացիության և լեռնցի ժողովուրդների հիմնական մասսան ապրում էր ամենածանր պայմաններում:

Թերթի մարդը¹ համարվում էր կաղակալին մարդ, թեև կա-

1) Թերթի մարդն իր սահմանների մեջ էր ներառում այժմյան Որջնիկիձեյի համարյա ամբողջ յերկրամասը (առանց Նախկին Ստավրոպոլի նահանգի հյուսիս-արևելյան ռայոնների), ինչպես նաև Հյուսիս-Ոսեթական, Կարաբաղի-Բալիկարական և Չչենո-Ինգուշական այժմյան ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետությունները:—Խմբ.:

զականներն այնտեղ ամբողջ բնակչության մեկ հինգերորդ մասից էլ պակաս եյին և յերկու անգամ ավելի քիչ, քան լեռնցիները:

1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի նախորդակին թերեքի կազակութունը տիրապետում էր մշակութային համար պիտանի հողի 60%-ին, վորը զանազան ժամանակներում կազակները խել եյին լեռնցիներից: 1916 թվի պաշտոնական տվյալներով թերեքի մարզի կազակային բնակչության յուրաքանչյուր տղամարդ չնչին ընկնում էր 14,4 դեսյատին հող, լեռնցուն՝ ընդամենը 4 դեսյատին, վորի մեծ մասը պիտանի չէր մշակութային համար: Բնակչության նշանակելի մասը կազմում էյին այն գյուղացիները, այսպես կոչված «այլաքաղաքայինները», վորոնք, իբրեւ կանոն, սեփական հող չունեյին, այլ այն վարձակալում էյին հարուստ կազակներից ստրկացուցիչ պայմաններով կամ այդ կազակները մոտ բատրակութուն եյին անում, յենթարկվելով դաժան շահագործման: Առանձնապես ծանր էր հողային վիճակը լեռնային Ձեչնիայում, լեռնային Ոսեթիայում, Ինգուշիթիայում և Դաղստանում:

Ընդհանրապես կազակները զբաղեցրել էյին լավագույն, ամենապտղաբեր հողերը, իսկ վաթարադույնները՝ քարքարոտ, պակաս մատչելի, դժվարությամբ մշակելի հողերը, — թողնված էյին լեռնցի չքավորությանը:

Բացի այդ, կազակներն ազատված էյին հարկերից, և հարկման ամբողջ ծանրությունն ընկած էր լեռնցիների վրա, վորոնք պաշտոնապես չինտնիկներ լեզվով կոչվում էյին «թերեքի կազակային դորքի տերիտորիայի վրա բնակվողներ»:

Կազակների և չինտնիկության ձեռքով անչեղորեն կիրառելով լեռնցի ժողովուրդների կողոպտման քաղաքականությունը, ցարական կառավարությունը նրանց թողնում էր լիակատար խավարի և տղիտության մեջ: Լեռնցի ժողովուրդներն իրենց գիրը չունեյին: Իսկ արաբական լեզվով գրադիրությունը, իհարկե, անմատչելի չէր բնակչության ահադին մեծամասնության համար: Իբրեւ կանոն, գրագետ (այն էլ համեմատաբար) էյին միայն մուսուլմանները: Որինակ, Ձեչնիայում գրագետները կազմում էյին ամբողջ բնակչության 1%-ից պակաս (0,8%):

Քչված լինելով լեռները, «գյուղացիական դասի բնիկները», ինչպես անվանում էյին լեռնցիներին ցարական գաղութարարներն իրենց տափակ լեզվով, ստիպված էյին մի այլ յեղք վնասել, վորովհետեւ տեղ-տեղ հողը չէր բավականացնում լեռնցի բնակչության մեկ հինգերորդ մասի համար: Տեղական տնայնագործական

առանց այդ էլ թույլ արհեստները անկման եյին հասնում, չէյին զիմանում Ռուսաստանում դարգացող խոշոր արդյունաբերության մրցակցությանը: Լեռնցիները հոժ բաղմությամբ արտադնաց արհեստագործությունների եյին զնում, վորտեղ կատարում էյին ամենակոպիտ, սե աշխատանք:

Բայց այնուամենայնիվ լեռներում մնում էյին չափազանց շատ մարդիկ, վորոնք յերբեմն չունեյին նույնիսկ յեղիպտացորենի բլիթ: Կազակային ստանիցաների վրա յեղած հարձակումները, յերբեք չէյին ընդհատվում, լեռներում յերբեք չէր ընդհատվում զինված պայքարը:

Կազակներն ու տեղական իշխանությունները, իհարկե, պարտքի տակ չէյին մնում, դաժանորեն դատաստան տեսնելով իրենց ձեռքն ընկած խիզախ հարձակումների մասնակիցներին, հոժ բաղմությամբ նրանց ուղարկելով բանտերը և տաժանավայրերը: Բայց վոչ մի պատիժ և բռնություն չկարողացան ընկճել և հնազանդեցնել լեռնցիներին. պայքարը, մերթ մի քիչ հանդարտվելով, մերթ ուժեղանալով, փաստորեն շարունակվում էր անընդհատ:

Ընդհարումներ լինում էյին վոչ միայն կազակների հետ, այլ հաճախ նաև հարևան լեռնցի ժողովուրդների հետ — հողի պատճառով և լեռնային արոտավայրերի պատճառով: Հարձակումները — ձի ու տավար քշել-տանելը, սպանությունները — սովորական յերեւոյթ էյին:

Բոլոր ստրկացնողների վաղեմի քաղաքականությունը — «բաժանիւր, վոր տիրես» — յեռանդալին կիրառվում էր նաև այստեղ: Ռուսական իշխանությունները, կազակներին դատարարելով մոլեռանդ ատելությամբ դեպի լեռնցիները, միևնույն ժամանակ սաստիկ հրահրում էյին անտադոնիզմը լեռնցի առանձին ժողովուրդների միջև:

Աղլամիջյան այս չափազանց բարդ և լարված հարաբերությունների ֆոնի վրա առանձին նշանակութուն էր ստանում դասակարգային շերտավորումը, վորը շատ կամ քիչ վորոշակի արտահայտվում էր բոլոր աղբությունների մոտ: Կազակության մեջ կար չքավորների զգալի մի շերտ, վորը ճնշման էր յենթարկվում կազակության բարձրաստիճան և հարուստ վերնախավի կողմից: Ռուս գյուղացիները, այսպես կոչված «այլաքաղաքայինները», առում էյին հարուստ կազակներին՝ իրենց ազա՜ շահագործողներին:

Լեռնցիներն ունեյին իրենց իշխանները (կարարդացիների մոտ), հին ֆեոդալների սերունդները (ոսերի մոտ) և

իրենց առևտրական բուրժուազիան, ձիերի յերամակների, անասունների մեծ նախիրների տերերը, վորոնք իրենց ձեռքն եյին վերցրել լեռնցիների մոտ մնացած հողերից լավագույնները: Նրանք իրենց համար ամուր հենարան եյին դառնում հողեօրակա- նության մեջ, մոլլաների մեջ: Այստեղ փոխհարաբերությունների մեջ դեռ ամբողջովին թաղալորում եր նախնադարյան այն վա- րկնությունն ու նահապետականությունը, վորի մասին Լենինը մի անգամ չէ, վոր խոսել ե այնպիսի՝ դառնությամբ:

Յեթե առհասարակ ուսական ցարի բոլոր հպատակներին ամենեւին չէր թույլատրւում զբաղվել քաղաքականությամբ, ապա այստեղ, Հյուսիսային Կովկասի լեռներում ե նրա նախա- լեռներում, մարդիկ ապրում եյին լուրերով—տեղական լեզվով «խաբար»ներով,—վորոնք տարածվում եյին զարմանալի արա- դությամբ, բայց հաճախ բռնադատւում եյին հրեշավոր ստեր, հնարված մոլլաների, տեղական ֆեոդալների կամ կոլակների կողմից իրենց շահամուղական նպատակների համար: Լեռնցիների մոտ, վորոնք համարյա գլխովին անդրադետ եյին, թերթերի ու դրժերի մասին խոսք անգամ չէր լինում: Միակ դիրքը, վոր կա- րելի յեր դառնել լեռներում, դա արարերեն զուրանն եր:

Ամբողջ յերկրամասում արդյունաբերությունը չափազանց թույլ եր զարգացած: Բացի Գրոզնու նավթահանքերից ե յերկա- թուղուց, յերկրամասում արդյունաբերական խոշոր ձեռնարկու- թյուններ չկային: Մանր տնայնագործներն ու արհեստավորնե- րը, մանր ձեռնարկությունների բանվորները սղետ, հետամնաց եյին, համակլած մանր-բուրժուական ձգտումներով ե նախա- պաշարումներով: Այս բոլորը բուլչեիկների աշխատանքի համար բացառիկ բարդ ե դժվարին իրադրություն եր ստեղծում:

Այսպես եր Թերեքի մարզը ֆեոդալարյան հեղափոխության ժամանակի մոտերքը:

Փետրվարյան հեղափոխության որերին Վլադիկավկազում կազմակերպվեց բանվորական ե ղինվորական զեպուտատների խորհուրդ, վորի մեջ ահադին մեծամասնություն եյին կազմում մենչեիկներն ու եսերները:

Ժողովրդի լայն մասսաները, արեցած հեղափոխության առաջին հաջողություններից, միառժամանակ դերի դարձան համաձայնողական կուսակցություններին:

«Բուլչեիկյան կուսակցության առաջ խնդիր եր ծառացած՝ բացատրել առաջին հաջողություններից արբած բանվորական ե ղինվորական մասսաներին, վոր հեղափոխության լիակատար

հաղթանակը դեռ հեռու յէ, վոր քանի դեռ իշխանությունը գտնվում ե բուրժուական ժամանակավոր կառավարության ձեռ- քին, իսկ խորհուրդներում տիրություն են անում համաձայնողա- կանները՝ մենչեիկներն ու եսերները, ժողովուրդը չի ստանա վոչ խաղաղություն, վոչ հող, վոչ հաց, վոր լիակատար հաղ- թանակի համար անհրաժեշտ ե մի քայլ ես անել դեպի առաջ ե իշխանությունը հանձնել խորհուրդներին»¹:

Բուլչեիկների փոքրիկ խմբի գլուխն անցած, Կիրովն ակտիվ մասնակցություն ե ունենում Վլադիկավկազի խորհրդի կազմա- կերպման մեջ: Ի հակադէպ մենչեիկներին ե եսերներին, վորոնք ամեն կերպ աշխատում են խորհուրդը հեղեղել ծառայողների ե բուրժուական ինտելիգենցիայի ներկայացուցիչներով, Սերգեյ Միրոնովիչը Վլադիկավկազի բանվորներից կազմակերպում ե ընտրություններ խորհրդի համար:

Կիրովը հակայական յեռանդով ե ենտուղիազմով կուսակցա- կան մասսայական աշխատանք ե ծավալում, կուսակցության շար- քերի մեջ ներդրակելով ամենից ակտիվ բանվորներին: Անձամբ կազմակերպում ե բանվորական պրոֆեսիոնալ միություններ, մասնավորապես Վլադիկավկազի բանվորների ամենահետամնաց խմբերի՝ կառուցող բանվորների ե տնային սպասավորների մեջ:

Այստեղ, Հյուսիսային Կովկասում, ավելի արագ, քան վոր- ևե մի այլ տեղում, կազմակերպվում են նաև հակահեղափոխու- թյան ուժերը. դումարվում ե կաղակային ներկայացուցիչների ժողովը, վորն իր կառավարությունն ե կազմում Թերեքի կա- ղակների կողմից ընտրված Պետական դումայի արխիսեհարյու- րյակային պատգամավոր Կարաուլովի գլխավորությամբ:

Լեռնցի ազնվականությունն ու լեռնցի բուրժուազիան մոռու- ժանական հողեօրականության հետ դաշնակցած ստեղծում են «Միացյալ լեռնցիների Կենտրոնական կոմիտե», վորը հետագա- յում փոխարկվեց «Լեռնային կառավարության», խոշոր կալվա- ծատեր իշխան Կալանովի ե նավթահանքերի տեր Չերմոյեվի գլխավորությամբ: Մենակ Թերեքի մարզում մի քանի կառավա- րություններ ստեղծվեցին: Բայց այս կառավարություններից յուրաքանչյուրը շատ քիչ ունի իշխանություն ունեւ, ե նրանց հրամաններն ընդունվում եյին ի դործադրություն միայն այն ժամանակ, յերբ նրանք համապատասխանում եյին տեղական դե- կավարող խմբերի շահերին ե ձգտումներին:

¹ Համի(բ)ի պատմություն: Համառոտ դատնթաց, Հայքադհրատ., Եջ 244:

Այդ ժամանակաշրջանում կաղեւտները, մենչեիկներն ու եսերները մինչև կողորդը խրված էյին ամեն տեսակ համազումարներին և խորհրդակցություններին մեջ, մինչև չձմելու աստիճան մասնակցելով ամեն տեսակի պլենումներին, նախադահություններին, կոմիտեներին և կառավարություններին նիստերին:

Կիրովի գլխավորությամբ Վլադիկավկազի բոլշևիկներին մի փոքրիկ խումբ էր բոլոր ուժերը տալիս եր մասսաներին մեջ տարվող աշխատանքին, պարզաբանելով բանվորներին, զինվորներին, լեռնայիններին, կաղակներին փետրվարյան հեղափոխության խակահան իմաստը, համբերությամբ և հաստատակամորեն նրանց բերելով այն հասկացողության, թե կարվածատերերի և կապիտալիստների շահագործումից ազատադուլելու համար անհրաժեշտ է անդադրում պայքար մղել, մերկացնելով համաձայնողական կուսակցություններին դավաճանական տակտիկան: Կիրովը տառացիորեն ամեն ուր ժողովներում, միտինգներում, յեկույթ եր ունենում, իսկ յերբեմն ել ուրվա մեջ միքանի անգամ: Պարզ և հասկանալի լեզուն, պատկերավոր ճառը, միշտ կծու սարկաղմով լի, մարտիկի հսկայական տեմպերամենտը և կրքոտ նվիրվածությունը հեղափոխության իդեաներին Սերգեյ Միրոնովիչին դարձնում էյին ամենից ամելի ժողովրդական, սիրելի հոեուր:

Հենց վոր իմանում էյին, թե այս կամ այն ժողովում պետք է յեկույթ ունենա Կիրովը, դռները ջարդվում էյին ժողովրդական խակական տրիբունի վողեշնչված ճառը լսել ցանկացողների ճնշումից:

Մենչեիկներն ու եսերները, ինչպես կրակից, վախենում էյին նրա սուր լեզվից, վորը մերկացնում եր նրանց դավաճանական դերը, վախենում նրա կծու, խարաղանոզ ծաղրանքներից, նրանք առաջ էյին քաշում իրենց լավագույն հոետորներին այն ժողովներին համար, վորտեղ հանդես եր դալիս Կիրովը, և այնուամենայնիվ չարունակ պարտություն էյին կրում:



ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՇԵՂԱ-
ՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵ Լ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1917 թվի ապրիլին Վ. Ի. Լենինը հանդես յեկավ իր հուշակալոր Ապրիլյան թեղիսներով, վորոնք կուսակցությանը և սրուլետարիատին տվին հեղափոխական պարզորոշ դիժ բուրժուական

հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխությանն անցնելու համար: Այդ թեղիսները Սերգեյ Միրոնովիչը իսկույն ևեթ դրեց Հյուսիսային Կովկասում տարած իր ամբողջ քաղաքական աշխատանքի հիմքում:

Մայիսին Վլադիկավկազի խորհրդում բոլշևիկներին ֆրակցիայի անունից Կիրովը հանդես յեկավ խիստ բողոքով այսպես կոչված «Քաղաքացիական կոմիտեյի»¹ այն վորոշման դեմ, վորով ժողովների և միտինգների ազատության սահմանափակում եր մտցվում, և կաղակային ներկայացուցիչների ժողովի (Войсковой круг) այն վորոշման դեմ, վորով «բանդիտներին» համար մահվան պատիժ եր մտցվում: Թե՛ մեկ և թե՛ մյուս վորոշման ոեակցիոն բնույթն ամենայտ եր:

Հակահեղափոխական կաղակությունը, դաշնակցած լեռնցի իշխանների և լեռնցի բուրժուազիայի հետ, ուղում եր փակել «խառնակիչներին»՝ բանվորների և չքավոր դյուղացիների բերանը, վորոնք փետրվարյան հեղափոխությունից վոչինչ չեյին ստացել և ալդպիսի դրության դեմ դժգոհություն էյին արտահայտում: «Բանդիտներին» համար վերականգնվող մահվան պատիժը հակահեղափոխականներին միջոց եր տալիս վճռական դատաստան տեսնելու նրանց հետ, ովքեր փորձում էյին բռնել նրանց դեմ բացահայտ պայքար մղելու ուղին:

Ձնայած վոր խորհրդում դերակշռում էյին մենչեիկներն ու եսերները, վորոնք ամենևին հակումն չուեյին լրջորեն հանդես գալու կաղակային վերնախավերի դեմ, Վլադիկավկազի խորհուրդը ձայների մեծամասնությամբ ընդունեց Կիրովի կողմից առաջարկված բոլշևիկների բանաձևը: Նրա մեջ «Քաղաքացիական կոմիտեյի» վորոշումը վորակվում եր վորպես հեղափոխության նվաճումները խեղդելու մի փորձ, և խորհուրդը, վճռաբար բողոքելով վորոշման դեմ, հայտարարում եր, թե այդ վորոշումն իր համար պարտադիր չի համարում: Վորոշվեց Կարաուլովի պալատի առաջ բողոքի միտինգ կաղմակերպել, և Կենտրոնին բողոքի հեռադիր ուղարկվեց Կարաուլովի դորժողությունների դեմ:

1) Ժամանակավոր կառավարության որով «Քաղաքացիական կոմիտե» քաղաքացիական կոմիտեի գլխավորությամբ բարձրագույն իշխանությունն եր տեղեւում՝ նահանգում և մարզում: Իրականում քաղաքացիական կոմիտեին ողակում եր իշխանությունից այն չափով, ինչ չափով նրան աջակցում էյին ալյալ մոմենտին բնակչության դեկավար խմբերը, ամենից առաջ տեղական խորհուրդները (վորոնք այն ժամանակ դեռ մենչեիկներն ու եսերներն ձեռքում էյին): — ՆԱԲ.:

Ժամանակավոր կառավարութիւնը ստիպւած եր պաշտօնից հեռացնել անչափ կապը կտրած իր ներկայացուցչին:

Հակահեղափոխական տարրերը բոլշեւիկների ազդեցութեան ուժեղացմանը պատասխանում են պրովոկացիաների խորամանկութեան հշուսած սխտեմով: Կազակային վերնախավերն ուժեղ կերպով լուրեր են տարածում, թե բոլշեւիկները լեռնցիներին կոչ են անում կողոպտել և գրավել կազակային ուսանիցաները: Միևնույն ժամանակ կարարգինական իշխանները, ոսական սպայութեանը, լեռնցի կուլակներն ու առևտրական բուրժուազիան մոլլաների հետ միասին, «լեռնցիների միութեան» Կենտրոնական կոմիտեյի հանձնարարութիւնը կատարելով, «խաբար» ելին տարածում, թե բոլշեւիկները «չեյթաններ են» (սատանա), վոր իբր թե նրանք վոչնչացնում են մզկիթները, խլում են կանանց ու յերեսաներին, զինում կազակներին լեռնցիների դեմ...

Հենց Վլադիկավկազում հուլիսի սկզբին տեղի յե ունենում հակահեղափոխական տարրերի կողմից նենդադրված ընդհարում 135-րդ դիվիզիայի և շուկա յեկած ինքուշների միջև: Զինվորները դադանաբար դատաստան են տեսնում սնդեն լեռնցիների գլխին:

Այս մասին լուրը վայրկենաբար հասնում է մերձակա լեռնային առւշներին. ինքուշները զինվում են, պատրաստվելով վրեժխնդիր լինել կրած վիրավորանքների համար: Ազգամիջյան զինված պայքարն արդեն պատրաստ է բորբոքվելու: Այդ բանում մեծազույն վտանգ տեսնելով հեղափոխութեան գործի համար, Կիրովը, ռիսկի յենթարկելով իր կյանքը, զնում է ինքուշական առւշները, վորպեսզի լեռնցիների առաջ մերկացնի հակահեղափոխական պրովոկացիայի արմատները և կանխի բռնկման պատրաստ ազգամիջյան պատերազմը:

Կիրովին հաջողվում է վոչ միայն կանգնեցնել ինքուշների զինված յեւույթը, այլև անմիջական կապեր հաստատելու ինքուշների լավադույն, հեղափոխականորեն տրամադրված ներկայացուցիչների հետ, վորոնք հետագայում բազմիցս հանդես են գալիս հեղափոխութեանը պաշտպանելու համար:

Կիրովը մեծ նշանակութիւն է տալիս լեռնցի չքավորութեան մեջ տարվելիք աշխատանքին. նա սերտ կապեր է հաստատում և ուժգին պաշտպանում է ոսական չքավորութեան հեղափոխական «Կերմեն» կուսակցութեանը: Այս կուսակցութեանը թեև պարզորոշ ծրագիր ել չունեի, բայց իրոք հանդիսանում եր ոսական չքավորութեան հեղափոխական միութեանը և վճռաբար

պայքարում եր նրա շահերի համար: Միքանի բոլշեւիկներ մեծ կասկածներ ունեյին, թե ինչպես վերաբերվեն այդ կուսակցութեանը, վորը հեռեւորական հեղափոխական ծրագրի չունի, չի ընդունում բոլշեւիկների ծրագրերը: Կիրովը սաստիկ ծաղրում եր այդպիսի տառակերներին, մատնանշելով, վոր «Կերմեն»-ը գլխավորում է չքավորութեանը, պայքարում է չքավորութեան շահերի համար և զնում է բոլշեւիկների հետ մեկտեղ բոլոր նրանց դեմ, ովքեր հանդիսանում են բոլշեւիկների թշնամիները: «Կերմեն» կուսակցութեանը խոշոր դրական դեր խաղաց թերեքում մղված հեղափոխական պայքարի մեջ, և ալելի ուշ, 1918 թ. մայիսին, կերմենիսաների նշանակելի մասը՝ նրա բոլոր լավագուշտ տարրերը մտան կոմունիստական կուսակցութեան մեջ:

1917 թվականի ոգոստոսին Կիրովը, բոլշեւիկյան կազմակերպութեան և Վլադիկավկազի բանվորների ու զինվորների դեպուտատների խորհրդի հանձնարարութեամբ, զնում է Պետրոգրադ: Պետրոգրադից վերադառնալիս Կիրովը ճանապարհին խմացալ, վոր գեներալ Կոռնիլովի սկսած խռովութեանն ախիւ մասնակցութեան է ցույց տալիս այսպես կոչված «վայրենի դիվիզիան» (վորի կազմի մեջ կային լեռնցի ազգային զորամասեր): Սերգեյ Միրոնովիչի նախաձեռնութեամբ լեռնցի ժողովուրդների Կենտրոնական կոմիտեյից հատուկ պատվիրակութեան է զնում «վայրենի դիվիզիայի» մօտ՝ Կոռնիլովի հակահեղափոխական դիտավորութեանները բացատրելու համար: Դա մեծ նշանակութիւն ունեցալ, վորովհետև Կոռնիլովը հենց «վայրենի դիվիզիայի» վրա մեծ հույս եր զնում: Պատվիրակութեան բացատրական աշխատանքից հետո «վայրենի դիվիզիան» հրաժարվեց խռովութեանն ախիւ կերպով մասնակցելուց:

Վլադիկավկազ վերադառնալուց հետո Կիրովը նորից ագիտացիոն ահազին աշխատանք է ծավալում, հանդես է գալիս Պորհրդի նիստում Մոսկվայի Պետական խորհրդակցութեան և կոռնիլովյան խռովութեան վերաբերյալ գեկուցմամբ, գեկուցում է տալիս ընթացիկ մոմենտի մասին Վլադիկավկազի կայազորի զինվորների և սպաների ժողովում: Նա յեւույթներ է ունենում ամեն որ, համառորեն պարզաբանելով բոլշեւիկների քաղաքականութեանը և այն խնդիրները, վոր նրանք զնում են իրենց առաջ հեղափոխական հետագա պայքարում:

Վերջիվերջո, Վլադիկավկազի բոլշեւիկները բացատրական համառ աշխատանքը տալիս է իր պտուղները. 1917 թվականի աշնանը—դեռ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափո-

խությունը—Վլադիկավկազի խորհրդի ղեկավարությունն անցնում է բուլչեիկներին ձեռքը:

Հոկտեմբերի 5-ին խորհուրդների Համառուսական II համագումարի պատվիրակ է ընտրվում Կիրովը Վլադիկավկազի և Կարաբոդինայի կողմից: Պետրոգրադում Կիրովը, չսահմանափակվելով խորհուրդների համագումարում տարած աշխատանքով, անմիջապես մասնակցում է հոկտեմբերյան մարտերին:

Վերադառնալով Վլադիկավկազ, Կիրովը նոյեմբերի 17 (4)-ին քաղաքային թատրոնում հավաքված Վլադիկավկազի խորհրդի լեփ-լեցուն նիստում հանդես է գալիս փայլուն, վոլեջնչված մի գեկուցումով հոկտեմբերյան դեպքերի մասին:

Հարկավոր է նշել, վոր խորհրդի բանաձևի մեջ, վորն ընդունվեց Կիրովի գեկուցման առթիվ, հարց չէր դրված իշխանությունը Վլադիկավկազի խորհրդի ձեռքն անցնելու մասին: Սերգեյ Միրոնովիչը գտնում էր, վոր Լենինի դրած խնդիրը՝ բանվոր դասակարգին և չքավորապետին պիտի հեղափոխությունը տանել—հասցնել մինչև պրոլետարական սոցիալիստական հեղափոխությունը—դեռ ընտել կատարված չէր Հյուսիսային Կովկասում և վոր Հյուսիսային Կովկասի պայմաններում պրոլետարիատի կողմից իշխանությունը զբաղեցրած վերաբերյալ հարցի ուղղակի դրոժն անխուսափելիորեն պետք է տաներ դեպի հեղափոխական ավանդարդի խզումը քաղաքի ու գյուղի աշխատավորների հիմնական մասաններից և դեպի հեղափոխական ուժերի արագ ջախջախումը՝ կադակների ու լեռնայինների հակահեղափոխության կազմակերպված ուժերի կողմից:

Հենց այս պատճառով էլ Կիրովի գեկուցման առթիվ ընդունված խորհրդի բանաձևի մեջ իշխանությունը Վլադիկավկազի խորհրդի ձեռքն անցնելու հարցը չէր դրված: Հետո մենք կտեսնենք, վոր Սերգեյ Միրոնովիչի դիրքը միանգամայն ճիշտ էր:

Մի ամբողջ շարք օրերի ընթացքում բանվորական ժողովներում, ահումբներում, կինոներում արած տասնյակ գեկուցումներով Կիրովը բանվորներին, ղեկավարներին, լեռնայիններին, բոլոր աշխատավորներին կրկին ու կրկին բացատրում է հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության նշանակությունն ու իմաստը, հեղափոխություն, վորը ցարիզմի կողմից Կովկասի ճնշված ժողովուրդների աղաքային, տնտեսական և կուլտուրական վերածնության համար բաց է ածում ընդարձակ հեռանկարներ:

Այդ ժամանակի մոտերքը տեղի յե ունենում Վլադիկավկազի

բուլչեիկյան կազմակերպության վերջնական և ֆորմալ անջատումը: Մինչև նոյեմբերը Վլադիկավկազի բուլչեիկները թեև համառ և հաստատակամ աշխատանք էյին տանում մենչեիկներին դավաճանական տակտիկան մերկացնելու ուղղությամբ, սակայն, հաշվի առնելով Վլադիկավկազի առանձնահատուկ պայմանները, վորը կադակային և լեռնային աղակալանություն հակահեղափոխության հենակետային բաղան և բունն էր, բուլչեիկյան ինքնուրույն կազմակերպություն չէյին ստեղծում: Մնալով ձևականորեն միասնական կազմակերպության շրջանակներում, Վլադիկավկազի բուլչեիկներն իրենց խնդիր էյին դնում միացյալ կազմակերպության մեջ դառնալով բոլոր բանվորների լիակատար նվաճումը: Նոյեմբերին այս խնդիրն արդեն կատարված էր: Կուսակցական քաղաքային ժողովում պառակտում տեղի ունեցավ Մահմանգիր ժողովին ցույց տրվելիք վերաբերմունքի հարցի առթիվ, և հավաքված 500 մարդուց մենչեիկների պլատֆորմային համաձայն գտնվեցին... 10 մարդ, և նրանցից ընդամենը մեկ կամ յերկուսն էյին բանվոր:

Այս ժողովից հետո մենչեիկյան կազմակերպությունը Վլադիկավկազում փաստորեն դադարեց գոյություն ունենալուց:

Բուլչեիկները նվաճեցին նաև Վլադիկավկազի կայազորը: Բայց կադակային և լեռնային հակահեղափոխությունը չէր նիրհում և հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո արդեն ֆորմալ կերպով միավորվեց, կազմելով այսպես կոչված «Թերեքո-դադստանյան կառավարությունը»: Դա՝ կադակային վերնախավների միմիություն էր լեռնային բուրժուազիայի և լեռնային ֆեոդալների հետ, պրոլետարական հեղափոխությանը հակահարված տալու համար: Պետք է ասել, վոր այդ կառավարությունը ես նշանակելի չափով վաղանցիկ էր, նրան քչերն էյին լրջորեն ընդունում: Կադակային ներկայացուցիչների ժողովը ճանաչում էյին կադակները, «լեռնայինների կառավարությունը» ճանաչում էյին լեռնայինները, բայց թե՛ մեկի և թե՛ մյուսի հրամանները, ինչպես մենք արդեն ասացինք, իրադրոժվում էյին այն չափով, ինչ չափով դրանք համապատասխանում էյին տվյալ մոմենտին և տվյալ տեղի ընակչության գեկավար խմբերի շահերին: Հակահեղափոխության ղեկավար հենարան էյին ճակատից հետ կոնչված «վայրենի դիվիզիայի» զորամասերը և կադակային զնդերը: Նրանց վրա հենվելով՝ հակահեղափոխականները վճռական հարձակում դրոժեցին Թերեքի հեղափոխական բանվորական կազմակերպությունների վրա, լայնորեն կիրառելով պրովոկացիա-

յի մեթոդները և բոլոր միջոցներով հրահրելով ազգամիջյան պայ-
քարը, ընդհուպ մինչև այս կամ այն ժողովրդի ամենաակախալոր
և հարգելի ներկայացուցիչների պրոֆուկացիոն սպանութունները:

Միաժամանակ հակահեղափոխականները, յերկուդ կրելով,
թե գորացրումից հետո տաճկական Փրոնտից վերադարձող զին-
վորներն աջակցություն ցույց կտան տեղական հեղափոխական
ուժերին, կատաղի ագիտացիա սկսեցին նրանց դեմ, լուրեր տա-
րածելով, թե զինված զինվորները—դրանք բոլորն ել բոլշևիկ-
ներ են, թե նրանք դալիս են կազակային ստանիցաներն ու լեռն-
ցիների առւնները կողոպտելու և վոչնչացնելու:

Կազակները, ինչպես յերբեմն նաև պրովոկացիայի յենթարկ-
ված չեչենները քանդում եյին յերկաթուղու դժերը, կանգնեց-
նում եյին զինվորական եղելոնները, զինաթափ եյին անում զին-
վորներին: Զինվորները, հանդիպելով անսպասելի դիմադրու-
թյան, հաճախ առաջ եյին շարժվում զենքի ուժով: Յերկաթու-
ղային ճանապարհի ուղղությամբ յերբեմն իսկական մարտեր
եյին տեղի ունենում: Այդ միանգամայն համապատասխանում եր
կազակների և լեռնցիների հակահեղափոխության պլաններին:

Սակայն, չբավարարվելով դրանով, հակահեղափոխականնե-
րը միևնույն ժամանակ պատերազմ են հրահրում լեռնցիների և
կազակների միջև: Նորից գործի յե դրվում վորձված մեթոդը:
1917 թվականի դեկտեմբերին Գրոզնայա ստանիցայի մոտ կազմա-
կերպվում և լեռնցիների ներկայացուցիչ շեյխ Դեհի Արսանովի
պրովոկացիոն սպանությունը, վորը կազակների հրամբելով յեկեկ
եր կազակների և լեռնցիների միջև գոյություն ունեցող վիճելի
հարցերը խաղաղ կերպով լուծելու:

Ի պատասխան դրան լեռնցիները հրկիզեցին կազակային Կա-
խանովկայա ստանիցան, իսկ կազակներն իրենց հերթին գրավե-
ցին և հրկիզեցին լեռնցիների մի շարք առւնները:

Հակահեղափոխականները հասան իրենց նպատակին. դասա-
կարգային պայքարի հարցերը և ամենից առաջ Թերեքի մարզի
ամենասուր հարցը—հողային հարցը—բորբոքված ազգամիջյան
կռիվի հետևանքով հանվեցին որակաբար:

Այսպիսի պայմաններում հակահեղափոխականները կարող
եյին իրենց ազատ զգալ նաև Վլադիկավկազում:

Սամարայի հետևակ դրուժինան¹, Վլադիկավկազի խորհրդի

զինված հենարանը, զինաթափ արվեց: Դեկտեմբերի 30-ին Վլա-
դիկավկազի խորհուրդը վորոշեց. «Ճանաչել խորհրդային իշխա-
նությունը և յենթարկել ժողովրդական Կոմիսարներին խորհրդի
կարգադրություններին»: Մյուս օրն ևեթ հակահեղափոխական
«լեռնցիների կառավարության» հրամանով լեռնցի—սպանների
բանդաները հարձակվեցին խորհրդի վրա, քարուքանդ արին այն
և ձերբակալեցին խորհրդի նախագահությանը և նրա ղեկավար
Բուաչիձեյին (այդ յերեկոյան Կիրովը պատահաբար խորհրդում
չեր): Քարուքանդ արին նաև բոլշևիկների կուսակցական կո-
միտեն: Փողոցներում հակահեղափոխականները պրակատներ
փակեցին, վորով կոչ եյին անում սպանել բոլշևիկներին:

Հունվարի 5-ին Վլադիկավկազի փողոցներում յերևում և
հակահեղափոխության նոր ջոկատը. քաղաք են մտնում կազակ-
ները, վորոնք սկսում են դնդակահարել լեռնցիներին, ամենից
առաջ ինդուշներին:

«Լեռնցիների կառավարությունը» խոշոր կալվածատեր իշխան
Կապլանովի գլխավորությամբ հանդիստ դիտում եր, թե ինչպե՞ս
կազակները դատաստան են տեսնում լեռնցի չքավորության
հետ:

Կազակային սպաները յեռանդաղին վորոնում են Կիրովին, և
նա ստիպված և լինում մեկնել Վլադիկավկազից: Հունվարի 7-ին
Կիրովը, մեծ ոխակով, հասնում և Պյատիդորսկ:

Վլադիկավկազում լիակատար անիշխանություն և. քաղաքի
կենտրոնում տիրակալում են սեհարյուրյակային սպայության
«ինքնապաշտպանության» ջոկատները, բայց նրանք ոխակ չեն
անում մտնել բանվորական Կուրսկայա, Մոլոկանսկայա արվար-
ձանները, վորտեղ կարգը պահպանում են ինքնապաշտպանու-
թյան բանվորական ջոկատները: Վլադիկավկազում բոլշևիկյան
կազմակերպությունը անցնում և ընդհատակ:

Մոտավորապես նույնպիսի դրություն եր Թերեքի մարզի
ուրիշ շատ վայրերում ևս:

Մոդդոկում, մի փոքրիկ քաղաքում, վորի բնակչությունը
գլխավորապես կազմված եր հարուստ կազակներից և վոչխարա-
բույծ—կալվածատերերից, այդ ժամանակ տիրակալում եր կա-
զակային «ռազմական խորհուրդը» (նա իրեն, դեմադոդայի
նպատակներով, անվանում եր նաև «ռազմա-հեղափոխական կո-
միտե») զնդապետ Ռիմարի և յեսաուլ Պյատիդորսկովի գլխավո-

1 Դրուժինանք կոչվում եյին այն զինվորական մասերը, վորոնք կազմ-
վեցին իմպերիալիստական պատերազմի ժամանակ ճակատում շարքային ծա-
ռայության համար անպետք ճանաչվածներից:—ԽՄԲ.

բուժյամբ: 1917 թվի նոյեմբերին այդ «ռազմական խորհուրդը» հրավիրեց Մոզդոկի բաժնի¹ կազմակերպի համագումարը:

Համագումարի խնդիրն եր համախմբել հակահեղափոխական ուժերը, իսկ ձևականորեն նա իրեն նպատակ էր դնում միջոցներ մշակել լեռնայինների հարձակումների դեմ: Համագումարում կազմակերպվեց ղեկավարություն՝ Սյու իրենց վոչ վոչ չի պաշտպանում, չկա ամուր իշխանություն: Սյու համագումարին ներկա գտնվող բոլորները, Գեորգիևսկի² խորհրդի ներկայացուցիչը, առաջարկ մտցրեց հրավիրել աշխատավոր ժողովրդի թերեքի մարզային համագումար, վորը և պետք է ստեղծի ամուր իշխանություն: Սյու առաջարկն ընդունվեց. վորոշվեց մարզային համագումարն էլ Մոզդոկում հրավիրել: Ամբողջ մարզում կոչեր ցրվեցին, հրավիրելով մասնակցել համագումարին: Համագումարը հավաքվեց 1918 թվականի փետրվարի 7 (հունվարի 25)-ին: Համագումարի կազմակերպմանն անմիջական մասնակցություն էլին ռեննում կազակային սպաները, բայց բոլորները նույնպես մոբիլիզացիայի չենթարկեցին իրենց ուժերը համագումարին մասնակցելու համար: Համագումարի ներկայացուցիչների Պյատիգորսկի խումբը ղեկավարում էր Կիրովը, վլադիկավկայի խումբը՝ բոլշևիկ Նոյ Բուաչիձեն:

Կազակային և լեռնայինների բուրժուա-կապիտալիստական հակահեղափոխությունն իրեն վորոշ նպատակ էր դնում. հասնել այն բանին, վոր համագումարը հաստատի ինդուլնների և չեչենների (ամենից ավելի կողոպտված և այդ պատճառով թերեքի կազակների ամենից սպիլի անհանգիստ անմիջական հարևաններն) դեմ կազակների կողմից արդեն սկսված պատերազմի նախապատրաստությունը: Սյու՝ հակահեղափոխության պրովոկացիոն մի նոր մանյովր էր, վորը նախապատրաստվում էր լայն պլանով:

Բոլշևիկները առաջ կանգնած էր հակայական կարեւորություն ունեցող սկզբունքային հարց—ինչ տակտիկա բռնել համագումարում մինչև ատամները զինված հակահեղափոխություն հանդես, վորը ճարպիկ մանյովրներով մի շարք դեպքերում իր հետևից էր տանում աշխատավոր կազակների և լեռնայինների լայն մասսաներին:

¹ Կազակային մարզերում բաժինները հանդիսանում էին մարզի վարչական յենթաբաժանումներ:—Խմբ.:

² Գեորգիևսկի—վորքերի քաղաք և Մոզդոկից վոչ շատ հեռու: Գրադնուց այնտեղ ունեցան մեքանի բոլշևիկներ:—Խմբ.:

Պրոլետարական հեղափոխությունը և Խորհրդային իշխանությունը անհապաղ ճանաչելու համար դյուղացիների, կազակների և լեռնայինների մասսաները, իհարկե, անպատրաստ էլին: Սյու պայմաններում համագումարում ուղղակի հարց դնել ժողովրդական Կոմիտեներին Խորհրդի իշխանությունն անհապաղ ճանաչելու մասին, նշանակում էր մեկուսացնել բոլշևիկներին, բոլշևիկներից հեռու վանել համագումարի պատվիրակների մեծամասնությունը, բնակչությանը դեմ հակահեղափոխական կազակային սպայություն և վոչ պակաս հակահեղափոխական լեռնային ֆեոդալների և բուրժուազիայի, Չերմոյեվ նախարարության անդամների, Կապլանով իշխանների և նրանց դորձակիցների զերկը, հրահրել պատերազմ կազակների և չեչենների միջև և հեշտացնել բոլշևիկների ջանքերը:

Բոլշևիկները Կիրովի ղեկավարությամբ վորոշեցին այլ տակտիկա կիրառել—կազակային և լեռնային բուրժուա-ֆեոդալական հարձակվող հակահեղափոխության դեմ բոլոր աշխատավորներին համախմբելու տակտիկա:

Բոլշևիկները մենչևիկ-ինտեռնացիոնալիստների և ձախ եսերների հետ մեկտեղ առաջ քաշեցին և իրադրեցին «սոցիալիստական բոլշևիզմ»—տակտիկական միավորում համագումարում այն բոլոր կուսակցությունների, վորոնց սպառնում էր լիտիացած հակահեղափոխությունը: Սյու բոլշևիզմից նաև աջ մենչևիկներն ու եսերները, վորոնք ծածուկ այն հույսն էլին դուրսբերում, վոր համագումարում կանցկացնեն իրենց սրտին սիրելի «ուչրեդիկան»:

«Սոցիալիստական բոլշևիզմ» հանդես յեկավ հեղափոխական բոլոր ուժերը միավորելու և տեղերում աշխատավորների խկական իշխանություն կազմակերպելու, հակահեղափոխության դեմ հակահարված կազմակերպելու և յերկառուկությունը, ազդամիջյան պատերազմն անհապաղ դադարեցնելու լողուններով:

«Սոցիալիստական բոլշևիզմ» ղեկավոր հեռուրը և փաստական ղեկավարը Կիրովն էր:

Յեվ ահա այն համագումարում, վորը կազմակերպել էր հակահեղափոխական սպայությունը, գերազանցորեն սեհարյուրյական բնակչություն ունեցող վորքերի քաղաքում, հետադիմականորեն տրամադրված կազակների ողակի մեջ, այն համագումարում, վորտեղ մեծ քանակությամբ ներկա յեն կազակային և ոսական սպաները (այդ նույն ժամանակ ինդուլներն ու չեչենները բոլորովին չեյին հրավիրված համագումարին), ահա

այդ համադրումարում Կիրովը, չնորհիվ ուշի-ուշով մշակած տակտիկայի, չնորհիվ իր բոցավառ պերճախոսության արտասովոր ուժի, մեծամասնությամբ և շահում (սկզբում, ճիշտ է, անհշան) — չեչենների և ինգուշների վրա արշավելուց հրաժարվելու ոգովին:

Կիրովը հանդես է դալիս կրկին և կրկին անգամ: Հեղափոխական յեռանդի հսկայական սրաշարով լցված և ամենաբարդ հարցերը պարզ և հասկանալի կերպով բացատրելու ընդունակ այդ համեստ մարդու յուրաքանչյուր նոր յելույթը լսում են ավելի ու ավելի սիրով, վողջունում են ավելի ու ավելի ջերմորեն:

Վերջիվերջո դործն այն տեղն է հասնում, վոր դնդապետ Ռիմարի նման բացահայտ հակահեղափոխականները ստիպված են հեռանալ համադրումարից, իսկ նրա արբանյակներն ու համախոհները ստիպված են համադրումարում լուելու, ավելին, ստիպված են, ատամները սեղմելով, դեմքերի վրա արտահայտել համակրանք Կիրովի ճառերին ու առաջարկություններին, վորպեսզի վերջնականապես չկորցնեն ազդեցությունը համադրումարի շարքային դեբեդատների վրա:

Չափազանց հետաքրքրական եր Կիրովի յելույթը Մոզդոկի համադրումարում՝ այսպես կոչված «132-ի հայտարարության» առթիվ: Համադրումարում բոլշևիկների «ձախ», անհաշտ խմբի ազդեցության ազդեցության տակ կազմվեց և համադրումարի նախագահությանը տրվեց 132 դեբեդատի ստորագրությամբ առաջարկ՝ անմիջապես քննարկել ժողովրդական Կոմիտարների խորհրդի իշխանության հանդեպ ունենալիք վերաբերմունքի հարցը¹: Պարզ է, վոր տվյալ իրադրության մեջ այս առաջարկն ընդունելը անխուսափելիորեն բոլշևիկների լիակատար ջախջախմանը կհասցներ:

Կիրովը «սոցիալիստական բլոկի» անունից հանդես է դալիս ընդդեմ այս առաջարկի, վորը սպառնում է պառակտում մտցնել համադրումարի մեծամասնության շարքերի մեջ, վորն այդպիսի անասելի դժվարություններով հաջողվեց ստեղծել: Համադրումարն ընդունեց Կիրովի առաջարկը և քննարկումից հանեց ժողովրդական Կոմիտարների խորհրդի հանդեպ ունենալիք վերա-

¹ Կազակների մի մասը պատրաստ եր ճանաչելու խորհրդային իշխանությունը, հույս ունենալով դեմք և սանկցիա ստանալու՝ լեռնայինները դեմ առդմական յելույթի համար:—Խմբ.:

բերմունքի հարցը: Սակայն Կիրովի բոլոր ճառերը պրոպագանդա ելին հոգուտ Հոկտեմբերյան հեղափոխությունն ու ժողովրդի խորհի իշխանությունը ճանաչելու:

Կիրովի առաջարկով, վորը հաշվի յեր առնում համադրումարի պատվիրակների անկայուն կազմը և համադրումարի արտաքին չափազանց ծանր շրջապատումը, Մոզդոկում ընտրվեց Թերեքի մարզի ժամանակավոր ժողովրդական խորհուրդ: Կիրովի կազմած կոչով համադրումարը դիմեց Թերեքի մարզի ժողովուրդներին: Համադրումարը հայտարարվեց «Թերեքի մարզի ժողովրդական համադրումարի առաջին սեսիա», և անմիջապես նշանակվեց համադրումարի յերկրորդ սեսիան — արդեն Պյատիգորսկում, վորտեղ խորհուրդը գտնվում եր բոլշևիկների ղեկավարության տակ և զորամասերը նույնպես բոլշևիկներն էլին ղեկավարում: Նոր համադրումարին հրավիրվեցին Թերեքի մարզի բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև ինգուշներն ու չեչենները:

Փետրվարի 29 (16) — ին Պյատիգորսկում բացվում է Թերեքի մարզային ժողովրդական համադրումարի յերկրորդ սեսիան:

Այս համադրումարում Կիրովի գլխավորած բոլշևիկները հանդես են դալիս արդեն վորպես համադրումարի ճնշող մեծամասնության ճանաչված ղեկավարներ:

Միևնույն ժամանակ աջ եսերներն ու մենշևիկները, զգալով, վոր իրենց վտարի տակի հողը կորցնում են, ձեռնադրեն դեմ մնալով «սոցիալիստական բլոկի» շարքերում, թաղուն համաձայնության են դալիս բացահայտ կամ թաղնված հակահեղափոխության ներկայացուցիչների հետ և նրանց հետ միասին վորձում են պրովոկացիոն մանյովրներով յեթե վիժեցնել համադրումարը, ապա դոնե հնարավորություն յեղածի չափ զցել նրա նշանակությունը:

Այսպես, նրանք վորձում են վախեցնել և համադրումարին չթողնել հսկայական դժվարությամբ և ոխով ժամանած՝ ինգուշների և չեչենների պատվիրակությանը:

Սակայն սոցիալ-դավաճանների պրովոկացիան այս անգամ չի հաջողվում: Ինգուշների դեբեդատները և չեչենների դեբեդատները, հեղափոխության արի մարտիկ Ասլանբեկ Շերիպովը, հայտնվում են համադրումարում, և համադրումարը դիմավորում է նրանց բուռն ուլացիայով. նույնիսկ կազակների դեբեդատները վողջունում են ժամանածներին:

Չնայած տեղերում շարունակվող արյունալի պրովոկացիաներին, համադրումարում հանդիսավորապես հաշտություն է հաս-

տառալուծ չեղանակներ, ինդուլճներ, ոսերի, կաղակներ ժիջե, Թերեքի մարզի բոլոր ժողովուրդների միջև:

Մարտի 17 (4)-ին համապետարը 220 ձայնի մեծամասնությամբ ընդունեց 22-ի, 40-ի ձեռնպահությամբ, բոլոր ծախահարությունները տակ ընդունում է բոլշևիկները առաջարկը՝ Ժողովրդական Կոմիտեները խորհրդի իշխանությունը ճանաչելու մասին: Համապետարը հանդիսավոր հեռադիր է ուղարկում Ժողովրդական Կոմիտեները խորհրդի նախագահ Լենինին: Կիրովի ղեկավարած՝ Թերեքի բոլշևիկները տակտիկան լիակատար հաջողությամբ է պահպանում:

Կիրովի գլխավորած բոլշևիկները առաջարկով, չնայած մեղքերին և եսերները առարկություններին, համապետարը վորոշում է ընդունում ամբողջ կազմով տեղափոխվել Թերեքի մարզի կենտրոն՝ Վլադիկավկազ և այնտեղ կազմակերպել Թերեքի մարզի կառավարություն:

Մարտի 21 (8)-ին, գերբնվա ժամը 12-ին, համապետարը նախագահների հնչյունների տակ, դիմավորվելով քաղաքի բանվորների և աշխատավորների մասսայի կողմից, հանդիսավորապես ժամանում է Վլադիկավկազ՝ ապրանքային վազոններից կազմված զնացքով, վորոնք դարձարված եյին դրոշակներով: Հակահեղափոխական սպաները, ճիշտ է, պրովոկացիոն հրացանաձուլություն սարքեցին, բայց համապետարին ուսել դիմադրություն ցույց տալ չհամարձակվեցին:

Վլադիկավկազում մարդային ժողովրդական համապետարն ընտրեց Թերեքի ժողովուրդ՝ բոլշևիկ Նոյ Բուաչիձեյի գլխավորությամբ:

Համապետարը Վլադիկավկազ ժամանելուն պես անմիջապես վերսկսվեցին հակահեղափոխականների կազմակերպած պրովոկացիոն սպանությունները: Հենց այն շենքի մոտ, վորտեղ նիստեր անում համապետարը, բերում են ինդուլճների կողմից սպանված ոսերի ալանդակված դիակներ: Զայրույթի ալիքն ընդգրկում է ոսական գյուղերը, հնչում է արյան վրեժի կոչը: Ոսական և ինդուլճական գյուղերը, վորոնք յերբեմն իրար շատ մոտ եյին գտնվում, պատվում են խրամատներով, սկսվում է իսկական սպաներազմ ոսերի (վորոնց պաշտպանում են այլ ժողովուրդների ներկայացուցիչները, ինչպես նաև կաղակները) և ինդուլճների միջև: Առանձնապես սուր դրություն է ստեղծվում ինդուլճական Բազորկինո գյուղի և ոսական Ուլինսկոյե գյուղի միջև, վորոնք ընկած եյին իրարից մեկ կիլոմետր հեռավորու-

թյան վրա: Կիրովը ժողովրդական մարդային համապետարի պատվիրակության գլուխ անցած մեկնում է տեղերը, ղեկավարների տարափի տակ ղենում է խրամատները, համոզում է անմիջապես դադարեցնել սպանության սպաներազմը, ապացուցում է, վոր այն չահավետ է միայն աշխատավորների թշնամիների համար: Նրա ղեկավար-ընկեր բալկարացի Կալարեկովը ընկնում է ղեկավարների տարափի տակ, բայց Կիրովը չի նահանջում և, իր համարձակությամբ ու վճռականությամբ լեռնայինների վրա կախարդիչ ազդեցություն թողնելով, վերջիվերջ գլուխ է բերում թշնամացող կողմերի հաշտեցումը:

Ամսուր կեսին ակներևությամբ պարզվում է, վոր սպանվում է մի թե կենաց, այլ մահու կռիվ Դենիկինի բանդանների դեմ, վորոնք հարձակվում են հյուսիսից: Դենիկինի հարձակման կապակցությամբ տեղական հակահեղափոխականները ևս կրկնապատկում են իրենց յեռանդը: Կաղակային շատ ստանիցաներ փոխարկվում են հակահեղափոխական գիւնված հեռակետային բաղանների: Թերեքի բոլշևիկներն իրենց ուժերով այս խնդիրներից գլուխ չեյին կարող հանել:

Կիրովի վրա դրվում է մի պատասխանատու հանձնարարություն՝ մեկնել Մոսկվա և այնտեղ ձեռք բերել մարդկանց, ղենքեր և միջոցների ոգնություն:

Կիրովը մեկնում է Մոսկվա և այնտեղ հավաքում է ղենք Հյուսիսային Կովկասի բոլշևիկների համար: Ոգոստոսի վերջին Սերգեյ Միրոնովիչը Ցարիցինով և Աստրախանով՝ Կալմիկիայի տափաստաններով (Ռոստովն արդեն գրավել եր Դենիկինը) հասավ Գեորգյևսկի՝ ղենքեր և ռադամթերքի տրանսպորտով: Բայց նորից Թերեք անցնել նրան այլևս չի հաջողվում: Միքանի շաբաթ մնալով Պյատիգորսկում¹, Կիրովը վերադառնում է նորից Մոսկվա և պատրաստում է նոր, ավելի խոշոր Եքսպեդիցիա Հյուսիսային Կովկասին ոգնելու համար, սակայն այս անգամ Սերգեյ Միրոնովիչին չի հաջողվում նույնիսկ մինչև Գեորգյևսկի հասնել: Դենիկինը տիրում է Հյուսիսային Կովկասին և XI բանակին հարկադրում է նահանջել անապատային տափաների մեջով, անմարդաբնակ տափաստաններով, ղեպի արևելք, ղեպի Աստրախան:

1 1918 թվի ոգոստոս-սեպտեմբերին Կիրովի ժամանումը Հյուսիսային Կովկաս փաստաթղթերով չի հաստատված, բայց հաստատվում է մի շարք ընկերների կողմից:—Խմբ.:

Կիրովը 1918 թվի դեկտեմբերին, Թերեք անցնելու անհաջող փորձից հետո, հարկադրված է վերադառնալու Աստրախան:

Կիրովի աշխատանքը Հյուսիսային Կովկասում, նրա անձնազուգորդ սպաբարը սղլամիջյան խողաղություն հաստատելու համար, նրա կողմից հաջողութամբ անցկացված լեռնցի և ուռս չքավորության միավորումը Սորհուրդներին դրուչի ներքո, հաշտություն, հաց և աղատություն լողունդներին ներքո, նշանակություն ունեցան Հյուսիսային Կովկասի սահմաններից շատ ավելի հեռու:

Մի յերկրում, վորտեղ տիրում էր վայրենություն և նահապետականություն, վորտեղ, թվում էր, թե անսահման է կազակային և լեռնցի սպառնալիքը, մոլլաների, լեռնցի իշխանների և կուլակների իշխանությունը, Կիրովը մի բուռ բոլչեիկներին հետ, վորոնց նա ղեկավարում էր, ստեղծեց Սորհուրդային իշխանության համար մղվող սպաբարի ամուր Փրոնտ:

Այն յերկրում, վորը ուռսական Վանդեա յեր, վորտեղ հակահեղափոխությունը հավաքում ու կուտակում էր իր ուժերը, Կիրովը կարողացավ հեղափոխականացնել սպիտակ-գվարդիական բանակներին թիկունքը, դրանով իսկ հետաձգելով և թուլացնելով հակահեղափոխականների կողմից պատրաստվող հարձակումը Սորհուրդներին յերխտասարդ հանրապետության վրա:

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՇԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ ԱՆՑԱԾ

Աստրախանում բացվում է Կիրովի հեղափոխական բոլչեիկյան աշխատանքի նոր հերոսական եջը: Աստրախանը դառնում էր ղենիկինյան և կուլչակյան Փրոնտների սահմանադժու: Ֆրոնտի այդ տեղամասում խնդիր էր դրվում հնարավորություն չտալ միանալու Կուլչակի ու Դենիկինի սպիտակ-բանդիտական զորքերին:

1919 թվի հունվարին Կիրովի՝ Աստրախան ժամանելու պահին այնտեղ բացառիկ ծանր դրություն ստեղծվեց:

Արդեն 1918 թվի դեկտեմբերից Աստրախանին սկսեցին մոտենալ XI բանակի մասերը, վորոնք բոլորովին հյուծվել էին Աստրախանի անմարդաբնակ տախտատաններից ամենաղժվար կերպով անցնելու հետևանքով: Ըստ բանի եյության այդ արդեն վոչ թե կազմակերպված զորամասեր էին, այլ քաղցած, ուժասպառ յեղած, համարյա թե համատարած կերպով տիֆով վարակված մարդկանց մասսաներ, վորոնք անհետաձգելի բժշկական

ուղնաթյան, յերկարատե հանդատի, իրենց Ֆիզիկական և բարոյական ուժերը վերականգնելու կարիք էին զգում: Իհարկե, տվյալ մոմենտին խոսք անդամ չեր կարող լինել այս ջոկատների մարտունակության մասին, ջոկատներ, վորոնք հերոսական չվերթ էին կատարել, վորում զոհվել էին հաղարավոր ջարդիկ և ամենատիկուն մարտիկները սպառել էին իրենց բոլոր ուժերը:

Բուն իսկ Աստրախանում այդ ժամանակ չկային կարմիր-բանակային ամուր զորամասեր, այնինչ հենց այդ մոմենտին այնտեղ չափազանց անհրաժեշտ էին վստահելի ղինված ուժեր:

Աստրախանում—մերձվորդյան առևտրական մեծ քաղաքում, վորտեղ գերակշռում էր մեչչանական—առևտրական բնակչությունը, վորն ուներ մեծ քանակութամբ յեկեղեցիներ և տերտերներ, Աստրախանի կազակային զորքի կենտրոնում—1918 թվի վերջերին հավաքվեցին շատ կալվածատերեր, նախկին ցարական սպաներ, տերտերներ, խոչոր և մանր բուրժուաներ, վորոնք վախել էին քաղաքացիական պատերազմով բռնված մարդերից և հույս ունեին Կարմիր Մոսկվայից վորքան կարելի յե ավելի հեռու գտնել իրենց համար ապաստարան և լայն ասպարեզ՝ հակահեղափոխական աշխատանքի համար:

Աստրախանում բառիս բուն իմաստով արդյունաբերական պրոլետարիատ համարյա թե չկար, բացառութամբ՝ նավերի նորոգման համեմատաբար վոչ մեծ միքանի զործարանների բանվորների: Զրային տրանսպորտի բանվորները, նավաստիները, բեռնակիրները, ձկնորսաբանների բանվորները չափազանց հետամնաց, անկազմակերպ էին. դրանք իրենց հակայական մեծամասնութամբ դյուղացիներ էին, վորոնք գեռ չէին կտրել անմիջական կապերը դյուղի հետ:

Այսպիսով, հակահեղափոխության ուժերն Աստրախանում շատ խիտ էին, իսկ այն հակակշռելու ամուր հեղափոխական պրոլետարական միջուկ չկար: Սորհուրդային որդանները դեռևս աշխատում էին շատ վատ: Աշխատանքի կարևոր շատ ճյուղեր գտնվում էին ձախ ետերների ձեռքում (Լուսավորության կոմիսարիատ, Հողագործության կոմիսարիատ. ձախ ետերները վորպես տեղակալներ աշխատում էին նաև այլ կոմիսարիատներում):

Պարենային ծանր դրության հոգի վրա՝ քաղաքային բնակչության լայն մասսաներում առանց հաջողության չեր վոր տարվում էր հակահեղափոխական սպիտակ-գվարդիական ագիտացիա, տարածվում պրոֆուկացիոն լուրեր: Հակահեղափոխական տարրե-

րի աշխատանքին հարկ յեղած հակահարված չեր տրվում, բան-վորները թույլ կազմակերպվածության և անբավականաչափ դի-տակցականության պատճառով, բանվորներ, վորոնք յերբեմն իրենք եյին յենթարկվում սպիտակ-գլարգրական պրովոկացիա-յին: Արհմիություններում և շատ ձեռնարկություններում դոր-ծում եյին մենչեիկները, տանելով քայքայիչ աշխատանք: Այս ամենին միացալ տիֆի դաժանագուշն համաճարակը, վորը քա-ղաք եյին բերել և շարունակ տարածում եյին XI բանակի մոտե-ցող նորանոր մասերը:

Իսկ դրոյց, արևելքից Աստրախանին սպառնում եր այն ժա-մանակ կոլչակյան զենեքալ Տոլստովը, վորը հալածել եր հա-կահեղափոխական կազակության ջոկատներ: Կասպից ծովից Վոլգայի գետաբերանին եյին մոտենում անդլիացի-խնտեվենտ-ները ռազմական նավերը, իսկ Աստրախանի շուրջը ձկնորսական ավաններում և դյուղացիական շենքերում հաճախ կարգադրիչներ եյին հանդիսանում սպիտակ-բանդիտների հետ կապ պահպանող կուլակները:

XI բանակի հրամանատարությունը հիմնավորվել եր Աստրա-խանում դեռևս մինչև Կիրովի գալը. Ռազմա-հեղափոխական խորհրդի գլուխ եր կանգնած Տրոցկու հայտնի արբանյակը—Շլյապնիկովը: Փոխանակ աշխատելու, Շլյապնիկովը խառնակ-չություն սարքեց և կազմալուծում եր դրությունն ամբողջելու և առողջացնելու աշխատանքը:

Աստրախան ժամանելուց հետո Կիրովը անհապաղ դրալեց փաստորեն ղեկավար դիրք ինչպես բանակի Ռազմա-հեղափոխա-կան կորսրգում, այնպես ել քաղաքի կյանքում: Նա արագո-րեն կողմնորոշվեց իրադրության մեջ և վորոշեց այն կարևորա-գույն խնդիրները, վորոնց վրա պետք ե կենտրոնացվեյին բոլոր ուժերը:

Առաջին խնդիր—մարդկային այն լավորակ նյութից, վոր ներկայացնում եյին իրենցից XI բանակի հեղափոխական մար-տիկները, վերստեղծել նոր, խիստ զուգլած, հաստատուն կեր-պով կազմակերպված մի բանակ, վորով նորից հարձակման անց-նել և Հյուսիսային Կովկասը մաքրել Դենիկինից:

Յերկրորդ խնդիր—Աստրախանում հեղափոխական կարգ ու կանոն հաստատել և ինչ ել վոր լինի Աստրախանը պահել վոր-պես ամենից ավելի հարմար կետ՝ բանակը վերակազմելու հա-մար և վորպես հեղափոխության մի հենակետ, վորը պահպա-նում ե Վոլգայի գետաբերանը սպիտակ-գլարգրականներից և

Կոլչակին ու Դենիկինին չի թողնում միակեղ ուժերը և միացյալ հակահեղափոխական ֆրոնտ ստեղծել:

Յերրորդ խնդիր—ապահովել կապի պահպանումը, ոգնու-թյունն ու ղեկավարությունը Բազմում, Անդրկովկասում, Հյու-սիսային Կովկասում՝ ընդհատակում աշխատող կոմունիստներին, ինչպես նաև Դենիկինի թիկունքում գտնվող Դադաստանի և Թերե-քի կարմիր պարտիզանական ջոկատներին:

Բացառիկ ծանր դրության պատճառով և ամենից առաջ հա-կահարված տալու համար ներքին հակահեղափոխությանը, վորը—այդ պարզ զգացվում եր—նորից գլուխ եր բարձրացնում¹, Աստրախանում՝ Կիրովի այնտեղ գալուց հետո անհապաղ կազմա-կերպվում ե Ժամանակավոր ռազմա-հեղափոխական կոմիտե, վորը հանդիսանում ե բարձրագույն իշխանություն Աստրախանի յերկրամասում: Հեղկոմի նախագահ ե ընտրվում Կիրովը: Հե-տեյալ որը Սերգեյ Միրոնովիչը բաց ե թողնում՝ «Աստրախանի յերկրամասի բոլոր բանվորներին և աշխատավորներին» դիմու-մը, վորով նա բոլոր դիտակից և ազնիվ քաղաքացիներից պա-հանջում ե արտակարգ կերպով լարել ուժերը տնտեսական քայ-քայման դեմ, տիֆի դեմ պայքարելու համար, Կարմիր բանակին ոգնելու համար:

Հանդամանքներն իսկապես արտակարգ եյին: Աստրախանում ալյուրի չափազանց սահմանափակ պաշարներ լինելու պատճառով հարկ յեղալ Հեղկոմի առաջին իսկ հրամանով (1919 թվի փետրը-վարի 27-ին) ամբողջ բնակչության համար հացաբաժնի կրճա-տում կատարել:

Հեղկոմի մի շարք հրամանները նվիրված են տիֆի դեմ պայ-քարելուն, նրանց խնդիրն ե մոբիլիզացիայի յենթարկել վոչ միայն բժիշկներին և բժշկական հիմնարկների աշխատողներին, այլև վճռականապես ամբողջ բնակչությանը՝ քաղաքին հասած սոսկալի աղետի դեմ պայքարելու համար:

Հեղկոմի մարտի 7-ի հրամանը կարգադրում ե բոլոր քա-ղաքացիական հիմնարկներում աշխատանքը սահմանել «ռազմա-կան դերապեսցիության աշխատանքի համեմատ» վոչ միայն մինչև ճաշը, այլև ճաշից հետո, ինկատի ունենալով աշխատանքը մինչև «ինտենսիվության մաքսիմալ աստիճանի» հասցնելու անհրաժեշ-տությունը:

¹ 1918 թվի սեպտեմբերին Աստրախանն արդեն տարեց հակահեղափոխական շատ խոշոր ապստամբություն, վորը կազմակերպել եր կազակային սպայու-թյունը:—Խմբ.:

Կիրովն այդ ժամանակաշրջանում մոչ միայն ղեկավարում է Հեղկոմը և կազմակերպում բոլոր և ամեն տեսակի ռազմական և քաղաքացիական հիմնարկների աշխատանքը, այլ նա շտապում է անմիջականորեն կապվել բանվորական մասսաների հետ, համարյա ամեն օր հանդես է գալիս կուսակցական, պրոֆմիութենական, բանվորական և կարմիր-բանակային ժողովներում: Սերգեյ Միրոնովիչը կարճ ժամանակվա ընթացքում կարողանում է ապահովել ամուր տրամադրություն, բարձրացնել հեղափոխական եներգիան մասսաների մեջ: Յեւ հատկապես այժմ այդ առանձնապես անհրաժեշտ էր. մարտի 10-ին սպիտակ-գվարդիականները խռովություն բարձրացրին, վորը նրանց կողմից շատ ճարպկորեն էր կազմակերպված, — նրանք ունեյին խնամքով մտածված և պարզորոշ կատարվող պլան, ունեյին նշանակալից ուժեր, շատ զենք և փորձված հրամանատարներ, սպաներ և գեներալներ:

Բայց Կիրովի ղեկավարությամբ տարված մեծ աշխատանքը յերևան յեկավ. խռովարարներին տրվեց խորտակիչ հակահարված և յերկու օրից հետո խռովությունը ճնշվեց:

Կապիտալ-կոլկասյան Փրոնտի Ռազմա-հեղափոխական խորհրդի և Հեղկոմի մարտի 11-ի հրամանում, վորը ստորագրել էր Կիրովը, կար կատեգորիկ պահանջ.

«Բոլոր բանդիտներին, մարդոքոքներին և խորհրդային իշխանության հրամաններին դիմադրողներին գնդակահարել տեղում»:

Վորովհետև Աստրախանում այդ ժամանակաշրջանում համարվել էյին խորհրդային իշխանությանը թշնամի բավականին մարդիկ, վորոնք փորձում էյին սարսուռ կազմակերպել սպիտակ-գվարդիականների հանդես գալու մոմենտին, հրամանում հայտարարված էր.

«...Ով չի ուղղում աշխատել, նա չպետք է ուտի:

Ամբողջ պարենը միայն խորհրդային Ռուսաստանի համար աշխատողներին»:

Կիրովն անձամբ էր ղեկավարում սպիտակ-բանդիտների դեմ մղվող պայքարը, և հենց նրա յեռանդի և հնարամտության շնորհիվ հաջողվեց արագորեն խորտակել սպիտակ-գվարդիականներին և լիկվիդացիայի յենթարկել ապստամբությունը՝ մեր կողմից համեմատաբար մոչ մեծ կորուստներով:

Մարտի 13-ին արդեն յրազրեցում հրապարակվում է Կիրովի ստորագրությամբ՝ Ռազմա-հեղափոխական խորհրդի, ռազմական

նախատորմի հրամանատարի և Հեղկոմի հրամանը խռովությունը լիկվիդացիայի յենթարկելու մասին.

«Կարմիր բանակը, Կարմիր նախատորմն ու Աստրախանի հեղափոխական բանվորները միահամուռ հակահարվածով ջարդուիչոր աքին հակահեղափոխական բանդաներին, և Բանվորա-դյուղացիական իշխանությունը ձեռք բերեց նոր ուժեր հանուն սրբազան իդեալի, հանուն սոցիալիզմի պայքարելու համար:

Սպիտակ բանդաները մի անգամ ևս պետք է համոզվեն այն բանում, վոր խորհրդային իշխանության դեմ դուրս գալով Աստրախանում, նրանք դրանով իսկ դնում են ընդդեմ ամբողջ խորհրդային Ռուսաստանի, վորն անպարտելի յէ, վորն իր դոյության ամեն մի օրով ապացուցում է այդ»:

Միջանի օրից հետո Սերգեյ Միրոնովիչը հրատարակում է Հեղկոմի հատուկ հրամանը՝ ընկած մարտիկների ընտանիքներին և բոլոր նրանց, ովքեր տուժել են սպիտակ-գվարդիական ապստամբությունից, ամենաշուտափուլով օգնություն ցույց տալու կարգի մասին:

Այն ժամանակաշրջանում տիրող պարենային ամենածանր դրությունը բնութագրելու համար մենք բերում ենք Ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ Անիսիմովի՝ 1919 թվի ապրիլի 3-ին տված հեռադիրը, վորը հասցեագրված էր Հեղկոմ՝ Կիրովին.

«Ձեռք առեք արտակարգ միջոցներ բնակչությանը պարեն մատակարարելու համար. հիվանդների մահացությունը վիթխարի յէ թերի անվերուց հսկայական չափերի յէ հասնում վերջակետ Մատակարարման բաժնի պաշարներից բնակչությանը ցորեն տալը մինիմալ չափերի յէ հասցված մոտ օրերս տաքը կղաղաբեցնենք վերջակետ Արդյունքները հեռագրել № 336

Ռազմա-հեղափոխական խորհրդի

անդամ Անիսիմով

Շտաբի պետ Նիխայեվ»:

Այս գվարդույն պայմաններում Սերգեյ Միրոնովիչը չի հուսալքվում և չդիտի տատանվել — նա ամեն տեղ հասնում է, բոլորին քաջալերում է, իր բոցավառ ճառերով և անձնական օրինակով վողեչնում է՝ հաղթահարելու բոլոր և ամեն տեսակի խոչընդոտներ:

Այդ ժամանակաշրջանի՝ Կիրովի արասանած ճառերի պահ-

ված գրանցումները չարքում առաջինն, ըստ ժամանակի, հանդիսանում է մարտի 26-ին արտասանած փայլուն, հեղափոխական հզոր խանդավառությամբ լեցուն այն ճառը, վորը նվիրված է Հոկտեմբերական սոցիալիստական խորհրդային հանրապետության հռչակմանը:

Մենք այստեղ կրեքենք նախկին հոկտեմբերական մի ռազմադերուհի ճիշդությունները:

«Յեւ և բոլոր ռազմադերձերները վատ ելինք հասկանում ուսերեն լեզուն: Բայց ճշմարտության այդ լեզուն մեզ հասկանալի չէր: Սերգեյ Միրոնովիչը կոչ էր անում մեզ, ուս պրոլետարների հետ միասին, պաշտպանել Հոկտեմբերի նվաճումները և մտնել կարմիր-գվարդիական ջոկատները մեջ: Այս ճառից հետո դժվարությամբ անցնելով բազմության միջից և մոտենալով սեղանին, մենք շտապում ելինք մեր անունները շուտափույթ մտցնել կարմիր-գվարդիական ջոկատի ցուցակի մեջ: Այդ օրը վեց-հարյուր հոկտեմբերի իրենց անունները մտցրին կարմիր գվարդիայի ցուցակում»:

Աստրախանի քաղխորհրդի մայիսի 31-ին կայացած պլենումում Սերգեյ Միրոնովիչը հաղորդում է Կասպից ծովում բռնված մի շոգենավի մասին, վորով դնում էլին սպիտակ-գվարդիական գործակալները:

Այդ չափազանց հետաքրքրական մի եպիզոդ է: Անդրկասպիայում Ալեքսանդրովսկի ամրոցի վրա (ամրոցը սպիտակների ձեռքին էր) հանկարծական հարձակում է կատարում մեր նավատորմը, Կիրովի ղեկավարությամբ, ըստօրում ամրոցն անակնկալ կերպով այնքան արագորեն և անսպասելիորեն գրավվեց, վոր ռազիստը նույնիսկ չկարողացավ հաղորդել հարձակման մասին: Ամբողջ օր ու գիշերներ արդեն մեր ձեռքում գտնվող ամրոցի ռազիստական աշխատում էր Գուբյեվի հետ, վորտեղ գտնվում էր գնեբրալ Տոլստովի շտաբը, և Պետրովսկի հետ, վորտեղից ստացվում էլին Դենիկինի հեռագրերը Կոլչակի համար:

Կիրովն անձամբ է զբաղվում Դենիկինի՝ Կոլչակին ուղարկած գեկույցների ծածկագրերի ընթերցումով և մի հեռագրով վորոշում է Կոլչակի մոտ ուղարկվող դենիկինյան պատգամները գնեբրալ Գրիչին-Ալմադովի Կասպից ծովով անցնելու մարշրուտը: Կիրովը կազմակերպում է այն նավի դրավումը, վորով ուղեւորվում է Գրիչին-Ալմադովը, և այնտեղ գտնում է Դենիկինի նամակներն ու փաստաթղթերը, վորոնք բաց են անում սպիտակ-գվարդիականների ստրատեգիական պլանը:

Քաղաքացիական պատերազմի Ֆրոնտներում տիրող դրության—ներառելով այնտեղ միջազգային դրության հարցերը և մեր ներքին քաղաքականության կարևորագույն հարցերը—մասին իր գեկուցումները Սերգեյ Միրոնովիչը, վորպես կանոն, անում էր յերկու շաբաթ մեկ անգամ Քաղխորհրդի, արհեստակցական միությունների խորհրդի, Փարբիկա-գործարանային ձեռնարկությունների ներկայացուցիչների միացյալ ժողովներում և մասնաշախտան այլ ժողովներում: Այսպիսով, Սերգեյ Միրոնովիչը կուսակցական և անկուսակցական ամբողջ ակտիվին իրադեկ էր դարձնում կարևորագույն դեպքերը, հարյուրավոր և հազարավոր մարդկանց վարակելով իր անսահման խանդավառությամբ, հեղափոխական վճռականությամբ և առողջ, վոչնչով չպարտվող լավատեսությամբ:

Սերգեյ Միրոնովիչը յերբեք չէր գունավորում իրականությունը, խստորեն կատարելով լենինյան պատգամը—բանվորներին ասել այն, ինչ կա:

Անկեղծորեն էր խոսում նա Ֆրոնտում և թիկունքում ստեղծվող մեծագույն դժվարությունների մասին: Վոչ մի չափով չէր նվազեցնում Դենիկինի հաջորդությունները, վորը 1919 թվի հունիսի 1-ին դրավել էր մեր պրոլետարական ամրոցը՝ Ֆարիցինը:

Սերգեյ Միրոնովիչը բացահայտ կերպով խոսում էր այն մեծագույն վտանգի մասին, վորն ստեղծվել էր Աստրախանի համար այն պատճառով, վոր դադարել էր հաղորդակցությունը Վոլգայի վրայով և սպիտակների համար հնարավոր էր դառնում գրավելու Աստրախան-Սարատով յերկաթգիծը, կենտրոնի հետ հաղորդակցություն պահպանելու վերջին միջոցը և պարեն հասցնելու միակ ուղին, պարեն, առանց վորի Աստրախանը տառաջիտներն չէր կարող մի օր անգամ դիմանալ:

Բայց, հաղորդելով ամենատաշնայալի, ամենամոռայլ լուրեր դենիկինյան Ֆրոնտի մասին, Սերգեյ Միրոնովիչը այստեղ ևեթ հիշեցնում էր Կոլչակի դեմ մղվող կռվում մեր ունեցած հաջողությունների մասին և իր ամբողջ ճառը կարողանում էր համակել այնպիսի հզոր հեղափոխական լավատեսությամբ, վոր նրա արած ամենածանր հաղորդումների հետևանքով ստեղծվում էր խանդավառության մի նոր հորդում:

«Խորհրդային իշխանությունը միևնույն է նորից կհաղթանակի և սպիտակ-բանդիտներին հնարավորություն չի տա ծվատելու պրոլետարական մարմինը»:

Սերգեյ Միրոնովիչի գեկուցումներից հետո խանդավառու-

թյունը համակում եր լսողներին, և հաճախ այստեղ ևեթ ժողովից հետո սկսվում եր Փրոնտ ուղարկվելիք կամավորների ցուցակադրումն Աստրախանի մարտկոցները պաշտպանելու համար:

Իսկ Փրոնտի մերձավորադույն տեղամասերի ուժերն ամրապնդելու կարիքը հսկայական եր: Բանն այն է, վոր XI բանակի մնացորդները Վիրտլի՝ մեծ դժվարություններ կազմած առաջին, խոշոր և վստահելի զորամասը,—33-րդ դելիլիան,—Հարավային Փրոնտի հրամանատարությունը հունիսին հարկադրված յեղավ վերցնել Աստրախանից՝ Փրոնտի մյուս տեղամասերն ուժեղացնելու համար, վորովհետև այդ ժամանակ դրուժյունն այնտեղ բացառիկ ծանր եր:

33-րդ դելիլիայի գնալուց հետո Աստրախանը փաստորեն մնում եր առանց վորեւե լուրջ պաշտպանության, իսկ հենց այդ ժամանակ Դենիկինը սկսեց ավելի ու ավելի խիստ կերպով նեղել արևմուտքից, շատ լավ հաշվի առնելով Աստրախանը դրավելու կարևորությունը: Աստրախանի հետագա պաշտպանությունն այդ մոմենտին շատերին միանգամայն անհուսալի դործ եր թվում:

Դավաճան Տրոցկին այն «մասնազետները» հետ միասին, վորոնցով նա իրեն շրջապատել եր, այդ ժամանակ արդեն ղեկավոր հրամանատարի շտաբից ցուցումներ եր տալիս Աստրախանը ելավ-կուսցիայի յենթարկելու անհրաժեշտության մասին—«Փրոնտը հավասարեցնելու» նպատակներով: Աստրախանի կոմունիստներից շատերն արդեն կապել եյին ճամպուռները: Սակայն Կիրովն ու Ռազմա-հեղափոխական խորհուրդը վճռական բողոք հայտնեցին Տրոցկու դավաճանական հրամանների դեմ և դիմեցին անմիջականորեն Վ. Ի. Լենինին: Լենինը պատասխանեց. «Աստրախանը պաշտպանել մինչև վերջը»:

Ուղտատուի 3-ին կուսկոնֆերենցիայում ամփոփելով իր գեկուլցման մեջ Սերգեյ Միրոնովիչ Կիրովը հայտարարում է.

«...հանդիս է Աստրախանի յերկրամասում կա քեկուլ

և մեկ կոմունիստ, վոլգա գետի գետաբերանը յեղել է՝

ե՛ և կլինի խորհրդային»:

Կիրովը, հենվելով Լենինի կոչի վրա, կարճ ժամկետում ջարդեց ելակուսցիոն տրամադրությունները, ե՛լ ավելի սերտորեն համխմբեց կոմունիստական կազմակերպությունը—բաղադրացիականը և ռազմականը, կարողացավ Աստրախանի կուսակցական և անկուսակցական բոլշևիկներին ներշնչել նոր յեռանդ և կատարեց Վլադիմիր Իլյիչի հրամանը:

Բացառիկ վտանգավոր մի շարք մոմենտներ կային, հատկա-

պես հուլիսի սկզբին, Դենիկինի կողմից Յարեյինը վերցնելուց անմիջապես հետո: Բայց Կիրովը, կամավորներով ամրացնելով այն ջոկատները, վորոնք պաշտպանում եյին Աստրախանի մատուցները, միևնույն ժամանակ ուժգին կերպով նոր կազմումներ եր կատարում: Դժվար բոլաներին Սերգեյ Միրոնովիչն ինքն եր յերևան դալիս Փրոնտի վտանգավոր տեղամասերում և իր արիության մեջ վճռականություններ մարտիկներին նոր պայքարի, նոր հաղթանակներ յեր վողեւորում:

Նշենք այստեղ մի դրվագ, վորը շատ բնորոշ է այդ առանձնապես ծանր ժամանակաշրջանի համար:

Ինտերվենտների սավառնակները համարյա ամեն ուր հայտնվում եյին Աստրախանի վրա, ումբեթ գցելով, մարդկանց սպանելով, հրդեհներ առաջացնելով և չափազանց ջղայնացնելով բնակչության լայն մասսաներին:

Հակառակորդի ավիացիային հարկ յեղած հակահարված տալ հնարավոր չեյր, վորովհետև մեր «ավիացիան» կազմված եր ընդամենը հնացած կոնստրուկցիայի և շատ մաշված յերեք կամ չորս գործող սավառնակից (նրանց պարզապես «դադաղներ» եյին անվանում). բացի այդ վառելիք ել համարյա չկար: Հարձակվող սպիտակ ողաչուներին անպատիժ թողնելը ճնշող տրամադրություն եր ստեղծում ամբողջ բնակչության մեջ, այդ թվում բանվորների և կարմիր-բանակայիների մեջ:

Կիրովն այս բանի հետ հաշտվել չի կարող. նա կանչում է ողաչուներ Շչոկինին և Կորոտկովին և նրանց համոզում է ձեռնամուխ լինել համարյա թե մի խենթ ձեռնարկման—կուլի մեջ մտնել հակառակորդի հետ, վորի ուժերը շատ անդամ և բոլոր ռեսակետներից գերազանցում եյին մեր ուժերին:

Խիզախ կարմիր ողաչուները կատարում են հանձնարարությունը, ողաչին կուլի են սկսում հակառակորդի հետ, խփում-ջարդում և հակառակորդի ինքնաթիռներից մեկին ստիպում են ցած իջնել (ողաչուին և դիտողին—անդլիական սպաններին—գերի յեն վերցնում), մնացած ինքնաթիռները փախուստի յեն դիմում:

Մեր պանծալի ողաչուների հաջողությունը սաստիկ բարձրացրեց տրամադրությունն Աստրախանում և, վոր դիտավորն է, ցույց ամբողջ, վոր նույնիսկ այն դեպքում, յերբ մենք հետամնաց տեխնիկա ունենք, ողաչին հակառակորդի հետ կուլելը միանգամայն հնարավոր է:

Հուլիսին սպիտակ-գվարդիականությունը բուն իսկ Աստրա-

խանութ նորից գլուխ և բարձրացնում. տերտերներն ու սպաները դավադրություն են սարքում և իրենց խնդիր են դնում—տիրել քաղաքին, կազմակերպել բոլոր ղեկավար կոմունիստներին և Աստրախանում գտնվող միակ վոչ-մեծ կարմիր-բանակային մասի թունավորումը: Դավադրությունը բացվեց և նրա մասնակիցները վոչնչացվեցին:

Աստրախանում իր գտնվելու ամբողջ ժամանակ Կիրովը, զարգացնելով պաշտպանությունն ամբապնդելու և ձեռքբաժնեքը լիկվիդացիայի յենթարկելու հակայական աշխատանքը, ձեռք բաժնեք, վորոնք յերևան ելին դալիս համարյա թե ամեն ոք՝ մարտական կամ քաղաքացիական աշխատանքի այս կամ այն տեղամասում, շարունակում եր ամենախնտեսիվ կերպով կապ պահպանել ընդհատակյա կուսակցական կազմակերպությունների և հակառակորդի թիկունքում գործող պարտիզանական ջոկատներին հետ: Կիրովն անձամբ եր ընդունում այն ընկերներին, վորոնք կյանքը վտանդի յենթարկելով, յեկել ելին Կասպից ծովով ձգվող նորսական նավակներով Բազվից և Պետրովսկից (այժմ Մախաչ-Կալա), հետ եր ուղարկում վստահելի ընկերներին՝ ղենքով, նամակներով, վոդով, զանազան լեզուների կոմունիստական գրականությամբ: Բազվում, Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում գործող ընկերներին համար այս աշխատանքի նշանակությունը հակայական եր, վորովհետեւ միմիայն Աստրախանի վրայով նրանք կարող ելին հաղորդակցել Մոսկվայի հետ, միմիայն Աստրախանի վրայով կարող ելին անհրաժեշտ ուղևորություն և ղեկավար ցուցումներ ստանալ:

Միևնույն ժամանակ Սերգեյ Միրոնովիչն ել Կովկասի ընկերներից ստանում եր չափազանց կարևոր ինֆորմացիա՝ Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում տիրող դրության մասին և ստացած տեղեկություններն անմիջապես հաղորդում եր կուսակցության Կենտկոմին, Վ. Ի. Լենինին:

Հարկավոր ե նշել, վոր Բազվի հետ ունեցած հարաբերությունները մեծ նշանակություն ունեյին թե՛ անմիջականորեն Կարմիր բանակի համար և թե՛ մասնավորապես Աստրախանի ռայոնի պաշտպանության համար:

Սերգեյ Միրոնովիչը, հենվելով Բազվի և Պետրովսկի հեղափոխական պրոլետարների և Կասպից ծովի հեղափոխական նավատիկների հերոսական աշխատանքի վրա, կարողացավ կազմակերպել Բազվից և Պետրովսկից մաքսանենդային ճանապարհով, ձկնորսական նավակներով, մեծ քանակությամբ բենզին և քա-

յուղ (смазочных масел) ստանալը, վորոնք այնքան անհրաժեշտ են մեր ռազմական ավտոմոբիլներին և առանձնապես ռազմական ավիացիայի համար:

Հունիսին՝ Բազվից, վորտեղ իշխում ելին բուրժուական նացիոնալիստներն ու անդլիացիները, խախտա բարկասով Կասպից ծովով Աստրախան ժամանեց Գ. Կ. Որջոնիկիձեն ընկերների հետ: Աստրախանում առաջին անգամ են հանդիպում Ս. Մ. Կիրովը և Գ. Կ. Որջոնիկիձեն: Նրանց միջև սերտ, մարտական բարեկամություն և հաստատվում, վորը տեկց մինչև նրանց սքանչելի կյանքի վերջը:

Անցի համար Կիրովի ստորագրությամբ մանդատ ստացած Սերգեյ Որջոնիկիձեն ուղևորվում ե Մոսկվա՝ Պաշտպանության Խորհրդին և Ժողովրդական Կոմիտեներին Խորհրդին՝ Հյուսիսային Կովկասում և Աստրախանի յերկրամասում տիրող քաղաքական և ռազմական դրության մասին զաղտնի ինֆորմացիա տալու համար:

Ոգոստոսի մոտերքը դրությունը Աստրախանի մոտ բարելավվում ե: Սպիտակներին կողմից զանազան մարտական տեղամասերի դեմ ուղղված բազմապատիկ գրոհները հաջողությամբ հետ են վանվում: Արդեն ակներև ե դառնում, վոր Կիրովի ղեկավարությամբ հաջողվեց Աստրախանը պահել: Այժմ կարելի յե դնել հարձակողական գործողությունների նախապատրաստման հարցը: Իր ճառերում Սերգեյ Միրոնովիչն ավելի ու ավելի յե հաճախ մատնանում դենիկինյան ֆրոնտում տեղի ունենալիք վճռական բեկման անմիջական մոտիկությունը:

Ոգոստոս—հոկտեմբերը—այդ XI բանակի՝ հակառակորդի վրա հարձակվելու, Յարիցինն ու Հյուսիսային Կովկասը սպիտակ-դավարիականներից ազատելու համար մղվելիք պայքարի նախապատրաստման ժամանակաշրջանն ե: Այդ աշխատանքը Սերգեյ Միրոնովիչը կատարում ե Վ. Վ. Կույբիշևի հետ, վորն Աստրախան եր յեկել 1919 թվի աշնանը:

Բայց, իհարկե, այս ժամանակաշրջանն ել վոչ մի կերպ չի կարող քիչ թե շատ հանդիսա աշխատանքի ժամանակաշրջան կոչվել: Այս մասին պարզ ասում ե 1919 թվի սեպտեմբերի 4-ին Աստրախանում տեղի ունեցող միտինդներից մեկում Կիրովի արտասանած կարճ, բայց բացառիկ ուժեղ, կրակոտ ճառը: Նա ասում ե, վոր ամբողջ Ռուսաստանը բաժանվել ե յերկու պայքարող բանակներին—բուրժուազիայի և պրոլետարիատի: Ով թագ-

ներվում եւ այդ պայքարից, — եւս դասալիք եւ և իր դասակարգի դա-
վաճանը:

«Բաւական եւ անկուսակցական լինել—վերջացնում եւ
հակայական վերելքով իր ճառը Սերգեյ Միրոնովիչը:—Կամ
մեզ մոտ յեկեք, կամ մեզ հակառակ բանակը գնացեք,
բայց չաղակրատութեամբ մի գրադիւք մեր միջև և մեզ մի
խանդարեք: Միջինն արդեն չկա և չի ել կարող լինել»:

Սերգեյ Միրոնովիչը կռիւ յեւթ ամբողջ պրոլետարիատի
անունից պահանջում եւ, վորպեսզի յուրաքանչյուր աղնիւ աշխա-
տավոր, բոլշեիկ, թե անկուսակցական, անմիջապէս կանգնի բոլ-
շեիկյան բանակի մարտիկներ շարքերը, բանակ, վորը պայքա-
րում եւ մեծ Լենինի և նրա մերձավորագույն ողնականի—ընկեր
Ստալինի ղեկավարութեամբ:

Նոյեմբերին XI բանակը հարձակողական գործողութիւննե-
րի անցավ: Այս ուղղութեամբ առաջին խնդիրն եր լիկվիդացիայի
յենթարկել գնեցրաւ Տոլստոյի հրամանատարութեամբ գործող
սպիտակ կազակութեան այն ջոկատը, վորը չէր դադարում Աստ-
րախանին արեւելքից սպառնալուց:

Գնեցրաւ Տոլստոյի դեմ ուղղված գործողութեան պլանը
կազմվեց Կիրովի անմիջական ղեկավարութեամբ, հարձակումը
սկսվեց նոյեմբերի 18-ին և տասն որվա ընթացքում ավարտվեց
լիակատար հաջողութեամբ: 1919 թվի դեկտեմբերի 1-ին Սերգեյ
Միրոնովիչը հաղորդում ե Մոսկւա կուսակցութեան Կենտկոմին,
Վ. Ի. Լենինին փայլուն կերպով կատարված այս գործողութեան
արդյունքների մասին: XI բանակը Կիրովի ղեկավարութեամբ
ակտիւ մասնակցութիւն է ունենում Դենիկինին ջախջախելու
ստալինյան պլանն իրականացնելու մեջ:

1920 թվի հունվարի 3-ին X և XI բանակների միաժամանա-
կա հարձակումով վերցվեց Յարեցինը:



ՆՈՐԻՑ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ: ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Յարեցինը գրավելուց հետո ընկեր Ստալինի ղեկավարու-
թեամբ սկսվում եւ մեր զորքերի վճռական հարձակումը Դենիկինի
դեմ: XI բանակը՝ անմիջականորեն Կիրովի և Սերգո Որջոնիկի-
ձեյի ցուցումներով մշակված պլանով շարժվում ե դեպի Հյուսիս-

սային Կովկաս՝ հենց այն անմարդաբնակ, սովյալ տափաստան-
ներով, վորոնցով բանակը նահանջում եր 1919 թվին Դենիկինի
հարվածների տակ: Այժմ, ուղիղ մեկ տարի հետո, նույն ճանա-
պարհներով, բայց հակառակ ուղղութեամբ կատարվում ե հենց
նույն XI բանակի խնամքով նախապատրաստված և լայլ մտած-
ված հերոսական հարձակումը, բանակի, վորը, ճիշտ ե, նշանա-
կելիորեն ամրապնդվել ե նոր ուժերով:

Փետրվարի 29-ին մեր զորքերը գրավում են Ստավրոպոլը:

Մարտի 17-ին Կիրովը Աստրախանից թռչում ե Ֆրոնտ՝ Սուբբ
Խաչ քաղաքը, հին, մաշված ինքնաթիռով, իսկական «թռչող դա-
դաղով»: Ինքնաթիռն ավարիա յե կրում վայրէջքի մոմենտին,
բայց, բարեբախտաբար, Կիրովը կենդանի և անվնաս ե մնում:

Հարձակումը Հյուսիսային Կովկասում այնուհետև շարունակ-
վում ե Կիրովի և Սերգո Որջոնիկիձեյի համատեղ ղեկավարու-
թեամբ և կարճ ժամանակվա ընթացքում ավարտվում ե փայլուն
հաջողութեամբ: Մարտի 30-ին Սերգեյ Միրոնովիչը Սերգո Որ-
ջոնիկիձեյի հետ միասին ժամանում ե Վլադիկավկազ, վորը հենց
նոր եյին գրավել Կարմիր Բանակի մասերը: Դենիկինի զորքերը
ջախջախված են: Հյուսիսային Կովկասը մաքրվել ե սպիտակ-
բանդիտներից:

1920 թվի ապրիլի լույս 28-ի գիշերը կարմիր դրահաղնացքը
մտնում ե Ադրբեջանի մայրաքաղաքը՝ մուսավաթիստների դեմ՝
ապստամբած Բաքվի բանվորներին ողնելու համար:

Մայիսի 5-ին, Բաքուն մուսավաթիստներից ազատագրվելուց
հետո մի շաբաթ անց, Բաքվի բոլշեիկների ժողովում Կիրովը
հայտարարում ե.

«Այն ամենը, ինչով հարուստ ե այժմ Ադրբեջանը, այն
ամենը, ինչ այժմ հրապուրանք ե բոլոր արեւմտայնվորպա-
կան յերկրների համար...—այդ ամենի վրա պետք ե դրվի
բանվորա-դուրապիական խորհրդային կոմունիստական
նշան»:

Դեռ 1920 թ. փետրվար—մարտին Կիրովի անունով Լենինից
ստացվում են մեկը մյուսի հետևից շտապ հեռագրեր, վորտեղ
առաջարկվում ե բոլոր ուժերը լարել և, նախադնացութիւնը
բացվելուն պէս, «...վրչ մի ժամ չկորցնելով առավելագույն նա-

1 Մուսավաթիստներ—թուրքական բուրժուական նացիոնալիստների
կուսակցութիւն: Ինտերվենցիայի ժամանակ նրանք կատարում եյին սկզբում
գերմանական, իսկ ապա անգլիական իմպերիալիզմի լակեյների դեր:—Խմբ.:

խաղաղութիւններով, ամբողջ նախքան փոխադրել Գուրյե-
վից...» Կիրովը տառացիորեն, իր Բաղու ժամանելու մյուս օրը
կազմակերպում է Աստրախան ուղարկելու առաջին տրանսպորտ-
ներն այն թանգարտեք նախքան, վրը շուտով չարժան մեջ դրեց
շողենավերն ու շողենակառքերը և ոգնեց կենդանացնելու Խորհրդա-
ներին Յերկրի ջրատված արդյունաբերութիւնը:

Հյուսիսային Կովկասը սպիտակ-գլխաւորականներից ազատա-
գրելուց հետո Կիրովը, վորպես Հյուսիսային Կովկասի հեղկոմի
անդամ, լծւում է՝ Հյուսիսային Կովկասում Խորհրդային իշխա-
նութիւն կազմակերպելու աշխատանքին:

Բնորոշ է, վոր Կիրովը Հյուսիսային Կովկասը Կարմիր բա-
նակի կողմից գրավւելուց անմիջապէս հետո գեկուցում է անում
հողային հարցի շուրջը Հյուսիսային Կովկասի հեղկոմի նիստում,
վորը տեղի ունեցավ ապրիլի 27-ին Սերգո Որջոնիկիձեյի նախա-
գահութիւնով, և առաջարկութիւն է մտցնում «մաքել թերե-
քսինյա (այսինքն Թերեք գետի ուղղութիւնով ընկած) հողերն
ինգուշներին և չեչեններին համար»:

1920 թվի մայիսի 29-ին Կիրովը մի նոր, չափազանց կարեւոր
հանձնարարութիւն է ստանում. նա նշանակւում է ՌԽՖՍՀ լիա-
զոր ներկայացուցիչ մենչեիկյան Վրաստանում. նրա վրա պար-
տականութիւն է դրւում իրացնել Նոյ Ժորդանիայի կառավա-
րութեան հետ հենց նոր կնքւած պայմանագիրը: Մոսկւայից մեկ-
նելուց առաջ Կիրովը Լենինի հետ ունեցած անձնական գրուցի
ժամանակ գիրեկտիվներ և ստանում աշխատանքի մասին: Հունի-
սի 20-ին Սերգեյ Միրոնովիչն արդեն Թրիխիումն է: Այնտեղ իր
ժամանելու օրը նա՝ լիազոր ներկայացուցչութեան չենքի մոտ
հավաքւած Թրիխիի բանվորներին առաջ բոցալառ ճառ է ար-
տասանում և Վրաստանի պրոլետարներին վողջուցն է հաղորդում
Ռուսաստանի պրոլետարներին կողմից:

Ձի կարելի ասել, վոր մենչեիկյան կառավարութիւնը ուրախ
էր խորհրդային դեսպանի ժամանումից:

Լենինին և Ստալինին Թրիխիից գրած նամակներում Կիրովը
պատմում է այն մասին, թե ինչպէս ընդունեց իրեն մենչեիկյան
կառավարութիւնը: Մենչեիկները դիմաւորել էին Խորհրդային
յերկրի լիազոր-ներկայացուցչին պատմաւոր պահակով, իսկ հե-
տո Կիրովին չըջապատել էին լրտեսներով, տառացիորեն նրան
թույլ չտալով մի քայլ անելու: Դենիկինին ջախջախելուց և
Ադրբեջանում Խորհրդային իշխանութիւն հռչակելուց հետո հար-

կադրւած լինելով հաշտութեան պայմանագիր ստորագրելու Խոր-
հրդային Ռուսաստանի հետ, մենչեիկներն ավելի ու ավելի ելին
շողաւելի կերպով զդում իրենց տիրապետութեան անկայունու-
թիւնը և դողում էին Խորհրդային Ռուսաստանի և Վրաստա-
նում կոմունիզմի դադաւարներին ամման առաջ:

1920 թվի մայիսի 7-ին ՌԽՖՍՀ հետ կնքւած պայմանագրի
ուժով վրացական կառավարութիւնը պարտաւոր էր հեռացնել
զորքերը ՌԽՖՍՀ-ին սահմանակից ռայոններից և լեռնանցքե-
րից, բայց Կարմիր բանակի հանդէպ տաժած վախից նա սիրտ չե-
ր անում այդ պարտաւորութիւնը կատարելու: Պայմանագրի հա-
մաձայն վրացական կառավարութիւնը պարտաւոր էր վող մի ուղ-
նութիւն ցույց չտալ, ինչ տեսակ էլ վոր լինի, Խորհրդային
Ռուսաստանի դեմ կովող սպիտակ բանակներին, բայց մենչեիկ-
ներն ուղտում էին ամեն մի դեպքից, վորպէսզի, ուղղակի
խախտելով պայմանագիրը, Դրիմ տեղափոխեյին դենիկինյան
սպաներին կամ ձեռնառու զնով Վրանդելին վերաւաճառեյին բե-
ղինն ու նախքան:

Նոյ Ժորդանիայի կառավարութիւնը հարկադրւած էր բն-
դունել Թրիխիում ՌԽՖՍՀ դեսպանին և Արտաքին առևտրի ներ-
կայացուցչութեանը, բայց, իր դոյութեան վախով բռնւած, նա,
իդեմս յուրաքանչյուր դիվանագիտական սուրհանդակի, պատրաստ
էր տեսնելու Վրաստանի տերիտորիան անցած՝ կոմունիստական
նոր ապստամբութեան առաջնորդ: Այդ պատճառով խորհրդային
լիազոր ներկայացուցչութիւնը Վրաստանում և բոլոր նրանք,
ովքեր վորեւէ չիման մեջ էլին մտնում «Մոսկւայի ազենաների»
հետ, չըջապատւած էին սիչչիկների և լրտեսների պարսպով,
վորոնք ձերբակալում էին յուրաքանչյուրին, ով համար-
ձակւում էր մտնել լիազոր ներկայացուցչութիւն, կամ առևտրա-
կան ներկայացուցչութիւն: Մենչեիկյան կառավարութիւնը
«սխալմամբ» բռնում էր դիվանագիտական սուրհանդակներին և
«սխալմամբ» էլ բաց էր անում նրանց բաղաժը, ներողութիւն
էր ինդրում և նորից շարունակում էր վախկոտութեամբ վնասել:
Մենչեիկները նույնիսկ ստոր փորձ արին վերցնելու ՌԽՖՍՀ առե-
տրական ներկայացուցչութեան չենքի վրայի խորհրդային դրոշակը:

Բայց մենչեիկներն ամենից ավելի վախենում և ամենից
ավելի դադալած կերպով ասում էին վրացի կոմունիստներին,
իսկ մայիսի 7-ի պայմանագրի համաձայն նրանք պարտաւորվե-
ցին դադարեցնել կոմունիստներին հետապնդելը, ձերբակալւած-

ներին ազատելով Բանտերից: Պարզ և, վոր պայմանագրի այս կետն էլ մենչեիկները չէին կատարում:

Մետեխի բերդում, մյուս քաղաքների բանտերում, ի խախտումն ՌԽՖՍՀ-ի հետ կնքած պայմանագրի, տանջվում էին տասնյակ, հարյուրավոր վրացի կոմունիստներ առանց դատի, առանց քննության: Անընդհատ նորանոր ձերբակալություններ էին կատարվում, փակվում էին կոմունիստական լրագրերը և այլն: Թբիլիսից Կիրովի դրած նամակները, նրա հաղորդումները Արտգործժողովոմատին, ինչպես նաև Վրաստանի մենչեիկյան կառավարությանն ուղղած հայտագրերը արտասովոր պայծառությամբ պատկերում են ոտարերկրյա բուրժուազիայի լակեյների խղճուկ անճարակութունը, չիտթվածությունն ու զայրույթը, վորոնք իրենց տերերի կողմից բախտի քմահաճույքին էին թողնվել: Վայրենի զայրույթով ու ատելությամբ էին պատժում մենչեիկյան սատրապներն իրենց յերկրի բանվորներին ու գյուղացիներին: Հարավային Ոսեթիայի ապստամբած գյուղացիությունն նկատմամբ արյունալի դատաստան տեսնելուց հետո մենչեիկյան կառավարության ագենտները հազարավոր ոտերի քչեցին գեպի խորհրդային սահմանը:

Կիրովը համառորեն և վճռականորեն բողոքում է խորհրդային յերկրի պայմանագրային իրավունքները խախտելու դեմ, նոյ ժողդանիայի կառավարությանը համարյա ամեն որ խիստ հայտագրեր ուղարկելով, վորոնցում նա մերկացնում է մենչեիկյան կարճժամանակյա տիրակալող խալիֆաների կեղծիքն ու յերեսպաշտութիւնը:

Սեպտեմբերի սկզբին Սերգեյ Միրոնովիչը մասնակցում է Բազմում տեղի ունեցող՝ Արևելքի ժողովուրդների I համագումարին: Իր՝ Թբիլիսի վերադառնալուց (մոտավորապես սեպտեմբերի 10-ին) կարճ ժամանակ անց նա ստանում է դիմանադիրական նոր նշանակում—վորպես Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ մասնակցել Լեհաստանի հետ ղինադադար, իսկ հետո նաև հաշտություն կնքելու բանակցություններին: Սերգեյ Միրոնովիչը ամենագործուն մասնակցությունն է ունենում լեհերի հետ վարած բանակցություններում:

Լեհաստանի հետ պայմանագիր կնքելուց հետո Կիրովը վերադառնում է Հյուսիսային Կովկաս: Այստեղ, վորպես Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամ, իր մերձավորագույն բարեկամ Սերգո Որջոնիկիձեյի հետ միասին, ընկեր Ստալինի ցուցումներով,

իսկ յերբեմն էլ նրա անմիջական մասնակցութամբ, Սերգեյ Միրոնովիչը, բազմազգ Հյուսիսային Կովկասի պայմաններում տանում է շատ բարդ աշխատանք՝ կուսակցության շարքերն ամրապնդելու, Խորհրդային իշխանություն ստեղծելու և ամրապնդելու ուղղությամբ: Այս ժամանակաշրջանում Սերգեյ Միրոնովիչը հաճախ հանդես է գալիս ճառերով և զեկուցումներով Վլադիկավկազում, Պյատիգորսկում և այլ տեղերում տեղի ունեցող մեծ ժողովներում, պարզաբանելով կուսակցության և կառավարության կարեւորագույն վորոշումները:

1920 թվի նոյեմբերին Հյուսիսային Կովկասի ժողովուրդների համար հասնում է պատմական որը: Հալածվում է Թերեքի մարզի ժողովուրդների համագումարը: Այս համագումարում ընկեր Ստալինը հայտարարում է Լեոնցիների Այստնոմ Խորհրդային հանրապետություն կազմելու մասին դեկլարացիան: Ընկեր Ստալինի ճառից և Կիրովի ու Սերգո Որջոնիկիձեյի յեւույթներից հետո համագումարն իր բանաձևում հանդիսավորապես վորջում է Լեոնցիների Այստնոմ հանրապետություն կազմելու առաջարկը վորպես «սոցիալիստական արդարության մեծ ակտ»:

1921 թվի փետրվարին Կիրովը կատարում է քաղաքական հեղաշարժի նշանակություն ունեցող մի խնդիր: Վրաստանի բանվորների և գյուղացիների կողմից մենչեիկյան բռնակալության դեմ բարձրացրած ապստամբության մոմենտին Սերգեյ Միրոնովիչը նախապատրաստում է ապստամբներին ոգնելու գործը և այդ նպատակով կազմակերպում է Հյուսիսային Ոսեթիայի Դիգորի պարտիզանների (Գերի լեոնանցքով) և Կարմիր բանակի մասերի (Մամիսոնի լեոնանցքով) անցումը Կովկասյան լեռնաշղթայով: Այս անցումները բացառիկ հերոսության և անձնագործության գործ է յին: Ձմեռ ժամանակ, ձյունով լցված լեռնանցքները բացարձակ անմատչելի էին համարվում նույնիսկ առանձին համարձակ մարդկանց համար, չխոսելով արդեն զինվորական ամբողջական ջոկատների մասին: Բոցավառ հեղափոխական Կիրովը կարողացավ մարդկանց չտեսնված խանդավառություն վորգեղնել և վորդեորել նրանց կատարելու մի այնպիսի խնդիր, վորի իրականացումը միանգամայն աներևակայելի յեր թվում:

Հյուսիսային Կովկասում Կիրովն անդուլ աշխատում է կուսակցական շարքերը համախմբելու համար, կուսակցության անդամների բոլշևիկյան դաստիարակության վրա. նա դաժան պայքար է մղում տրոցկիստների դեմ, վորոնք հանդես էին գալիս ընդդեմ Լենինի, ընդդեմ կուսակցության և վորոնք արդեն այն

ներին ազատելով Բանտերից: Պարզ է, վոր պայմանագրի այս կետն էլ մենչևիկները չէին կատարում:

Մեծեխի բերդում, մյուս քաղաքների բանտերում, ի խափտումն ՌԽՖՍՀ-ի հետ կնքած պայմանագրի, տանջվում էին տասնյակ, հարյուրավոր վրացի կոմունիստներ առանց դատի, առանց քննության: Անընդհատ նորանոր ձերբակալություններ էին կատարվում, փակվում էին կոմունիստական լրագրերը և այլն: Թբիլիսից Կիրովի դրած նամակները, նրա հաղորդումները Արտգործժողովոմատին, ինչպես նաև Վրաստանի մենչևիկյան կառավարությանն ուղղած հայտագրերը արտասովոր պայծառությամբ պատկերում են ոտարեկրյա բուրժուազիայի լավեյների խղճուկ անճարակությունը, շիտվածությունն ու դայրույթը, վորոնք իրենց տերերի կողմից բախտի քմահաճույքին էին թողնվել: Վայրենի դայրույթով ու ատելությամբ էին պատժում մենչևիկյան սատրապներն իրենց յերկրի բանվորներին ու գյուղացիներին: Հարավային Ոսեթիայի ապստամբած գյուղացիության նկատմամբ արյունալի դատաստան տեսնելուց հետո մենչևիկյան կառավարության ազենտները հազարավոր ոտերի քչեցին դեպի խորհրդային սահմանը:

Կիրովը համառորեն և վճռականորեն բողոքում է խորհրդային յերկրի պայմանագրային իրավունքները խախտելու դեմ, Նոյ Ժորդանիայի կառավարությանը համարյա ամեն օր խիստ հայտագրեր ուղարկելով, վորոնցում նա մերկացնում է մենչևիկյան կարճժամանակյա տիրակալող խալիֆաների կեղծիքն ու յերեսպաշտությունը:

Սեպտեմբերի սկզբին Սերգեյ Միրոնովիչը մասնակցում է Բազմում տեղի ունեցող՝ Արևելքի ժողովուրդների I համագումարին: Իր՝ Թբիլիսի վերադառնալուց (մոտավորապես սեպտեմբերի 10-ին) կարճ ժամանակ անց նա ստանում է դիմանադիտական նոր նշանակում—վորպես Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ մասնակցել Լեհաստանի հետ զինադադար, իսկ հետո նաև հաշտություն կնքելու բանակցություններին: Սերգեյ Միրոնովիչը ամենագործուն մասնակցությունն է ունենում լեհերի հետ վարած բանակցություններում:

Լեհաստանի հետ պայմանագիր կնքելուց հետո Կիրովը վերադառնում է Հյուսիսային Կովկաս: Այստեղ, վորպես Կենտրոնի Կովկասյան բյուրոյի անդամ, իր մերձավորագույն բարեկամ Սերգո Որշոնիկիձեյի հետ միասին, ընկեր Ստալինի ցուցումներով,

իսկ յերբեմն էլ նրա անմիջական մասնակցությամբ, Սերգեյ Միրոնովիչը, բազմազգ Հյուսիսային Կովկասի պայմաններում տանում է շատ բարդ աշխատանք՝ կուսակցության շարքերն ամրապնդելու, Խորհրդային իշխանություն ստեղծելու և ամրապնդելու ուղղությամբ: Այս ժամանակաշրջանում Սերգեյ Միրոնովիչը հաճախ հանդես է գալիս ճառերով և զեկուցումներով Վլադիկավկազում, Պյատիգորսկում և այլ տեղերում տեղի ունեցող մեծ ժողովներում, պարզաբանելով կուսակցության և կառավարության կարևորագույն վորոշումները:

1920 թվի նոյեմբերին Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին համար հասնում է պատմական օրը: Հավաքվում է Թեբեքի մարզի ժողովուրդների համագումարը: Այս համագումարում ընկեր Ստալինը հայտարարում է Լեռնցիների Սվտոնոմ Խորհրդային հանրապետություն կազմելու մասին դեկլարացիան: Ընկեր Ստալինի ճառից և Կիրովի ու Սերգո Որշոնիկիձեյի յեղույթներից հետո համագումարն իր բանաձևում հանդիսավորապես վողջում է Լեռնցիների Սվտոնոմ հանրապետություն կազմելու առաջարկը վորպես «սոցիալիստական արդարության մեծ ախտ»:

1921 թվի փետրվարին Կիրովը կատարում է քաղաքական հսկայական նշանակություն ունեցող մի խնդիր: Վրաստանի բանվորների և գյուղացիների կողմից մենչևիկյան բռնակալության դեմ բարձրացրած ապստամբության մոմենտին Սերգեյ Միրոնովիչը նախապատրաստում է ապստամբներին ոգնելու գործը և այդ նպատակով կազմակերպում է Հյուսիսային Ոսեթիայի Դիգորի պարտիզանների (Դերի լեռնանցքով) և Կարմիր բանակի մասերի (Մամիսոնի լեռնանցքով) անցումը Կովկասյան լեռնաշղթայով: Այս անցումները բացառիկ հերոսության և անձնագործության գործ էլին: Չմեռ ժամանակ, ճյուղով լցված լեռնանցքները բացարձակ անմատչելի էին համարվում նույնիսկ առանձին համարձակ մարդկանց համար, չխոսելով արդեն զինվորական ամբողջական ջոկատների մասին: Բոցավառ հեղափոխական Կիրովը կարողացավ մարդկանց չտեսնված խանդավառությամբ վորդենչել և վորդեռել նրանց կատարելու մի աշխարհի խնդիր, վորի իրականացումը միանգամայն աներևակայելի յեր թվում:

Հյուսիսային Կովկասում Կիրովն անդուլ աշխատում է կուսակցական շարքերը համախմբելու համար, կուսակցության անդամների բոլլևիկյան դաստիարակության վրա. նա դաժան պայքար է մղում տրոցկիստների դեմ, վորոնք հանդես էին գալիս ընդդեմ Լենինի, ընդդեմ կուսակցության և վորոնք արդեն այն

Ժամանակ փորձում եյին վիժեցնել մեր յերկրի բանվոր դասա-
կարգին՝ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար
մղած մեծ պայքարը:

1921 թվի հունվար—փետրվարին Կիրովը հանդես ե գալիս մի
շարք զեկուցումներով (վորոնք դժբախտաբար չեն պահպանվել)
պրոֆմիություններին դերի և խնդիրների մասին: Նա հետևողա-
կանորեն և հաստատուն կերպով պաշտպանում է լենինյան դիրքը
պրոֆմիութենական դիսկուսիայի մեջ: Տրոցկիստները ջախջախ-
ված են. 1921 թվի փետրվարի 16-ին կայացած Թերեքի մարզա-
յին կուսկոնֆերենցիայում Լենինի պատժորմի ոգտին տրվեց
172 ձայն, տրոցկիստական պատժորմի ոգտին—3 ձայն: Կիրովը
միաձայն ընտրվում է կուսակցության X համագումարի դերե-
գատ: Համագումարում նա ընտրվում է Կենտկոմի անդամության
թեկնածու:

X համագումարից վերադառնալուց հետո Կիրովը վերադա-
նում Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամ շարունակում է յեռան-
դուն աշխատել կուսակցական շարքերը համախմբելու և ամրաց-
նելու ուղղությամբ, Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում
Խորհրդային իշխանության որդանների, կոմյերիտմիության,
պրոֆմիությունների ճիշտ աշխատանք ստեղծելու և կանոնադ-
րելու ուղղությամբ: Կուսակցության X համագումարի մասին,
Խորհրդային Ֆեդերացիայի ներքին և արտաքին դրության մասին
արած զեկուցումներով նա հանդես ե գալիս Վլադիկավկազում,
Պյատիգորսկում, Թբիլիսիում, Բաքում:

Ընկեր Ստալինի ցուցումներով, Կիրովի անմիջական դեկա-
վարությամբ ստեղծվում է Լեոնցիների հանրապետությունը, վո-
րը միավորում է Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին:

Ապրիլի 16—22-ին Կիրովը ղեկավարում է Լեոնցիների հան-
րապետության Սահմանադիր համագումարը Վլադիկավկազում:
Այստեղ նա արտասանում է ձևով փայլուն և բովանդակությամբ
խորը մի շարք ճառեր: Առանձնապես հետաքրքրական է նրա ճա-
ռը շարիաթի մասին¹:

1) Շարիաթը—մուսուլման ժողովուրդների կրոնական իրավունք, վորը
սահմանում է մուսուլմանների կրոնական, ամուսնական-ընտանեկան, դույ-
քային, իրավական և բարոյական-կենցաղային հարաբերությունները,—խորն
արմատներ ունեւ Չեչնիայի, Ինդուշեթիայի բնակչության լայն մասսանե-
րում և մուսուլման-ոսերի մեջ:

Այն Ժամանակաշրջանում Խորհրդային իշխանության միակ ճիշտ քաղաքա-
կանությունն եր՝ Թույլ տալով շարիաթը (չնայած ամբողջովին նրա չափա-

Այդ ճառում Սերգեյ Միրոնովիչն ասում եր.

«Դուք գիտեք, վոր մենք շարիաթը Թույլ ենք տալիս
աշխատավորների իշխանությունն ամրապնդելու համար:
Թե դուք ինչպես կանեք այդ—այդ հարցը վոչ մի կողմից
մեզ չի հետաքրքրում: Այդ ձեր գործն է: Թերեք կանցնի
Ժամանակը—և մարդկությունն ամեն բանում միատեսակ
կլինի: Իսկական կոմունիստական դրախտ կլինի: Բայց
այնուամենայնիվ այդ չի նշանակում, թե յերկրագնդի վրա
ամենքը բոլոր տեսակետներից մի սանրի կտավ կլինեն:
Հնարավոր է, վոր մարդկությունը շատ և շատ ուշ կսկսի
խոսել բոլորի համար մի ընդհանուր լեզվով»:

Յեւ այնուհետև.

«Այստեղ հաստատվում է չքավորության բանվորա-
գյուղացիական իշխանությունը: Այստեղ հարկավոր է
ուղղակի և հաստատապես ասել և վոչ թե մեղքը գցել ինչ-
վոր դիպումատիայի վրա, յեթե մեկը դժգոհ է, վոր Խոր-
հրդային իշխանությունը պաշտպանում է բանվորներին
ու գյուղացիներին և վճականորեն պահանջում է ստեղծել
այնպիսի որդաններ, վորոնք ամրապնդեն այն ինչպես
կենտրոնում, այնպես ել ծայրամասում»:

Մայիսի առաջին օրերին Կիրովը մասնակցում է կուսակցու-
թյան Կենտկոմի Կովկասյան բյուրոյի աշխատանքներին Վլադի-
կավկազում և ընտրվում է Կովկասյան բյուրոյի նախագահու-
թյան կազմում:

Մայիսի վերջին Կիրովը Թբիլիսիումն է:

1921 թվի ամառը (հունիսի 12—17) Կիրովին վիճակվեց մի
անգամ ևս պայքարի դուրս գալ Անդրկովկասի մենչևիկներին դեմ:
Բայց այժմ արդեն մենչևիկները «եւ մինիստրություն չեն
անում»: Նրանք թաղնվել են Վրաստանի միջանի պրոֆմիու-
թյունների մեջ և փորձում են այնտեղ սարսափ կազմակերպել
Խորհրդային իշխանության դեմ: Վրաստանի պրոֆմիություննե-
րի I կոնֆերենցիայի տրիբունայից Կիրովը մերկացնում է բանվոր
դասակարգի մենչևիկյան «բարեբաւրներ» դավաճանական դերն
ու ստոր կեղծավորությունը:

Հուլիսի սկզբին Սերգեյ Միրոնովիչը մասնակցում է
դանց ուսուցիտն (լենլուս), վարել լեոնցի հետամնաց մասսաների աստիճանա-
կան վերադաստիարակության դիժը:

Ներկայումս շարիաթը վորպես կրոնական-իրավական ուղիղիքը ԽՍՀՄ-ում
վոչ մի տեղ չի կիրառվում:—Խմբ.:

ՌԻԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի աշխատանքին թրիլիսիում: Պլենումի աշխատանքներում մասնակցութիւն ե ունենում ընկեր Ստալինը:

Կիրովը մասնակցում է Վրաստանի, Հայաստանի և Ադրբեյջանի միջև այդ ժամանակ դոյութիւն ունեցող սրված սահմանային վեճերը լուծելու գործին:



ԱԴՐԲԵՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ

1921 թվի հուլիսին Կիրովը Բազմումն է: Նա ընտրւում է Ադրբեյջանի կոմունիստական կուսակցութեան Կենտկոմի քարտուղար: Այն ժամանակ յերկիրն սկսել էր անցնել խաղաղ տնտեսական շինարարութեան ուղիներին: Անհետաձգելի դարձավ իմպերիալիստական պատերազմի և ինտերվենցիայի քայքայած ժողովրդական տնտեսութեան վերականգնման խնդիրը: Հարկավոր էր ստիպել, վոր ամբողջ կարողութեամբ աշխատի արդյունաբերութիւնը, տրանսպորտն ու դոլդատնտեսութիւնը:

Կուսակցութիւնը Կիրովի վրա դժվար խնդիրներ դրեց: Առաջին—վերջ դեռ Բազմի կազմակերպութեան շարքերում յեղած սուր յերկպառակութիւններին, վորոնք առաջացել էին ազգային քաղաքականութեան հարցերի շուրջ յեղած տարաձայնութիւնների պատճառով, ապահովել Ադրբեյջանում ազգային հարցում Լենինի—Ստալինի պարզորոշ գծի կիրառումը, վերականգնել Անդրկովկասում յեղած խռոքագույն պրոլետարական կուսակցական կազմակերպութեան շարքերի միասնութիւնը:

Յերկրորդ—վերածնել նալթային արդյունաբերութիւնը, վերականգնել Բազմի նալթահանքերը, վորոնք ծայրահեղ աստիճանի քայքայման էին հասցւել ինտերվենտներ և մուսաւաթականների կողոպտիչ տիրակալութեան հետեանքով:

Կիրովը մեծագույն զգուշութեամբ, բայց համառորեն և հետեղականորեն ուղղում է թյուրք կոմունիստների սխալները: Միևնույն ժամանակ նա քաշում էր չափից դուրս յեռանդուն յերիտասարդ ընկերների փեշը, վորոնք նացիոնալ-ուկրոնիստների դեմ պայքարելիս մոռացել էին բազմազգ Ադրբեյջանի առանձնահատուկ պայմանները:

Սերգո Որջոնիկիձեյի հետ միասին Կիրովն Անդրկովկասում համառ և հաջող պայքար է մղում մեծապետական չովինիզմի և

տեղական նացիոնալիզմի դեմ: Այս պայքարն ավարտւեց նացիոնալ-ուկրոնիստների ջախջախումով:

Կիրովը համարձակ կերպով և վճռականորեն դնում է Ադրբեյջանի հետամնաց դոլդական շրջանների տնտեսական ամրապնդման հարցերը (վոռոգման խռոք աշխատանքների ծալալումը, բամբակի կուլտուրայի արմատաւորումը և այլն), համառորեն պայքարում է դրադիտութիւն տարածելու համար, թյուրքական դոլդի կուլտուրական մակարդակի բարձրացման համար, հսկայական ուշադրութիւն է հատկացնում ազգային կադրերի աճմանը, ստրկացած թյուրք կնոջն ազատագրելու համար մղելիք պայքարին:

Նացիոնալ-ուկրոնիստներն իրենց վոռքի տակի հողը կորցրել են և նրանք այլևս պաշտպանութիւն չեն գտնում կուսակցական կազմակերպութեան շարքերում:

Մոտաւորապես կես տարուց հետո, իր աշխատանքի մասին հաշիւ տալով Ադրբեյջանի կոմկուսակցութեան IV համագումարին, Կիրովը բոլոր հիմքերն ունի հայտարարելու, վոր Ադրբեյջանի կոմունիստների շարքերն այնքան յերկար ժամանակ բաժանբաժան անող ներքին պայքարը լիկլիդացիայի յե յենթարկվել:

Ճիշտ ազգային քաղաքականութեան հաստատումն ու նացիոնալ-ուկրոնիստների ջախջախումն Ադրբեյջանում անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին կատարելու համար Լենինի և Ստալինի ցուցումները՝ Անդրկովկասի հանրապետութիւններն Անդրկովկասի Ֆեդերացիայի մեջ միաւորելու մասին:

Անդրկովկասի Ֆեդերացիա ստեղծելը վստահելի ուղի բացեց տեղական նացիոնալիզմը վերացնելու, սոցիալիզմի շինարարութեան գործում Անդրկովկասի ժողովուրդների իսկական յեղաշարական համագործակցութիւն հաստատելու:

Կիրովն Անդրկովկասի Ֆեդերացիայի հիմնադիրներից մեկն էր, աշխատելով այն ստեղծելու վրա Սերգո Որջոնիկիձեյի հետ ձեռք ձեռքի տլած, նրա անմիջական ղեկաւարութեամբ:

Բազմում Կիրովի տարած հաջող աշխատանքը շուտով մեծ արդյունքներ տվեց:

«Ադրբեյջանի կոմունիստական կուսակցութիւնը, ընկեր Կիրովի գլխաւորութեամբ, արագ կերպով ջախջախեց նացիոնալ-ուկրոնիստներին:

Բազմի պրոլետարիատը, հալատարիմ Լենինի—Ստալինի ինտերնացիոնալ դրոշին, Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմա-

կերպման ու ամրապնդման համար մարտնչողները առաջին շարքերում հանդես յեկավ»¹։

Պատահական չէ, վոր հատկապես Բազմումն և 1922 թվի վերջում հավաքվում խորհուրդների I Անդրկովկասյան համագումարը։ Հանդես դալով համագումարում, Կիրովն ասում էր․

«Մութ և ալտուր արեմտա-յեկրոպական բանվորների համար, բայց նրանք կտեսնեն այն մեծագույն արևը, վորը լուսավորում է խորհրդային յերկիրը։ Այդ արևի առաջը չի փակի վոչ մի ուսակցիոն համաձայնողական քաղաքականութիւնը»։

Համագումարում ընտրվում է Անդրկովկասյան առաջին Կենտգործկոմը։ Անդրկովկասի սոցիալիստական ծագկման ուղին գցված է, ստեղծված է հիմնական նախադրյալն՝ Անդրկովկասյան Փեղերացիայի հանրապետութիւնները հետագայում—Ստալինյան նոր Սահմանադրութիւն համաձայն—միութենական հանրապետութիւնների փոխարկելու համար։

Լենինի—Ստալինի այդ իմաստուն պլանի առաջին, վճռողական մասը կատարեց Սերգո Որջոնիկիձեն՝ Կիրովի անմիջական և մերձավորագույն մասնակցութիւնը։ Մինչև իր՝ Բազմից ուղեվորվելու ուր (1925 թվի դեկտեմբեր) Կիրովը Անդրկովկասի Փեղերացիայի ղեկավարներից մեկն է հանդիսանում։

Կովկասում, նրա բազմազգ կազմի դժվար պայմաններում փորձով հաստատվեց լենինյան—ստալինյան ազգային քաղաքականութիւնի ճշտութիւնը։

Կովկասում դարերի ընթացքում դաժան պայքարի մեջ իրար հետ բաղխվում էին Յեկրոպայի և Ասիայի բազմաթիվ ցեղերն ու ժողովուրդները։ Ֆարական կառավարութիւնը, իսկ Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո տեղական բուրժուական նացիոնալիստները հրահրում էին ազգամիջյան վայրենի թշնամանք, վորը գազանային կոտորածների, փոխադարձ բնաջնման հասցրեց։

Հաստատելով Կովկասում ժողովուրդների հաշտութիւնն ու համագործակցութիւնը, Կիրովը՝ Սերգո Որջոնիկիձենի և Անդրկովկասի լավագույն բոլշևիկների հետ մեկտեղ տվեց Լենինի—Ստալինի ազգային քաղաքականութիւնի մեծ նշանակութիւն, մեծ ուժի ամենաուսանելի ապացույցը, և Բազմի կուսակցական կազ-

1 Լ. Բերիա։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպութիւնների պատմութիւն հարցի շուրջը, Հայքադհրատ, Եջ 192։

մակերպութիւն քսանհինգամյակի ուր Կիրովը հպարտութիւնով կարող էր հայտարարել․

«Այստեղ, Բազմում, յերկրաշնչի բոլոր անկյունները տանող ուղիների այս մեծ հատման կեսում, մենք այստեղ իրականում, կյանքում, պրակտիկայում կարողացանք իրականացնել մեր ծրագրի մեծագույն կետերից մեկը—միջազգային, ազգամիջյան յեղբայրութիւնը»։

Կիրովը շատ և համառորեն և աշխատել ազգբեջանական կոմունիստների լենինյան դաստիարակութիւնի վրա, առանձնապես թուրքական կուսակցական կազմերի դաստիարակութիւնի վրա, կուսակցական շարքերը համախմբելով Լենինի—Ստալինի դրոշի ներքո։

Սերգեյ Միրոնովիչը յերիտասարդութիւնը անդադար կոչ էր անում տիրապետելու լենինիզմին։ Ազգբեջանական Կոմունիստական Յերիտասարդական Միութիւն Վ համագումարում արած գեկուցման մեջ նա ասում էր․

«Ուսումնասիրեք Լենինին, ծայրեծայր իմացեք նրա կյանքը, իմացեք ամբողջ մարդկութիւնի մեջ ամենահանճարեղ առաջնորդի մեծ պատգամները մինչև վերջին ստորակետը»։

1923—1924 թվերին Կիրովը Սերգո Որջոնիկիձենի հետ մեկտեղ պայքարում է բոլոր հակակուսակցական խմբավորումների և ամենից առաջ տրոցկիզմի դեմ։ Լենինի—Ստալինի հավատարիմ աշակերտի ղեկավարած Բազմի կազմակերպութիւնը խիստ հակահարված է տալիս տրոցկիստներին, վորոնք փորձում էին խախտել կուսակցութիւնի միասնականութիւնը, հանել նրան լենինյան ուղուց։

1924 թվին Տրոցկին լույս է ընծայում իր դադրելի դրքույիլը, վորտեղ նա զրպարտում է մեր կուսակցութիւնը, նրա առաջնորդ Լենինին, բոլշևիզմի հերոսական պատմութիւնը։ Անդրդվելի բոլշևիկ Ս. Մ. Կիրովի ղեկավարած Բազմի բոլշևիկները պահանջում են անողորմ պայքար մղել տրոցկիզմի դեմ։ Այ(ք)Կ Բազմի կոմիտեյի ընդլայնած սլենումում 1924 թ. դեկտեմբերի 2-ին Կիրովի ղեկուցման առթիվ ընդունված բանաձևում ասված է․

«Լենինիզմը տրոցկիզմով փոխարինելու փորձերը պետք է հանդիպեն ուժեղ և վճռական հակահարվածի՝ ամբողջ կուսակցութիւնի կողմից, ինչպես այդ մի անգամ չէ, վոր յեղել և նախորդող տարիներին»։

Կիրովը Բաղվի կուսակցական XIV կոնֆերենցիայում ասում
էր .

«Տրոցկու շուրջը խմբավորվում է այն ամենը, ինչ
դեմ է բոլշևիզմին, դեմ է լենինիզմին, դեմ է կոմունիս-
տական կուսակցությանը»:

Մեծագույն դժվարություն ունեցող խնդիր էր դրված Կիրով-
վի առաջ նալթի համար պայքարելու դործում: Առանց նալթի
անկարելի չէր վերականգնել ժողովրդական տնտեսությունը: Լենին-
ը պահանջում էր մշտական հսկողություն հաստատել Բաղվի
հանքերի աշխատանքների վրա:

Բաղվի նալթը—այդ՝ Խորհրդային յերկրի ներքին հարցը
չէր միայն: Նալթի հարցը միջազգային նշանակություն էր ձեռք
բերել: Ոստրերկրյա կապիտալիստները չէին հրաժարվում հան-
քերն իրենց վերադարձնելու հույսից: Ճենովայի կոնֆերենցիա-
յում նրանք հայտարարեցին, վոր ժողովրդական տնտեսությունը
վերականգնելու համար Խորհրդային յերկիրը վարկեր կստանա
միայն այն դեպքում, յեթե Բաղվի հանքերը վերադարձվեն իրենց
նախկին տերերին:

Խորհրդային պատվիրակությունը, վորի կազմում գտնվում էր
նաև Անդրկովկասի ներկայացուցիչ Նարիմանովը, մերժեց կապի-
տալիստների ստրկացնող պայմանները: Յերկիրն սկսում էր իր
ուժերով վերականգնել նալթային արդյունաբերությունը:

Բաղու ժամանելու առաջին իսկ որերից Կիրովը ձեռնամուխ
է լինում այդ հսկայական աշխատանքին: Նա տառացիորեն ամեն
որ լինում է հանքերում, նալթաթորման և մեխանիկական դոր-
ծարաններում, դիտում, ուսումնասիրում է մարդկանց, ուսում-
նասիրում է աշխատանքի պայմաններն ու բոլոր առանձնահատ-
կությունները, արագ կերպով ըմբռնում է ամենակարևորը և իրեն
հառուկ ամբողջ եներդիայով ձեռնամուխ է լինում դործին:

Իսկ նալթահանքերի պայմաններն այնքան էլ հեշտ չէին:
Սկսենք նրանից, վոր Բաղուն միշտ ներմուծվող հացով էր ապ-
րում, իսկ Խորհրդային յերկիրն այն ժամանակ հացով ամենևին
էլ հարուստ չէր: Բաղուն հաճախ ստիպված էր լինում պարենա-
յին սուր դժվարություններ կրել: Հանքերի և դործարանների
անդրձրհեղեղյան սարքավորումն ամենախղճուկ վիճակում էր
գտնվում, իսկ ապահովել նալթային արդյունաբերության նյու-
թական մատակարարումը բացառապես դժվար էր: Չէ վոր այդ
այն ժամանակն էր, յերբ մեր ամբողջ արդյունաբերությունն
ամբողջապես և առանձնապես մեծազի արդյունաբերությունը

նոր էր սկսել վերականգնել: Յեւ, վերջապես, ինչ վոր ամենից
կարևորն էր՝ պարենային վատ մատակարարման և աշխատանքի
ծանր պայմանների հետևանքով խիստ կրճատվեցին նալթադործ-
բանությունների կազմերը:

Բայց Կիրովի յեռանդն անսպառ է, նրա հաստատակամու-
թյունը՝ անհաղթահարելի: Նա հոգում է թե՛ պարենի մատին,
թե՛ հանքերի տեխնիկական մատակարարման մատին, բանվորա-
կան և տեխնիկական կազմերի մատին, աշխատանքային ամուր
կարգապահություն հաստատելու մատին: Նրա աչքն ամեն
տեղ է, նրա խորհուրդը, իսկ հաճախ նաև վճռական խոսքը—
յուրաքանչյուր նշանակալից հարցումն է:

Հավաքվում, համախմբվում են հին նալթադործների կազ-
մերը: Կիրովը յերկար ժամերով դրուցում է ինժեներների ու
բանվորների հետ: Նա բարձրացնում է յուրաքանչյուրի յեռանդը,
բոլորին վողեչնչում է պայքարելու և հաղթելու:

Կիրովի ուղղակի ցուցումներով, պնդումներով ծավալվում է
նոր նալթաբեր տարածություններ յուրացնելու հաջող աշխա-
տանքը. Սուրազ (Սուրաթսկի բազար) տարածություն վրա, Կի-
րովի անմիջական ամենորոյա դեկավարությունը, նախորդ մշակ-
ված պլանով ստեղծվում է Խորհրդային առաջին հանքը:

Մինչև հեղափոխությունը Սուրազում նալթադրյունաբերող-
ներն արդեն վորձում էին աշխատել, բայց նրանց չհաջողվեց
այնտեղ նալթ ստանալ: Սկեստիկները նախազգուշացնում էին,
վոր բոլոր ծախսերը իզուր կլինեն: Բայց Կիրովը դրուցում է
գետլոգների, ինժեներների, հին բանվոր-արտադրողների հետ և
գալիս այն համոզմանը, վոր Սուրազում նալթ պետք է լինի և,
հետևաբար, հարկավոր է հանք կազմակերպել:

Կիրովը խորամուխ է լինում աշխատանքի բոլոր մանրունք-
ներին, հանքերում լինում է ամբողջ հաճախ, քան Ադնեյթի աշ-
խատողները: Հոգում է սարքավորման մատին, նյութերի մատին,
տրանսպորտի մատին, շատ անգամ է այցելում յուրաքանչյուր
հորատը: 1922 թվի դարնանը առաջին յերկու հորերը չահա-
դործման մեջ մտան: Բանվորների պահանջով հանքը կոչվեց ըն-
կեր Կիրովի անունով:

Կիրովն արագացնում է Բիբի-Հեյրաթի խորը (այժմ Իլիչի
խորը) լցնելու աշխատանքները: Այստեղ թերահավատների դե-
մադրությունն է՛լ ամբողջ ուժեղ է, իսկ «նալթային արքաների»
հին ծառայողները դիտակցաբար արգելափակում են դործը, ձգտե-

լով անձեռնմխելի պահել այս տեղամասի նալթային հարստութիւնները մինչև իրենց «տերերի» վերադարձը:

Կիրովը, ամենալուրջ կերպով ուսումնասիրելով խորը լցնելու հարցը, դալիս է այն համոզմանը, վոր աշխատանք տանել հարկավոր է, և ինքը դործի յե անցնում ճիշտ այնպես, ինչպես և Սոլբադի հանրում:

Այս ձեռնարկմանը չեն հաւատում նույնիսկ շատ կոմունիստներ: Նրանք դանդաղաներ են ուղարկում Մոսկվա, դործն այնպես են սրտկերացնում, թե Կիրովը ծովն է նետում ամենաթանկարժեք ուժերն ու միջոցները: Հարցը հասնում է մինչև Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովը: 1923 թվի ապրիլին խորը առաջին հորատից խիստ նալթի հզոր շատրվանը:

Այստեղ, թերևս հարկավոր է ավելացնել նաև, վոր արդեն Բադվում Կիրովի աշխատելու ժամանակ Իլյիչի խորը տալիս էր Ադնեվիթի հանույթի մոտ 10 տոկոսը, իսկ ավելի ուշ այդ հանքի նշանակութունն է՛լ ավելի մեծացավ:

Դանդաղ, բայց անընդուն վերականգնվում է կյանքը հանքերում: 1922 թվի կեսերին Բադուն սկսում է արդեն կանոնավոր կերպով նալթ արտահանել: Ամեն տարի տալիս է մեկ միլիոն տոնն հանույթի աճ: Հանքերը փրկվեցին: Գործող հորերի թիվը կրկնակի ավելացել է:

Ընկեր Ստալինը բազմեցրինքի առաջ հանքերի տեխնիկական վերադիման համարձակ պլան է առաջ քաշում: Հին ժելոնկանս ստրկական աշխատանքի վկան—իր դարն անցրել է: Նրան պետք է փոխարինի խորը ողամուղը: Դանդաղընթաց դարկային հորատումը, վորը մտցրել էյին կապիտալիստները դեռ անցյալ դարում, պետք է տեղը դիջի պտուտակային հորատմանը:

Կիրովը ղեկավարում է այդ խնդրի լուծման դործը. հենվելով Բադվի պրոլետարների լավագույն կադրերի վրա, նա կոտրում է ռուսինյորների դիմադրութունը, վողենչում է վհատվածներին, իր հետևից է տանում տատանողներին: Կիրովն առաջինն է նոր տեխնիկան յուրացնելու համար մղվող պայքարում:

Իսկ ղժվարութիւնները մեծ էյին. կոնսերվատիվ կամ հանքերի հին տերերի կողմից կաշառված ինժեներները հալատաց

1 Ժելոնկա—յերկաթե մեծ գույլ, վորը թոկով իջնում էր նալթի հորը և ծառայում էր նալթը հորից հանելու համար: Ժելոնկայով կատարած աշխատանքը հանքերի ամենաղժվար աշխատանքներից մեկն էր:—ԽՄԲ.

նում էյին, վոր պտուտակային հորատումը Բադվի պայմաններում անհնարին է: Միքանի դեղուղներ կրկնում էյին նրանց ասածը, հայտարարելով, վոր Բադվի յերկրաբանական շերտերի առանձնահատկութիւնների շնորհիվ դործիքներն անխուսափելիորեն կկոտրվեն:

Պտուտակային հորատում մտցնելը և առանձնապես ժելոնկան խորը ողամուղներով փոխարինելը՝ բանվորների հետամնաց խալիբի արտակարգ դիմադրութիւնն էյին առաջացնում: Ժելոնկաների վրա աշխատող բանվորները յերկյուղ էյին կրում, թե ողամուղներ մտցնելուց հետո իրենք բոլորովին առանց աշխատանքի կմնան:

Կիրովը՝ հանքերն այցելելու ժամանակ արած ժողովներում և զրույցներում անդադար մանրամասնորեն, ուշի—ուշով բացատրում էր բանվորներին տեխնիկական նորմուծութիւնների ամբողջ հսկայական նշանակութունը և շահավետութունը հենց իրենց՝ բանվորների համար: Նա զրուցում էր տեխնիկների, ինժեներների հետ և շատերին փոխարկեց աշխատանքի նոր մեթոդների ենտուղիաստների:

Մենչեիկները, եսերները, դաշնակները¹, բոլոր յերանգների հակահեղափոխականները, ողտադործելով հետամնաց բանվորների նախադաշարմունքները, ուժեղ աղիտացիա էյին մղում տեխնիկական նորմուծութիւնների դեմ, խուճապային լուրեր էյին տարածում, ստոր դրպարութիւն էյին սերմանում, վնասարարութիւն էյին կադմակերպում հենց աշխատանքի պրոցեսում:

Կիրովի ամուր դեկավարությամը Բադվում մերկացվեցին և ջախջախվեցին այն հակահեղափոխական խմբերը, վորոնք ստեղծվել էյին խոշորագույն կապիտալիստների, նալթահանքերի նախկին տերերի առաջադրանքներով և միջոցներով, խմբեր, վորոնք լայն չափերով սխտեմատիկ վնասարարութիւն էյին կադմակեր

1 Դաշնակներ—«Դաշնակցութիւն» կուսակցութիւնը—հայկական բուրժուա-նացիոնալիստական կուսակցութիւն է:

Դաշնակները ձգտում էյին Հայաստանի ռուսական և թյուրքական մասերից հայկական բուրժուական առանձին պետութիւն ստեղծել: 1918—1920 թվերին, Հայաստանի բուրժուական հանրապետության գլուխ կանգնելով, դաշնակներն այն փոխարկեցին անդլո-ֆրանսական ինտերվենտների և Անդրկովկասի սպիտակ-դիարիական ուժերի հենակետի՝ խորհրդային իշխանության դեմ մղած պայքարում:

Հայաստանում խորհրդային իշխանութիւն հաստատվելուց հետո (1920 թվի նոյեմբերի 29-ին) դաշնակները լիդերներն արտադաղթեցին և շարունակում էյին պայքարն ընդդեմ խորհրդային Հայաստանի:—ԽՄԲ.:

պում, բազմիցս հանքերի հողահոսներ սարքում: Կիրովի ղեկավարութեամբ բոլոր արդեւելքները ջախջախւեցին, և նալթալին արդունաբերութեան տեխնիկական վերակառուցումը ծավալվում էր արագորեն և հաջող: Ընկեր Ստալինի դրած խնդրի իրականացումն ապահովված էր:

Բազմից իր հեռանալու նախորդակին, 1925 թ. դեկտեմբերին, Ա.Կ(բ) ՄԻ համագումարում Կիրովն օրինական հստատութեամբ կարող էր ասել.

«Մեր նալթալին արդունաբերութեան մեջ այժմ արդունաբերական մեծագույն հեղափոխութիւն է կատարվում»:

Ադրբեջանի Խորհուրդների համագումարում Սերգեյ Միրոնովիչն ասում էր.

«...յեթե դուք հիշեք նալթալին այն գերեզմանատունը, վորը մնաց մեզ այստեղ մոսսովաթի տիրապետութիւնից հետո, դուք կհամաձայնվեք այն բանին, վոր մենք անկասկած այստեղ ամենահսկայական հաջողութիւնների յենք հասել»:

Իր ուշադրութեան և իր ուժերի վիթխարի մասը տալով նալթալին արդունաբերութեանը, Կիրովը վոչ մի բոսի չէր մոռանում նաև ադրբեջանական հետամնաց և խաւար գյուղի մասին, այն մասին, վոր անհրաժեշտ է ամրապնդել Բազմի պրոլետարիատի զաւինքը ադրբեջանական գյուղի հետ:

«Կարելի չէ շատ գեղեցիկ ճառեր արտասանել, կարելի չէ, վորքան ցանկանաս, գովել քո աշխատանքը, բայց մինչև վոր մենք գյուղացիներին դուրս չբերենք գյուղատնտեսութեան այժմյան իրադրութիւնից, մեր աշխատանքը իսկական հաջողութիւնների չի հասնի»:

Այսպես էր խոսում Կիրովն Ադրբեջանի Խորհուրդների III համագումարում:

Ադրբեջանական գյուղացիութեան նյութական և կուլտուրական վերելքի պայմաններից մեկը Կիրովն արդարացիորեն համարում էր Ադրբեջանում տեխնիկական կուլտուրաների, առաջին հերթին բամբակաբուծութեան զարգացումը:

«Շատ մեծ ազդեալ չէ սպասում մեր հանրապետութեանը,—ասում էր Կիրովը Ա.Կ(բ) ՄԻ համագումարում 1924 թվի մայիսին,—յեթե մենք կարողանանք արժեքավոր կուլտուրաների համար բավականաչափ պետքական դարձնել մեր ադրբեջանական հսկայական տափաստանները:

Այս տեսակետից ամենաառաջնակարգ դեր պետք է խաղաբամբակը»:

Սերգեյ Միրոնովիչն արդեն այն ժամանակ ընդհուպ դնում է գյուղատնտեսութեան մեքենայացման հարցը. նա անձամբ ցուցումներ է տալիս, թե ուր ուղղել և ինչպես բաշխել այն մի քանի տասնյակ տրակտորները, վոր ստացել էին Ադրբեջանի համար արտասահմանից:

Կիրովը հեղեղներն ծաղրում է գյուղատնտեսութեան այն վաճառանգներին, վորոնք վործում են ապացուցել, թե դոմեշտ տրակտորից անհամեմատ ավելի լավ է, վորովհետև «գոմեշը լավ վրտներ ունի», իսկ «տրակտորի համար հարկավոր է վորակյալ շոֆեր ունենալ»: Կիրովն անողորմաբար խաղաղանում է նրանց, ովքեր հաշտվում են հետամնացութեան հետ, ադրբեջանական գյուղի անկուլտուրականութեան, նահապետականութեան հետ, ովքեր թերազնահատում են այդ հետամնացութեան դեմ պայքարելու կարևորութիւնը:

«Ընդունված է կարծել, թե Ադրբեջանի բնակչութեան կեսը հանում է իր չադրան: Այդ խորը սխալ է: Չադրա կրում է վոչ միայն Ադրբեջանի բնակչութեան կեսը... մեր բնակչութեան 90 տոկոսը մինչ այժմ մնում է չադրայի, խաւարի, տղիտութեան, անգրագիտութեան և—հարկավոր է ուղղակի ասել—կուլտուրական տղիտութեան մեջ... Մենք բոլոր միջոցներով, ուժերով և միջոցառումներով, ինչ գնով էլ լինի, պետք է հասնենք այն բանին, վորպեսզի այդ «չադրան» ավելի յերկար չկրեն»:

Այսպես էր խոսում Կիրովն Ադրբեջանի Խորհուրդների III համագումարում 1923 թվի դեկտեմբերին:

Սերգեյ Միրոնովիչը համառորեն և վճռականորեն պայքար էր մղում թրքուհու ազատագրման համար: Այդ բնազավառում նա ստիպված էր լինում հաղթահարել թաղուն, իսկ յերբմն էլ բացահայտ դիմադրութիւնը վոչ միայն անկուսակցականների լայն մասսաներում, այլև կուսակցութեան շարքերում և նույնիսկ միջանի ղեկավար թուրք աշխատողների մոտ:

Սերգեյ Միրոնովիչի ոգնութեամբ, նրա անմիջական ղեկավարութեամբ, Բազմում ստեղծվեց «Թրքուհու տուն», թուրք կանանց մեջ լայն մասսայական աշխատանք տանելու հենակետ: «Թրքուհու տանը» զաստիարակվեց այն առաջին ակտիվ կանանց համարձակ և վճռական ջոկատը, վորոնք հերոսական կռիւ էին

մղում թրջուհիներին տնտեսական և ընտանեկան ստրկության դարավոր կասկանքները ազատագրելու համար:

Կիրովը Բազմի բնակարանային լաշն շինարարության նախաձեռնողն էր: Նա անձամբ հսկում էր բանվորների համար նոր տներ կառուցելու դործին, հետաքրքրվելով, աչքի անցկացնելով, ստուգելով յուրաքանչյուր մանրամասնությունը:

Կիրովի անմիջական ոգևոթյամբ Բազմում կառուցվեց տրամվայ: Կիրովի ղեկավարությամբ արագորեն կերպարանափոխվում էին կեղտոտ, անուշադրության մատնված բանվորական ծայրամասերը:

Լաշն խնդիրները, սոցիալիստական համարձակ պլանները Կիրովին իրականացնում էր մշտական հաջողությամբ, վորովհետև վոչ մի բույե չէր կորցնում անմիջական կապը սոցիալիստական կառուցման այն համեքտ, աննկատելի մասնակիցների հետ, վորոնց ազնվ, անձնվեր աշխատանքը վորոշում է յուրաքանչյուր դործի հաջողությունը: Կիրովը պարզ տեսնում էր և հատկապես նշում էր գլխավոր խնդիրը և ալ խնդրին էր տալիս բոլոր ուժերը: Հսկայական աշխատանքով դրադված լինելով, նա միշտ ժամանակ էր գտնում քննելու հանքային բանվորի գանդատը՝ բնակարանների վոչ ճիշտ բաշխման մասին կամ պատասխանելու այն կոմյերիտուհու նամակին, վորը դիմում է նրան խորհուրդ տալու, թե վո՞ր բուհը մտնի սովորելու: Հաճախ Կիրովն այցելում էր Բազմի նավթագործ բանվորներին բնակատեղերը, դուրսում էր նրանց դործերի մասին, հարց ու փորձ անում նրանց կարիքների մասին:

Բազմում, ինչպես և ամեն տեղ, վորտեղ աշխատում էր Սերգեյ Միրոնովիչը, նրա տարած ամբողջ աշխատանքն ամենից առաջ աշխատանք էր մասսաների մեջ: Կիրովը բացառիկ ընդունակություն ուներ՝ գտնելու աշխատավորական մասսաների թաղուն մտքերին, ակնկալություններին մոտենալու կերպը և մասսաներին վորտե՞ր հանել՝ հաղթահարելու համար ամենադժվար արդեւրքները: Այսպես էր Կիրովն ամենուրեք և միշտ: Նա կատարելապես տիրապետում էր աշխատանքի լենինյան-ստալինյան վոճին:

Ադրբեջանում 4½ տարի վարած աշխատանքի ընթացքում Կիրովը նվաճեց բանվորների, կոմունիստների և անկուսակցականների ու բոլոր աշխատավորների ջերմ սերը: Նրա յեւույթները, նրա՝ բովանդակությամբ խորը և ձևով պարզ, մատչելի

ճառերը հուզում էին, ամուր մնում հաղարավոր և հաղարավոր մարդկանց մտքերում: Ռուսերեն լեզուն վատ իմացող թուրք բանվորները Կիրովի ճառից հետո ասում էին, թե իրենց թարգմանիչ հարկավոր չէ, նրանք առանց այդ էլ հասկանում են իրենց Կիրովին: Այդ տեղի յեր ունենում այն պատճառով, վոր Կիրովի բոցավառ ճառերը նրա՝ ամենատաղանդավոր կադակերպչի, հեռատես, խոհուն ղեկավարի, Բազմի բանվորների ամենատաղեր ընկերոջ և բարեկամի՝ պրակտիկայի ուղղակի շարունակությունն էին:

Կիրովի աշխատանքը Բազմում—այդ առաջին հնգամյակի նախապատրաստվելն է խորհրդային Յերկրի տնտեսական Փրոնտի ամենակարևոր մասերից մեկում:

Կիրովի ղեկավարությամբ Բազմի նավթահանքերը խորհրդային յերկրին սկսեցին տալ այն թանգարժեք «սև փոփին», վորը հոսելով յերկաթուղիները, դործարաններն ու Փարբիկաները, կյանքի յեր կոչում մեր արդյունարերությունը, մեր տրանսպորտը:



ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԳԼՈՒԽ ԱՆՑԱԾ

1925 թվականի ղեկառմեր: Կուսակցության XIV համագումարն է: Կուսակցության թշնամիները՝ զինույթավաճ ստոր ոպողիցիան՝ դրոհում են լենինյան Կենտկոմի դեմ, բացահայտորեն հանդես են գալիս մեր յերկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի դեմ, փորձեր են անում՝ չեղել կուսակցությունը լենինյան ուղուց, նենգավորել լենինիզմը արոցկիւրմով, խրնդիւր դիւրով վերականգնել կապիտալիստական ստրկությունը մեր յերկրում:

Նոր ոպողիցիայի դավաճանական արտելը ընդդեմ Կենտկոմի, ընդդեմ կուսակցության, հետ մղվեց, ոպողիցիայի կապիտալանտական «թերխաները» կուսակցական համագումարի ճշնշող մեծամասնության կողմից մերժվեցին, ոպողիցիան ջախջախվեց: Ամբողջ կուսակցությունը համախմբվեց իր Կենտկոմի շուրջը, ընկեր Ստալինի շուրջը: Լենինի—Ստալինի դործը մնաց անստատն:

Վճարար մերկացնելով վատ դիմակավորված արոցկիւտներ

Հանդիսացող զինույնականներին, Կիրովը մաստերով ապագուցում էր, վոր նրանք համագումարի մանդատներ են ստացել ստոր յերկերեսանիության հետևանքով, խաբելով Լենինգրադի բոլշևիկներին: Մինչև համագումարը զինույնականներն ամեն կերպ գովարանում էին Կենտկոմին, խոսք անդամ չեյին ասում տարածախոսությունների մասին, և միայն համագումարում նրանք իրենց հակադրեցին Կենտկոմին: Ձախձախելով համագումարում, զինույնականները չենթարկվեցին կուսակցությանը: Նրանք վոճրադործ պայքար սկսեցին XIV համագումարի վորոշումները դեմ:

Կուսակցության առաջ հերթի յեր դրված անհետաձգելի, ամենապատասխանատու մի խնդիր՝ շտկել Լենինգրադի բոլշևիկների շարքերը, վորոնց մի մասը գտնվեց Զինույնականների և նրա արբանյակների լիտի գեմադրության, խաբեյության և զրպարտության ցանցերում:

Տակալին XIV համագումարի ժամանակ րնկերներ Որջնիկիձնն, Կիրովն ու Միկոյանը մեկնում են Լենինգրադ, յելույթ են ունենում կուսակցության դիրքերի վրա հաստատություն կանգնած Վիրորդի ռայոնի կուսակցական ակտիվի ժողովում, ինչպես նաև Լենինգրադի մի շարք գործարանների կուսակցական ժողովներում:

XIV համագումարից հետո կուսակցության Կենտկոմը՝ համագումարի վորոշումները Լենինգրադի բոլշևիկներին սրբաբանելու և զինույնական ուղղիցիան վերջնականապես մերկացնելու համար Լենինգրադ և ուղարկում Կենտկոմի անդամների մի ամբողջ խումբ՝ րնկերներ Մոլոտովին, Վորոշիլովին, Կիրովին, Կալինինին, Անդրեյեվին և ուրիշներին:

Կուսակցության թշնամիները՝ զինույնականները, վորոնք դրավում էին Լենինգրադի կադմակերպության ղեկավար պոստերը, անսքող զայրույթով ու ատելությամբ դիմավորեցին ամբողջ կուսակցության կողմից մտահոսությամբ ոժտված և սիրված Կենտկոմի անդամներին: Նրանք փորձում էին Կենտկոմի անդամների առաջ փակել կուսակցական ժողովների մուտքը, վիժեցնել այն ժողովները, վորտեղ հանդես էին գալիս Կենտկոմի անդամները, նրանց յելույթները դիմավորելով սուլոցով, հո՛ւ անելով: Վորձում էին նենդորեն դասավորել ժողովների կադմբ, վորպեսզի կեղծեն կուսակցական կոլեկտիվների վորոշումները: Բայց Կենտկոմի անդամները, նրանց թվում և Կիրովը,

հաստատորեն կատարում էին իրենց վրա դրված հանձնարարությունը, հանդիպելով բանվոր-կուսակցականների ջերմ արձագանքին: Նրանք ամեն ուր յելույթ էին ունենում գործարաններում և Փարբիկաներում, մերկացնելով Զինույնականների դեմ, կուսակցության դեմ, սոցիալիզմի կառուցման մեծ գործի դեմ ուղղած ստախոսությունն ու զրպարտությունը, Լենինգրադի պրոլետարիատի առաջ բաց անելով ուղղիցիոն «թեօրիաները» բուրժուական ելույթները, մերկացնելով ուղղիցիոններին վոճրադործ «տակտիկան», վորոնք հանդուցալույծ էին անում հակահեղափոխության ուժերը:

Հունվարի 6-ին Կիրովը յելույթ է ունում «Շեկտրոսիլա» գործարանում, հունվարի 7-ին «Կրասնի տիպ» Փարբիկայում, 8-ին «Կրասնի մայակ» Փարբիկայում, 11-ին՝ Ֆեդորովի անվան գործարանում, 12-ին «Կրասնի գվոզդիլչիկ» և «Շեկտրոսպարատ» կոլեկտիվների միացյալ ժողովում, այնուհետև՝ «Կրասնի պուտիլովեց»-ում, մի ամբողջ շարք ուրիշ գործարաններում և Փարբիկաներում, պրոֆմիսիոնական աշխատողների, կոմյերիսմիսիոնական ժողովներում:

Լենինգրադ ժամանելուց հետո մի ամսվա ընթացքում Ս. Մ. Կիրովը 15 զեկուցում տվեց գործարաններում և Փարբիկաներում: Փետրվարի 6-ին Պետրոգրադի ռայոնի Արտակարգ IX կոնֆերենցիային արած զեկուցման մեջ Սերգեյ Միրոնովիչը տալիս և զինույնականների ջախջախման հանրադրամարները:

«Բավական էր մի չորս-հինգ շաբաթ, վորպեսզի այստեղ, Լենինգրադում, լիակատար բեկում տեղի ունենար: Այս, ընկերներ, խոսում է այն մասին, վոր կուսակցությունն ինչպես ապրում էր, այնպես էլ ապրում և առողջ կյանքով»:

Կուսակցական քաղաքականության ամենաբարդ հարցերը Կիրովի ճառերում հասկանալի յեն գտնում բոլորի համար, թույլ չտալով փոքրադույն կասկած անդամ:

Կիրովի ճառերի արտաքին հանգստության հետևը բոլորը զգում են բոլշևիկյան կրքոտության հուրը, մեծագույն վճռականությունն ու նվիրվածությունը կուսակցության գործին:

Կուսակցական ժողովներում պրովոկատոր-զինույնականները փորձում էին կադմակերպել ուղղակի սարսափ: Կիրովին, ինչպես և Կենտկոմի գծի մյուս հավատարիմ պաշտպաններին, դիմավորում էին հանդուգն աղաղակներով, սուլոցով: Բայց

Կիրովն ակտում ե խոսել, և նրանք հարկադրվում են լռել: Ամբողջ ժողովը լարված ուշադրությամբ լսում ե Կիրովի պարզ, համոզիչ ճառը: Նա արագորեն դրավում ե առաջնություն, նվաճում լսողներին: Կիրովը վերջացնում ե, և բոլորը, խանդավառությամբ լի, վոտքի յեն յենում և մոլորում նրա՛ն, ով հենց նոր հասարակ, ամենքին մատչելի խոսքերով պարզաբանեց ամենազխավորը, ամենահարկավորը, ցրեց բոլոր կառավարողը, ամբողջ հավատը դեպի բանվոր դասակարգի գործը, դեպի Լենինի—Ստալինի կուսակցության գործը:

Կիրովին, մորեն բոլորովին նորերս դեռ չեյին ճանաչում Լենինգրադում, ուղեկցում եյին բուռն, ցնծալից ուլացիայով յուրաքանչյուր ժողովում, նրա յուրաքանչյուր յեղութից հետո—լինել դա գործարանային կոնկուրսում, պրոֆմիութենական, թե կոմյերիտմիության ժողովում, ռայոնական, թե նահանգային կուսկոնֆերենցիայում: Կիրովի հեղինակությունն աճեց բոլորի աչքին: Կիրովը, կուսակցության գլխավոր գծի համար պայքարող անհողող մարտիկը, շուտով դարձավ ամենապետքական, մտերիմ, հարազատ մարդը Լենինի քաղաքի բոլոր աշխատավորների համար:

Կորցնելով Լենինգրադի կազմակերպությունը խաբելու հնարավորությունը, արագորեն զրկվելով կուսակցության անդամների մեջ ունեցած ազդեցության մնացորդներից, գինովյեվականները փորձեցին Լենինգրադի կոմյերիտմիությունը կտրել կուսակցությունից: Բայց, ընդգծում եր Կիրովը, Լենինգրադի կոմյերիտմիության վերնախավը, գինովյեվական ճտերը, չեյին արտացոլում Լենինգրադի կոմյերիտմիության մաստաների տրամադրությունները: Ուստի և նա հեշտությամբ ջախջախվեց և մերկացվեց: Լենինգրադի կոմյերիտմիության կազմակերպությունը նորից դրավեց իր պատշաճ տեղը կոմյերիտմիության մեջ:

1926 թվի հունվարի 15-ին Վերսլի ռայոնի կոմյերիտմիության ակտիվի ժողովին արած իր ղեկուցման մեջ Ս. Մ. Կիրովը գլխովին ջախջախում ե գինովյեվականների բոլոր խորամանկությունները և կոչ ե անում կոմյերիտմիությանը դնալ մոլջ կուսակցության հետ համախմբման և միասնականության ճանապարհով:

«Մենք տեսնում ենք, մոր Լենինգրադի պրոլետարիատը և Լենինգրադի կոմունարներն արդեն այդ ճանապարհով են դնացել, և շատ որեր չեն անցնի, ընկերներ՝, յերբ Լենին-

գրադի ամբողջ հարյուր—հազարավոր կազմակերպությունը՝ կուսակցության միլիոնանոց բոլոր անդամների հետ միասնաձայն, համախմբված մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի շուրջը, XIV համագումարի մորոչումները ձեռքին, համարձակորեն առաջ կընթանա և իրոք, ինչպես հարկն ե, բոլլեիկորեն, հեղափոխականորեն կալաշտպանի ընկեր Լենինի ավանդները, իսկ նրա հետևից կդնա և կոմյերիտմիությունը»:

1926 թվի փետրվարի 10-ին հավաքվում ե կուսակցական արտակարգ նահանգային կոնֆերենցիա, մորտեղ Լենինգրադի բոլլեիկները մերկացնում են գինովյեվական ուրողիցիայի օտախոսությունն ու խաբեբայությունը և իրենց լիակատար օրոտաստակամությունն են հայտնում՝ լենինյան Կենտկոմի և կուսակցության առաջնորդի—ընկեր Ստալինի մորձված դեկավաթյամբ մինչև վերջը պայքարել սոցիալիզմի գործի համար:

Պատասխանելով Մոսկվայի ղեկեպցիայի մոլջունին, ամբողջ կոնֆերենցիայի բուռն ծափահարությունների տակ Կիրովը հավաստիացնում ե Մոսկվայի ղեկեպցիային, մոր Լենինգրադի կազմակերպությունը, ձեռք-ձեռքի տված Մոսկվայի կազմակերպության հետ և մեր խորհրդային Միության մնացած բոլոր կազմակերպությունների հետ, կամրապնդի միլիոնանոց մեծ Համամիութենական Կոմունիստական (բոլլեիկների) Կուսակցությունը: Լենինգրադի բոլլեիկների ավելի քան 97%-ը լիովին հավանություն տվեց կուսակցության XIV համագումարի մորոչումներին և դատապարտեց գինովյեվական «նոր ուրողիցիան»: Վերջինս արդեն այն ժամանակ ներկայացնում եր՝ առանց բանալի դեներալներ:

Կիրովը—Կենտկոմի Հյուսիս-արևմտյան բյուրոյի քարտուղարն ե և Լենինգրադի նահանգային կոմիտեյի առաջին քարտուղարը, Լենինգրադի բոլլեիկները, Լենինի քաղաքի պրոլետարները դեկավարը:

«Թանկագին ընկերներ,—գրում եր Կիրովը բողլեցիներին Լենինգրադից 1926 թվի փետրվարին:—Մոտ որերս ավարտվեց Արտակարգ նահանգային կուսկոնֆերենցիան, մորտեղ տրվեցին Լենինգրադի կուսկազմակերպության՝ կուսակցության XIV համագումարից հետո կատարած աշխատանքի հանրադրումները: Գուրս յեկավ, մոր համագումարը վերջանալու որից անցած վեց շաբաթվա ընթաց-

քում Լենինգրադի հարյուր հազարից ավելի կոմունարները լիովին լուծեցին իրենց առաջ դրված խնդիրը: Նրանք ընդհանրապես դնահատեցին կուսակցության նոր ուղիքից խախտման ամբողջ ելույթները և վճռաբար, ինչպես և պետք էր սպասել, սլաշտպան կանգնեցին համագումարի բոլոր վորոշումներին, զրկելով քաղաքական վորեն վարկից համագումարի իրենց գեղեցիկային...»:

1926 թվականը հեշտ տարի էր Լենինգրադի կազմակերպության համար: Վարկի վեր դնում էր կուսակցական շարքերի վերականգնումը: Կուսակցական լայն մասսաների պահանջով՝ ռաշոններում, դործարաններում, ցեխերում, պրոֆսիոնալներում, կոմյերիտիստների մեջ ղեկավար պոստերից հեռացվում էին քաղաքական սնանկները—զինովյեական արբանյակները: Ղեկավար աշխատանքի էին առաջ քաշվում հարյուրավոր, հազարավոր նոր ընկերներ:

Այս վիթխարի վերականգնման մեջ ամեն տեղ և ամենուրեք Կիրովի ուղղությունն սովոր ձեռքն է, նրա սրատես աչքը: Նա աշխարհում գնում է մարդկանց, արագ դնահատում ու վրա կարելի չէ հաստատ հույս դնել: Զրուցում է մեկի հետ, մյուսի հետ, յերրորդի հետ, քաջալերում է խորհրդով, իր ջերմ և հաստատուն ժպիտով, ընկերաբար ուղղում է թուալին քայլերի հնարավոր սխալները, բոլորին ներշնչում է նույն վրասահությունը, վրով լեցուն էր ինքը՝ իր անձնական օրինակով, իր խոսքով և խորհրդով յուրաքանչյուրի մեջ նա բարձրացնում է յեռանդը, հսկայական նվիրվածությունը կուսակցությանը, պրոլետարական հեղափոխության մեծ դործին:

Այդ դժվարին ժամանակում Կիրովի կազմակերպչական սքանչելի տաղանդը ծավալվում է իր բամբոջ վրայով: Ոպդիցիոներներին մարգարեություններն՝ աշխատանքի իր թե անխուսափելի փլուզման մասին, ղինովյեականների լպիրշ հայտաբարություններն այն մասին, թե առանց նրանց Լենինգրադի կազմակերպությունը չի կարող յուրա գնալ, իրականում հերքվեցին:

Զինովյեական մոնթերի հեռացումը, մոնթեր, վորոնք բոլոր ուժերը լարում էին, վորպեսզի վիժեցնեն սոցիալիստական շինարարության մեծ դործը, վորոնք ճնշում էին լայն մասսաների ակտիվությունն ու նախաձեռնությունը, լենինյան քաղաքականությունը նենդափոխում էին հակակուսակցական օդիտիկանությունամբ, ղինովյեականների տեղ կուսակցության շարքա-

յին անդամներից նոր թարմ աշխատողների մասսայի առաջընթացում մեկեն բերեց աշխուժություն, կայտառություն, բարձր հետաքրքրականություն, աշխատանքի վերելք ամենուրեք առանց բացառություն:

Իր՝ Լենինգրադ կազմակերպչական ուղիք մեկ տարի հետո, 1927 թվի հունվարին, Կիրովը, նշելով աշխատանքի բոլոր բնագավառներում ձեռք բերված աներկրա հաջողությունները, կուսակցական նահանգային XXIV կոնֆերենցիայի անունից լիակատար իրավամբ հայտարարում է.

«Մենք, ընկերներ, արդեն կարող ենք հաստատ ասել, վոր այժմ վերացված են այն յերեքումները, այն տատանումները, այն անխտահությունը, վոր կային մեր կուսակցության առանձին ողակներում»:

«... ոպդիցիայի համար դեպի Լենինգրադ տանող քանապարհի վրայի ուղեփակոցը փակված է. վերջնականապես փակված է»:

Կուսակցության կողմից ղրվելով Լենինգրադի կազմակերպության ղլուխ, Կիրովն արագորեն կողմնորոշվում է նոր իրադրության մեջ և ամբարար, վստահարար առաջ է քաշում այն հարցերը, վորոնցից հսկայական չափով կախված է Լենինգրադի արդյունաբերության ապագան, հենց իր, Լենինգրադի, վորպես յերկրի խոշորագույն պրոլետարական արդյունաբերական կենտրոնի, ապագան:

Ամենախոր համոզմունքով լի դեպի մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության վերաբերյալ Լենինի—Ստալինի ուսմունքի ճշմարտությունը, Կիրովը «Կրամնի պուտիլովեցի» 125-ամյակի առթիվ ուղղած ուղերձում հայտարարում է.

«Մենք աճում ենք, մենք ամբապնդվում ենք, մենք կառուցում ենք սոցիալիզմ, մենք այն կկառուցենք և դրա հետ մեկտեղ հաջող վախճանի կհասցենք նաև համաշխարհային պրոլետարական հեղափոխության դործը»:

Այն բացառիկ մեծ ուշադրությունը, վոր կուսակցության Կենտկոմը և անձամբ ընկեր Ստալինը հատկացնում էին Լենինգրադի կուսակցական կազմակերպությանը և Լենինգրադի արդյունաբերության բարձրացմանը, հսկայական դեր խաղաց հաջողությունամբ կատարելու այն պատասխանատու առաջադրանքը, վորը կուսակցության կողմից ղրված էր Կիրովի վրա:

1926 թվի ապրիլին Լենինգրադ է ժամանում ընկեր Ստալինը և խորհրդային Միության տնտեսական դրության մասին (Կենտ-

կոմի ապրիլյան սլենուծի աշխատանքի մասին) ղեկուցումով հանդես ե գալիս սկզբում Լենինգրադի նահանգկոմի սլենուծում, իսկ ապա Լենինգրադի կուսակցական ակտիվի ժողովում:

Գլխովին ջախջախեց ոսպողիցիոներներին անարգ դեմադուրեան, վորոնք լիտիաբար ճշում եյին, թե Լենինգրադին սկսել են կարեւորություն չտալ, թե Լենինգրադի արդյունաբերությանն ու Լենինգրադի պրոլետարներին յերրորդական դեր են հատկացնում ինդուստրացման ընդհանուր սլանում: Այդ բանում մեծ դեր խաղաց ընկեր Ստալինի ղեկուցման առթիվ Լենինգրադի նահանգկոմի սլենուծի կողմից ընդունված բանաձևը: Բանաձևը մատնանշում ե .

«Արտադրության միջոցների արտադրության հատուկ նշանակությունը դարգացման ներկա շրջանում պահանջում ե մեծ ուշադրություն նաե դեպի Լենինգրադի արդյունաբերությունը, վորը հանդիսանում ե մեր Միության մեջ մեքենաշինության գլխավոր կենտրոններից մեկը»:

Ընկեր Ստալինի ղեկուցումից կարճ ժամանակ անց Կիրովը յելույթ ե ունենում մետաղագործների համագումարում ե ամբողջ լայնությամբ հարց ե դնում յերկրի ինդուստրացման մեջ Լենինգրադի ե Լենինգրադի արդյունաբերության դերի մասին: Սերգեյ Միրոնովիչն ասում ե .

«... մեր կուսակցությունը, իսկ նրա հետ մեկտեղ, իհարկե, նաե բանվոր դասակարգը՝ մեր աշխատանքի հետադա շրջանում պետք ե քացառիկ ուշադրություն կենտրոնացնեն Լենինգրադի գործարանների վրա, Լենինգրադի փարիկաների վրա»:

Այդ նույն հարցին Կիրովն անդրադառնում ե 1926 թվի նոյեմբերին՝ պրոֆմիությունների նահանգային համագումարի հանդիսավոր նիստում արտասանած իր ճառում .

«... Լենինգրադ քաղաքն ու Լենինգրադի արդյունաբերությունը յերկրի ինդուստրացման գործում պետք ե խաղան, մոտավորապես, հենց նույն այն դերը, վորպիսին խաղացել են այս քաղաքում Լենինգրադի պրոլետարները մեր մեծ հեղափոխության բոլոր ետապներում»:

Կիրովի մոտ խոսքը գործից յերբեք չի բաժանվում:

Կիրովն որը-որին հետևում ե Լենինգրադի խոշորագույն գործարաններին՝ «Կրասնի պուտիլովեց»-ի, «Ելեկտրոսիլա»-յի, Ստալինի անվան գործարանի, «Բուլչեիկ»-ի, Բալթիական գործարանի ե ուրիշ շատ ու շատ գործարաններին աշխատանքին: Հումքի,



Ընկերներ Գ. Կ. Որջակայիսին, Ի. Վ. Ստալինը, Վ. Մ. Մոլոտովը,
Ս. Մ. Կիրովը, Կ. Յե. Վորոշիլովը, Լ. Մ. Կազանովիչը
և Վ. Վ. Կուլիկովը: Համագումարի ժամանակ
1934 թ.



վառելիքի պակասություն, ամեն տեսակի նյութերի պակասություն ամենածանր ժամանակաշրջաններում կիրովն անձամբ է կազմակերպում ածխի, չուգունի, նավթի հայթայթումը, առանձնապես դժվարին ժամանակաշրջաններում ինքն է վորջում գործարաններին դեֆիցիտային հումք բաշխելու կարգը:

Չնայած բոլոր դժվարություններին, Լենինգրադի արդյունաբերությունը արագորեն սարն իվեր և բարձրանում իր արտադրանքի թե՛ քանակով և թե՛ վորակով:

1926 թվի դեկտեմբերին Մոսկվա-Նարվա ուղյակի կոնֆերենցիայում կիրովն որինական հպարտությամբ խոսում է մեր արդյունաբերությանը՝ մինչհեղափոխական ժամանակում անձանթ արտադրությունների յուրացման մասին՝ Մետաղագործական գործարանում (այժմ Ստալինի անվան գործարան) չողետուրբներների կառուցման մասին, «Կրասնի պուտիլովեց»-ում տրակտորների արտադրության կազմակերպման մասին, այն մասին, վոր Լենինգրադում ստեղծվում է մի վիթխարի ճյուղ, «...վորին մեր 135 միլիոնանոց յերկրում պատկանում է, անտարակույս, հսկայական ապագա. այդ կարգավորվող տեքստիլ մեքենաշինությունն է»:

Կիրովը ժլատարար, հակիրճ խոսքերով և հիշատակում գեկուցման մեջ այդ կարեւորագույն նվաճումները, և նա, իհարկե, խոսք անդամ չի ասում այն մասին, վոր ինքը տասնյակ անգամ յեղել էր Մետաղագործական գործարանում, «Բոլշեվիկ»-ում, Կարլ Մարքսի անվան գործարանում և հատկապես «Կրասնի պուտիլովեց»-ում, վոր նա ինքն էր հետեւում տառացիորեն յուրաքանչյուր նոր տուրբինին, վոր նա անձամբ առավորոյան կանուխ, իսկ ե՛լ ամելի հաճախ ուշ գիշերով բազմիցս ինժեներների և տեխնիկների հետ մեկտեղ, հին բանվոր-արտադրողների հետ մեկտեղ «Կրասնի պուտիլովեց»-ի տրակտորային ցեխերում ուշի-ուշով աչքի յեր անցկացնում նոր կազմակերպվող արտադրության յուրաքանչյուր մասնիկը, կշռադատում, թե ինչպես հաղթահարի անսպասելիորեն ծագած այս կամ այն դժվարությունը, միշտ գտնելով հարցի լուծման ամենաարագ և ամենաճիշտ յեղանակը:

Կիրովի անմիջական դեկավարությունը, նրա ամենորոյա ողնությամբ ԽՍՀՄ-ում առաջին անգամ կազմակերպվեց «Ֆորդոն պուտիլովսկի» տրակտորների սերիային արտադրությունը: Այդ՝ խորհրդային արդյունաբերության, խորհրդային մեքենաշինություն անհատական էր: Լենինգրադի պրոլետարիատը կարող էր պարծենալ նրանով, վոր խորհրդային առաջին տրակտորները

խորհրդային դաշտեր են գնացել Լենինգրադից, պատրաստված Լենինգրադի գործարանում Լենինգրադի պրոլետարների ձեռքով, վոր խորհրդային նոր երկտրոկայանների առաջին հզոր տուրբինները գուրս են յեկել Լենինգրադի Մետաղագործական գործարանից: Լենինգրադի բազմաթիվ այլ գործարաններ յուրացնում եյին նոր մեքենաների, նոր գազըյահներ, նոր բարդ ազրե-գատներ, արտադրությունը: Գործարաններում ձեռնամուխ յեղան նոր կորպուսների կառուցմանը, դրվում եյին նոր գազըյահներ, արտասահմանյան սարքավորում: Լենինգրադն սկսեց սարքավորման ամենապատասխանատու պատվերներ ընդունել նոր կառուցումների համար:

Ընկեր Ստալինի դիտարկած լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ, Կիրովի ամենորյա ղեկավարությամբ Լենինգրադի արդյունաբերությունը, Լենինգրադի պրոլետարները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, գնում եյին դեպի նորանոր հաղթանակներ:

Այսպես, Գործերով Կիրովը ջախջախում եր ուղղիցիայի կապիտալանտական նեխված դիրքորոշումները, նրա պանիկորական գուշակությունները, այսպես, հզոր շինարարական աշխատանքի ամենորյա արակտիկայում Կիրովը միավորում ե համախմբում եր Լենինգրադի կուսակցական ե վոչ-կուսակցական բոլշեիկներին կուսակցության Կենտկոմի շուրջը, ընկեր Ստալինի շուրջը:

Լենինգրադի արդյունաբերությունը հուռ աշխատում եր բերովի վառելիքով ե բերովի հումքով: Կիրովը Լենինգրադում իր աշխատելու առաջին խսկ տարում համարձակ ե վճռաբար հարց ե գնում վառելիքի տեղական տեսակներով սնվող սեխական եներ-դետիկ բազա ստեղծելու մասին ե արդյունաբերության համար հումքի նոր աղբյուրներ ե նոր տեսակներ գտնելու մասին:

Կիրովը հասնում ե այն բանին, վոր Վոլխովի հիդրոէլեկտրոկայանի ձգձգված շինարարությունը, վերջապես, 1926 թվի ղեկավարմանը ավարտվում ե:

«Պրոլետարիատի ստեղծած հիդրոկայանը,—ասում ե Կիրովը Վոլխովի երկտրոկայանի բացմանը,—նոր, կենդանի ուժ կտա մեր արդյունաբերությանը...

Բայց մեր յերկրի համար այդ բոլորը դեռ քիչ ե: Բռնել ենք միայն առաջին քննությունը: Բռնելով այն, մենք պետք ե շարունակենք առաջ գնալ համարձակ ե վստահ քայլվածքով»:

Կիրովն անմիջական մասնակցություն ե ունենում Սվիրի վրա հզոր հիդրոէլեկտրոկայան կառուցելու հարցի լուծման մեջ ե ամենաուշագիւր կերպով հետևում ե աշխատանքների ընթացքին:

Հաղթահարելով շատ «փորձված արակտիկներին» կասկածանքները, Կիրովը համարձակորեն հարց ե դնում կառուցել աշխարհի ամենահյուսիսային—անդրբեռային հիդրոէլեկտրոկայան Նիվա գետի վրա, ինչպես ե մի կայան ել ավելի հետո հյուսիսում—Տուլոմա գետի վրա:

Նիվայի ե Տուլոմայի երկտրոկայաններն այժմ արդեն ապահովում են Մուրմանսկի, Մուրմանսկի (այժմ Կիրովյան) յերկաթուղու հյուսիսային տեղամասի երկտրոֆիկացիան ե բազա յեն հանդիսանում Կոլա թերակղզու հզոր ինդուստրիալ զարգացման համար:

Կիրովը հանդիսանում ե Լենինգրադին եներդիւ տվող Դուրբովսկի հզոր երկտրոկայանի (տորֆով աշխատող) կառուցման նախաձեռնողը: Կիրովի պնդումով, նրա ամենորյա հսկողությամբ, նրա ուղնությամբ վերակառուցվում են Լենինգրադի մյուս ավելի վաղ կառուցված երկտրոկայանները, շատ ու շատ անգամ մեծանում ե նրանց հզորությունը:

Կիրովի յեռանդին ու հաստատակամությանն ենք մենք պարտական, վոր 1934 թ. աշնանն ու ձմեռը, Կիրովի կյանքի վերջին տարում, Լենինգրադի արդյունաբերությունը շատ տարիների ընթացքում առաջին անգամ լիովին ապահովվեց երկտրոններով:

Խնդիր դնելով բերովի քարածուին ու նավթը տեղական վառելանյութերով փոխարինելը, Կիրովն ամենորյա համառ պայքար ե մղում տորֆի հանույթը ընդարձակելու ե տորֆային վառելանյութը լայնորեն արմատացնելու համար, այստեղ ես հաղթահարելով դանդաղաբար տնտեսավարների վիթխարի դիմադրությունը, վորոնք չեյին ցանկանում ջանք թափել յուրացնելու համար վառելանյութի այդ տեսակը, վորը հատուկ հոգացողություն եր սրահանչում Լենինգրադի կլիմայական անբարենպաստ պայմաններում:

Կիրովն ինքը կիւղ դբադվում եր հերձաքարի արդյունաբերությամբ, գնում եր Դուովի հերձաքարի հանքատեղերը, թաց ե սայթաքուն սանդուխքով ինքն իջնում փորձնական անցքի բունը ե անձամբ, անմիջականորեն կատարած ստուգման հիման վրա հաստատեց, վոր հերձաքարերը կարելի յե ե պետք ե մշակել, ե վոր նրանք կծառայեն Լենինգրադի համար յվորպես վառելիքի ե սպեցիֆիկ հումքի կարևոր աղբյուրներից մեկը:

խորհրդային դաշտեր են դնացել Լենինգրադից, սպարապուլած Լենինգրադի գործարանում Լենինգրադի սրտխտարները ձևով, վոր խորհրդային նոր ելեկտրոկայանների առաջին հզոր տուրբինները գուրս են յեկել Լենինգրադի Մետաղագործական գործարանից: Լենինգրադի բազմաթիվ այլ գործարաններ յուրացնում եյին նոր մեքենաների, նոր դաղդյահներ, նոր բարդ ազրե-դատներ արտադրությունը: Գործարաններում ձեռնամուխ յեղան նոր կտրտուներ և կտուցմանը, դրվում եյին նոր դաղդյահներ, արտասահմանյան սարքավորում: Լենինգրադն սկսեց սարքավորման ամենապատասխանատու պատվերներ ընդունել նոր կառուցումներ և համար:

Ընկեր Ստալինի դիւսալորած լենինյան Կենտկոմի դեկալարությամբ, Կիրովի ամենորյա դեկալարությամբ Լենինգրադի արդյունաբերությունը, Լենինգրադի սրտխտարները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, գնում եյին դեպի նորանոր հաղթանակներ:

Այսպես, Գործերով Կիրովը ջախջախում եր ուղղիցիայի կապիտալանտական նեխված դիրքորոշումները, նրա պանիկոզական գուշակությունները, այսպես, հզոր շինարարական աշխատանքի ամենորյա սրտխտակայում Կիրովը միախորում և համախորում եր Լենինգրադի կուսակցական և վոչ-կուսակցական բոլշևիկներին կուսակցության Կենտկոմի շուրջը, ընկեր Ստալինի շուրջը:

Լենինգրադի արդյունաբերությունը հնուց աշխատում եր բերովի վառելիքով և բերովի հումքով: Կիրովը Լենինգրադում իր աշխատելու առաջին խի տարում համարձակ և վճռաբար հարց ե գնում վառելիքի տեղական տեսակներով սնվող սեխական եներ-դետիկ բազա ստեղծելու մասին և արդյունաբերության համար հումքի նոր աղբյուրներ և նոր տեսակներ գտնելու մասին:

Կիրովը հասնում ե այն բանին, վոր Վոլյսովի հիդրոէլեկտրոկայանի ձգձգված շինարարությունը, վերջապես, 1926 թվի դեկտեմբերին ավարտվում ե:

«Պրոլետարիատի ստեղծած հիդրոկայանը,—ասում ե Կիրովը Վոլյսովի ելեկտրոկայանի բացմանը,—նոր, կենդանի ուժ կտա մեր արդյունաբերությանը...»

Բայց մեր յերկրի համար այդ բոլորը դեռ քիչ ե: Բռնել ենք միայն առաջին քննությունը: Բռնելով այն, մենք պետք ե շարունակենք առաջ գնալ համարձակ և վստահ քայլվածքով:

Կիրովն անմիջական մասնակցություն ե ունենում Սվիրի վրա հզոր հիդրոէլեկտրոկայան կառուցելու հարցի լուծման մեջ և ամենաուշադիր կերպով հետևում ե աշխատանքների ընթացքին:

Հաղթահարելով շատ «փորձված պրակտիկներին» կասկածանքները, Կիրովը համարձակորեն հարց ե գնում կառուցել աշխարհի ամենահյուսիսային—անդրբեկուսյին հիդրոէլեկտրոկայան Նիվա գետի վրա, ինչպես և մի կայան ել ավելի հեռու հյուսիսում—Տուլոմա գետի վրա:

Նիվայի և Տուլոմայի ելեկտրոկայաններն այժմ արդեն ապահովում են Մուրմանսկի, Մուրմանսկի (այժմ Կիրովյան) յերկաթուղու հյուսիսային տեղամասի ելեկտրիֆիկացիան և բազա յեն հանդիսանում Կոլա թերակղզու հզոր ինդուստրիալ զարգացման համար:

Կիրովը հանդիսանում ե Լենինգրադին եներդիւս տվող Գուրլովսկի հզոր ելեկտրոկայանի (տորֆով աշխատող) կառուցման նախաձեռնողը: Կիրովի պնդումով, նրա ամենորյա հսկողությամբ, նրա ուղնությամբ վերակառուցվում են Լենինգրադի մյուս ավելի վաղ կառուցված ելեկտրոկայանները, շատ ու շատ անգամ մեծանում ե նրանց հզորությունը:

Կիրովի յեռանդին ու հաստատակամությանն ենք մենք պարտական, վոր 1934 թ. աշնանն ու ձմեռը, Կիրովի կյանքի վերջին տարում, Լենինգրադի արդյունաբերությունը շատ տարիների ընթացքում առաջին անգամ լիովին ապահովվեց ելեկտրոէներգիայով:

Խնդիր գնելով բերովի քարածուին ու նավթը տեղական վառելանյութերով փոխարինելը, Կիրովն ամենորյա համառ պայքար ե մղում տորֆի հանույթը ընդարձակելու և տորֆային վառելանյութը լայնորեն արժատացնելու համար, այստեղ ևս հաղթահարելով դանդաղաշարժ տնտեսավարների վիթխարի դիմադրությունը, վորոնք չեյին ցանկանում ջանք թախել յուրացնելու համար վառելանյութի այդ տեսակը, վորը հատուկ հոգացողություն եր սրահանջում Լենինգրադի կլիմայական սնրարենդաստ պայմաններում:

Կիրովն ինքը կիս դրադվում եր հերձաքարի արդյունաբերությամբ, գնում եր Գդովի հերձաքարի հանքատեղերը, թաց և սայթաքուն սանդուխքով ինքն իջնում փորձական անցքի բունը և անձամբ, անմիջականորեն կատարած ստուգման հիման վրա հաստատեց, վոր հերձաքարերը կարելի յե և պետք ե մշակել, և վոր նրանք կծառայեն Լենինգրադի համար փորպես վառելիքի և սպեցիֆիկ հումքի կարևոր աղբյուրներից մեկը:

Կիրովի նախաձեռնութեամբ սկսվում է Տիֆլիսի բոքսիտների մշակումը և նրա անմիջական ղեկավարութեամբ ստեղծվում է Վոլխովի, Միության մեջ առաջին, ալյումինի գործարանը:

Ճիշտ այդպես էլ, յերբ կասկածի տակ զբվեց ապատիտի հանքերը Բեկոսային շրջադժից հյուսիս գտնվող սառած տունդրայում մշակելու հնարափորութեան հարցը, Սերգեյ Միլոնովիչը հենց ինքը մեկնեց խորինի, հենց ինքը ստուգեց ամեն ինչ և վորոշեց՝ ապատիտները կարելի չե ու պետք է մշակել, և այն ել անհապաղ:

Սերգեյ Միլոնովիչին և պարտական մեր յերկիրը խորինի տունդրայում գտնվող հարստագույն, համաշխարհային նշանակութուն ունեցող ապատիտների շերտերի մշակման կազմակերպումը: Կիրովի անձնական միջամտութեան շնորհիվ սառած տունդրայում, Անդրբեկոսային մարզերի դաժան պայմաններում ինդուստրիալ դիզանտ կոմբինատ և նոր խոշոր արդյունաբերական կենտրոն ստեղծելու հարցը լուծվեց հաստատաբար ու անդառնալիքներ:

Վիթխարի յե Կիրովի դերը մեր Հյուսիսի հարստութիւնների յուրացման մեջ: Նրա ցուցումներով ծավալվում է Մուրմանսկի ձկնորսարանների, Մուրմանսկի հուժկու ուռկանարկային նավատորմի, Մուրմանսկի չսառչող նավահանգստի շինարարութիւնը, Մուրմանսկի յերկաթուղու և հենց Մուրմանսկ քաղաքի զարդացումը, մի քաղաք վորը փոխարկվել և արդյունաբերական և կուլտուրական խոշոր կենտրոնի հեռավոր և մռայլ Հյուսիսում:

1932 թվի հունվարին Լենինգրադի մարզային IV կուսկոնֆերենցիային արած իր գեկուցման մեջ Կիրովն որինական հպարտութեամբ և խոսում Լենինգրադի մարզի ինդուստրացման հաջողութիւնների մասին.

«...Լենինգրադից հեռու, Բեկոսային շրջադժից հյուսիս, վերջին յերկու տարվա ընթացքում ծավալվում է խորինի վիթխարազույն կոմբինատը (ապատիտներ):

Ձարգանում և նոր արտադրութիւն, արտադրութեան նոր ճյուղ, և այդ բազայի վրա խորինի կոմբինատի շուրջն ստեղծվում է մի ամբողջ նոր քաղաք, 30-հազարանոց բնակչութիւն ունեցող քաղաք: Մերձափորագույն ապագայում իր աշխատանքը պիտի սկսի Ալյումինի կոմբինատը. ընդարձակում են աշխատանքը բոքսիտի հանքերը, լայնորեն են ծավալում վառելիքի տեղական յուրաքանչյուր տեսակ հանույթի աշխատանքները...

խորինի որինակը առանձնապես հատկանշական և մեր

յերկրի արտադրողական ուժերի հետագա վերելքի տեսակետից:

Այս՝ ամենաակնառու ապացույցն է այն բանի, վոր կապիտալիստական սիստեմի տապալման հետևանքով ստեղծվում է արտադրողական ուժերի ծավալման չտեսնված թափ: Յերկրորդ հնգամյալում մեմֆ ցույց կտանք, վոր յերկրի վրա չկա այնպիսի մի տեղ, վորը կարելի չլիներ սոցիալիզմին իսպաս դնել»¹:

Կիրովի ուղղակի ցուցումներով և պահանջով կատարվում է Պոլա թերակղզու գետնի մեջ թաղնված հարստութիւնների լայն հետազոտութիւնը, վորը հսկայական արդյունքներ տվեց. հայտաբերեցին պղնձա-նիկելային հանքերի շերտեր (այժմ արդեն մշակվող), յերկաթ, կապար, հաղվաքյուտ հողեր և այլն: Կուսակցութեան XVII համագումարում արտասանած իր նշանալիոր ճառում Կիրովն ասում է.

«Նույնիսկ այս մեկ որինակով կարելի չե հասկանալ, թե սոցիալիստական հիմքերի վրա հենված արտադրողական ուժերի հետագա վերելքը ինչպիսի անընդգրկելի չափերով կարող է ծավալվել: Այն, ինչ յերեկ թվում էր միանգամայն անգարթելի, ուր, ինչպես ասում են՝ դուռն իր թևով չէր հասել, ուր ցարական ժամանակ միմիայն արտորէին քշում մարդկանց,—այնտեղ այժմ բոլշևիկների կամքով, բնական հարստութիւնների (ապատիտներ, յերկաթ, մոլիբդեն, փայլար, տորիում, տիտան և ուրիշ...) բազայի վրա, կիսատունդրայում, ուր մինչև այժմ մարդ վորք չի դրել, ստեղծված է անդրբեկոսային շրջանի նոր, արագորեն աճող ինդուստրիալ կենտրոն»:

Կիրովն ամենաակտիվ մասնակցութիւն է ունենում ընկեր Ստալինի նախաձեռնութեամբ սկսված՝ Բալթիկ ծովը և Լենինգրադը Սալիտակ ծովի և Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի հետ կապող Բելոմոր-Բալթիական ջրանցքի շինարարութեանը:

Շատ ջանք ու աշխատանք նվիրեց Կիրովը Լենինգրադի մարզի դյուղատնտեսութեան բարձրացմանը, կուլեկտիվացման քանակական և վորակական հաջողութիւններին: Նա հաստատորեն, պարզորոշ խնդիր դրեց Լենինգրադի մարզը ապագականից արտադրողական մարզի փոխարկելու մասին: Անդադար հոգեւոր տա-

1 Ընդգծումն այստեղ և այսուհետեւ, առանձին նշված դեպքերից դատ, մերն է:—ԽԱՐ:

նում գյուղատնտեսության մեքենայման մասին: Անձամբ դեկա-
վարում եր մեքենա-արակտորային կայանները կազմակերպումը:

Սերգեյ Միրոնովիչը անմիջական դեկավարությամբ Լենին-
գրադի մարզում համատարած կոլեկտիվացման հիման վրա իրա-
կանացի կուլակության, վորպես դասակարգի, լիկվիդացիան:

Լենինգրադի ակտիվի ժողովներում, կուլակցության Լենին-
գրադի մարզային կոմիտեյի պլենումներում Սերգեյ Միրոնովիչն
ուշագիշտ է մանրամասն կերպով քննության է առնում կոլտն-
տեսային շինարարության բոլոր հարցերը, խորադանում գյու-
ղում տարվող աշխատանքի թերությունները, յուրաքանչյուր տվյալ
մոմենտին կարողանալով գտնել հիմնական ոգակը, առաջին պլա-
նը մղել ամենակարևորը, ամենադժարները: Կիրովի այս յեկույթ-
ները, ասես լուսարձակի ճառագայթով, լուսափորում եյին դժ-
վարությունների և սխալների հաղթահարման ճանապարհը, ներ-
շնչում եյին հսկայական կայտառություն, ցանկություն՝ ձեռքե-
րը քշած աշխատելու, կազմակերպում և համախմբում եյին
մարդկանց համառ պայքարի՝ կատարելու համար բնկեր Սոա-
լինի դրած խնդիրը՝ կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան,
իսկ կոլտնտեսականներին՝ ունեւոր:

Սքանչելի յեն Լենինգրադի մարզի հարվածային-կոլտնտեսա-
կանների համագումարներում Սերգեյ Միրոնովիչը արտասանած
ճառերը: Այդ ճառերը պարզ են, հստակ և լեցուն ինչ-որ առան-
ձին համոզելիությամբ:

«Պետք է հասկանալ, վոր յեթե կան մարդիկ,—ասում
է Կիրովը Լենինգրադի մարզի և Կարելիայի հարվածային-
կոլտնտեսականների I համագումարում 1933 թվի մար-
տին,—վորոնք կարծում են, թե գտնվելով կոլտնտեսու-
թյան մեջ, կարելի չէ նոր կյանք կառուցել՝ նստելով վա-
ռարանի մոտ, ապա այդ բանից մոչնչ գուրս չի դա:
Վոչ մի կերպ գուրս չի դա: Վոչ մի տեղ, վոչ մի սո-
ցիալիստական գրքուկում չի գրված, թե, չախատելով,
աղնվարար չբանելով, կարելի չէ նոր կյանք կառուցել:
Այնտեղ գրված է ճիշտ հակառակը՝ պետք է աշխատել,
մենք բոլորս և ամեն մեկս պետք է աշխատենք, իսկ նրան,
ով գերադասում է վառարանի մոտ նստել՝ վոչ միայն
պետք է քչել վառարանի մոտից, այլև, յեթե նա չի կարող
ուղղվել,—ապա պետք է քչել նաև կոլտնտեսությունից:

...Յեթե դու ուզում ես լինել կոլտնտեսության ար-
ժանավոր անդամ, ապա դու պետք է աշխատես ինչպես

հարկն է, բոլշևիկոբն,— ինչպես մենք ենք ասում:

Համոթ մեր դեռ պատահում են այնպիսի կոլտնտեսու-
թյուններ, վորոնք պարապ-սարապ են մնում թե Կիրակո-
սի և թե Մարկոսի տոնին, այլև բոլոր սրբերի առթիվ,
վորոնք յուրաքանչյուր տոնի առթիվ քեֆեր են սարքում,
վորի ժամանակ յերիտասարդությունը ամբողջ զիշերներ
պարեր է սարքում կամօջին, իսկ հետո՝ մի ամբողջ ու
հարկավոր է «հանգստանալ»...

Միմիայն նա՛ յե բոլշևիկոբն աշխատում, ով ամենից
բարձր է դասում սոցիալիստական շինարարության շահե-
րը, ում համար ամենից ավելի քանգ են մեր բնդհանուր
գործի շահերը, ով դիսցիպլինայի, աշխատանքի ավելի
բարձր արտադրականության, կալոնտեսային բարիքի
հանդեպ որինակելի վերաբերմունքի որինակ է տալիս»:

Բերելով մի տարում 35 աշխուր վաստակած կոլտնտեսականի
որինակը, Սերգեյ Միրոնովիչը շարունակում է.

«Յես ձեզ հարցնում եմ—ինչ սոցիալիզմ կարող է ստաց-
վել, յեթե մի տարում մարդ 35 ու չախատի:

Կալվածատիրոջ մոտ այդ այդպես էր դուրս գալիս
նրա համար, վոր նա ուներ հաղարավոր գեոյատին հողեր,
և ինքը մոչնչ չէր անում, իսկ մարդիկ աշխատում եյին
նրա փոխարեն: Կալվածատերը տարվա բոլոր 365 ուրը պրո-
դուկչիկ էր և վատ չէր ապրում: Բայց յեթե մենք ձեզ
հետ մեկտեղ այնպես աշխատենք, ինչպես կալվածատերը,
կամ տարվա մեջ աշխատենք 35 ու, դրանից մոչնչ գուրս
չի դա և մեր կոլտնտեսությունը վոտքերը կձգի»:

Կիրովն առանձնապես յեռանդուն կերպով պայքարում է
կանանց՝ կոլտնտեսություններում ակտիվ աշխատանքի ներգրա-
վելու համար.

«Կոլտնտեսուհիները կոլտնտեսությունների ուժի ահա-
գին աղբյուր են: Յեթե կանանց աշխատանքը դրվի ինչպես
պետքն է, յեթե արվի այնպես, վորպեսզի այն պարտակա-
նությունը, վորն բնկած է կնոջ վրա՝ յերեխաներ ծնելը,—
իսկ առաջիկայում նմանապես հարկավոր կլինի ծնել, վո-
րովհետեւ յերեխաները մեզ հարկավոր են,—չխանգարեր
կնոջը մասնակցել կոլտնտեսային բնդհանուր աշխատան-
քին, ապա կոլտնտեսային շինարարությունն առաջ կդնա
ե՛լ ավելի արագ քայլերով:

Հարկավոր է գործն այնպես դնել, վոր կինը հարկա-

գրված չլինի չափազանց շատ ուժ վատնել յերեսայի վրա, վորպեսզի հենց վոր այդ փոքրիկ բոլշևիկը ծնվի, մորն ողնուկթյուն հասցվի և դործն այնպես կազմակերպվի, վոր թե՛ յերեսան լավ աճի և թե՛ մայրը կարողանա աշխատել:

Հարկավոր է խիստ ծավալել մանկամսուրներն և մանկական ոջախները: Այդ են պահանջում ինչպես մեր պարտականությունները յերեսաների վերաբերմամբ, վորոնք հենց նոր մեզ վողջունեցին, այնպես էլ կոլտնտեսություններում յեղած տնտեսական աշխատանքները: Յեթե մի փոքր լավ աշխատեք կոլտնտեսուհիների հետ, ապա դուք կտեսնեք, թե նոր ուժի ինչպիսի անսպառ աղբյուր կստանանք մենք:

Համազումարի մասնակիցները, կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները, Կիրովի ճառի ժամանակ նստել էյին չունչները պահած, վախենալով թե մի խոսք բաց չթողնեն, և հետո անասելի դարձանում էյին, թե այդ վորտեղից է, վոր Սերգեյ Միրոնովիչն այդպես խմանում է կոլտնտեսային բոլոր դործերը և կոլտնտեսականների բոլոր թաղուն մտքերն ու կասկածները, ասես թե դադունի ականջ և դրել նրանց խոսակցություններին ու վեճերին:

Կիրովն առաջինն առաջ քաշեց մեր Հյուսիսում լայնորեն ցորեն արձատացնելու խնդիրը և, տապալելով բաղձաթիվ սկեպտիկներին և ոպորտունիստների առարկությունները, լիակատար հաջողության հասավ այդ բնագավառում:

«Մենք պետք է լծվենք ցորենի մշակմանը շատ համարձակ և խիստ մճուկանորեն»,—հաստատորեն կրկնում էր Կիրովը:

«Ճիշտ էն՝, ընկերներ, թե մեր յերկրամասն ինչ—վոր առանձնապես աղբատիկ, լճային, ճահճոտ է: Չկա մի այնպիսի հող, վորը կարող ձեռքբերում՝ Խորհրդային իշխանության որով չկարողանա շրջվել մարդկության բարքության ոգտին: Մենք արդեն թափանցել ենք Բեռալին չրջագծից դեպի Հյուսիս և այնտեղ սկսում ենք յուրացնել սառած հողը, իսկ չյուրացնել մեր այստեղի հողերը—այդ մեզ համար պարզապես խայրառակություն կլինի»:

Կիրովը մշտապես իր տեսադաշտում էր պահում Լենինգրադի բաղձաթիվ գիտա—հետազոտական ինստիտուտների կարևորագույն աշխատանքները և հաճախ դժվարին բոպեյին ոգնության էր գալիս խիզախ հետազոտողներին: Տորֆի և հերձաքարի ոգտագործումը, կոքսացած տորֆով չուգունի ձուլումը, մետաղա—

յին մագնեզիոնի հանուկթը, նեֆելինի (վորը ապատիտի հանուկթի ժամանակ հանդիսանում է ծանր թափոն) ոգտագործման յեղանակները, փայտի թեփուկից եթիլասպիրտի ստացումը, պլաստմասսաների ոգտագործման նոր յեղանակները,—այս բոլորը և ելի տասնյակ այլ խոշոր պրոբլեմներ գրավում էյին Կիրովի ամենախոր ուշադրությունը, վորը հետևում էր ամեն ինչին, ոգնում բոլոր ուժերով և միջոցներով ամենից ավելի ակտուալ աշխատանքների կատարմանը:

Հենց Կիրովի անմիջական ոգնությամբ էր, վոր պրոֆեսոր Լեբեդեին հաջողվեց աջողակորեն ավարտել սինթետիկ կաուչուկի պրոբլեմը լուծող կարևորագույն աշխատանքը:

Բացառիկ շատ յեռանդ և ուժ, լարված աշխատանքի շատ որեր, շատ անքուն դիչերներ և նվիրել Կիրովը մեր Կարմիր բանակի և Կարմիր նավատորմի հզորության ամբացման դործին, Լենինգրադի և ամբողջ Խորհրդային Միության պաշտպանության ամրապնդմանը: Սերգեյ Միրոնովիչը հաճախ էր լինում կարմիր բանակային դրամասերում, համարյա ամեն տարի Կարմրագրոջ Բալթիական նավատորմի մանյովրների ժամանակ ընկեր Վորոշիլովի հետ մեկտեղ նա նավարկում էր «Մարատ» դժանավի վրա, էր բոլշևիկյան կորովի խոնքով բարձրացնելով կարմիր բանակայիններին և կարմիր—նավատորմայինների նոր յեռանդը՝ ռազմական տեխնիկայի համար մղած նրանց պայքարում:

«Լենինի քաղաքի բանվորների և Լենինգրադի կադմակերպության բոլշևիկների կողմից յեղարարական ջերմ վողջուն հզոր «Մարատ»-ի կարմիր—նավատորմայիններին, հրամանատարներին և քաղաշխատողներին,—գրում է Կիրովը, «Մարատ»-ի վրա կատարած հերթական նավարկումներից մեկից հետո թողնելով փառապանծ նավը,—Լենինգրադի պրոլետարները Հեն Կասկածում, վոր մեր պանծալի քաղաքի արթուն ժամապահը—կարմրագրոջ բալթիկցիները ամուր կերպով են տիրապետում ռազմական ու քաղաքական ուսմանը և դրանով կապահովեն մեր հաղթական սոցիալիստական ընդհանուր շինարարությունը մարտական Կոմունիստական կուսակցության և նրա փորձված ղեկավար ընկեր Ստալինի ղեկավարությամբ:

Կեցցե՛ն անվահեր մարտացիները»:

Ընկեր Կիրովը բոլոր հիմքերն ուներ 1934 թվի հունվարին Լենինգրադի մարզային V և քաղաքային II կուսկոնֆերենցիայում հայտարարելու:

«Թող բոլորն իմանան, ովքեր ուզում են իրենց անհուսալի գործերը կարգի գցել հորհրդային Միության հաշվին, վոր մենք կկարողանանք կազմակերպել հակառակորդի կատարյալ ջախջախումը և քակատումը»:

Մեր Կարմիր բանակը և մեր Կարմիր նավատորմը իրենց տեխնիկական ղեկավարության հաջողություններով մեծ չափով պարտական են Կիրովին: Մեր հայրենիքի պաշտպանության ամբողջական ուղղությամբ կատարած աչքի ընկնող ծառայությունների համար Ս. Մ. Կիրովը Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի տասներորդ տարեդարձին պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով:

Իր աշխատանքի առանձնապես վերջին տարիներում Կիրովը շատ ուշադրություն և հոգացողություն և հատկացրել է Լենինգրադի վերանորոգմանը (обновление), նոր տների կառուցմանը, նոր լայն փողոցների բացմանը, Լենինգրադի բարեկարգման բոլոր հարցերին, այն՝ իսկական սոցիալիստական քաղաքի փոխարկելուն:

1931 թվի հունիսին Լենինգրադի ակտիվին արած իր ղեկուցման մեջ Կիրովը հանգամանորեն բացատրում է Մոսկվայի քաղաքային տնտեսության և ԽՍՀՄ-ի քաղաքային տնտեսության դարգացման վերաբերյալ կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վորոշումը: Կիրովը պարզորոշ դնում է կոմունալ շինարարության բնագավառում՝ յեղած այն խնդիրները, վորոնք, կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի այս վորոշման կապակցությամբ, ծագում են Լենինգրադի կազմակերպությունների և Լենինգրադի արդյունաբերության առաջ:

«...Ի՞նչ բան է կոմունալ տնտեսությունը: Այդ, վերջին հաշվով, մեր խորհրդային տնտեսության այն տեղամասն է, վորտեղ մեր բանվորներն անց են կացնում իրենց ժամանակի յեթե վո՛չ մեծ մասը, այս համենայն դեպս կեսը: Բանվորը 7—8 ժամ աշխատում է գործարանում, իսկ մնացած ժամանակը նա անց է կացնում իր բնակարանում, փողոցում, այգում, թատրոնում, ո՛ւր ուղում էք, այսինքն՝ անց է կացնում կոմունալ տնտեսության մեջ այս բառի լայն իմաստով»:

«...Կարո՞ղ ենք արդյոք մենք անել այնչի՛ն, —չարունակում է Սերգեյ Միրոնովիչը,—քան մենք արել ենք մեր կոմունալ տնտեսության համար, յեղնելով տեղական զանազան տեսակ ռեսուրսներին: Պետք է ուղղակի ասել՝ կարելի չէ: Չենք արել միայն նրա համար, վորովհետեւ կոմունալ շինարարությունը, ի մեծ դժբախտություն, նայել ենք մատնի արանքով»:

Կիրովը խստորեն նախազուգանում էր նրանց, ովքեր հույս ունեյին, թե Կենտկոմի ոժանդակությունը Լենինգրադի կազմակերպությունները կաղատի լարված աշխատանքի անհրաժեշտությունին:

«Մեծ սխալ կլիներ, յեթե, Կենտկոմի վերջին վորոշումով հանդատացած, մենք մեզ ասեյինք՝ այժմ կղբալվեն նաև մեզնի: Զբաղվել են Մոսկվայով, կղբալվեն նաև Լենինգրադով: Այդ ճիշտ է, յինի—նստել և սպասել, թե կդաամեն տեսակի աշխատանքների մեքենացում, ոպցիոնալացում և այլն և այլն և թե մի 3 տարի՝ անց մենք ձեզ հետ մեկտեղ կապրենք այնպիսի մայրաքաղաքում, վոր կարելի չէ վո՛ր Յեկրոպան ասես դեպ և պարծենալ,—այդ է՛ դուրս դա, ընկերներ...»:

1931 թվի դեկտեմբերին Լենինգրադը առանձնացվեց վորպես ինքնուրույն վարչատնտեսական կենտրոն: Լենինգրադի քաղաքային Կուսկոնֆերենցիային արած ղեկուցման մեջ Կիրովը ցույց է տալիս կոմունալ շինարարության բնագավառում կատարելիք հերթական կոնկրետ խնդիրները: Բազմիցս նա յեկույթ է ունենում այդ թեմայի շուրջը: Կիրովի վայրուն ճառերն ամբողջով վում են նրա ամենորոյա պրակտիկայով, անձնական օրինակով: Ճարտարապետների հետ նա մանրամասն քննության է յենթարկում Լենինգրադում կառուցվելիք նոր բնակելի տների նախագծերը և ամբողջ յեռանդով պայքարում է «հանուն եժանություն» մի քիչ ավելի ցած, մի քիչ ավելի նեղ, մի քիչ ավելի հասարակ» կառուցելու ձգտումների դեմ: Նա ի՛նքն է քննարկում փողոցների վերապլանավորման նախագծերը, չափում—ձևում է՝ ի՛նչպես դուրս կդան դրանք բնականում, ի՛նքն ամեն առավոտ դնում է դեպի Չմեռային պալատ, յերբ այնտեղ դուրս էլի դալիս Ուրեկու անվան հսկայական հրապարակի առֆալտումը, ի՛նքն է ստուգում, թե ինչպես է Հոկտեմբերյան յերկաթգիծը Ստալինի փողոցում կտրում ուղին «Կրասնի պուտիլովեց» գործարանի մոտ, ճանապարհին մոտում է բանվորների բնակարանները, վորպեսզի ստուգի նորակառույցի վորակը:

Ամեն առավոտ Կիրովը դալիս է այս կամ այն շինարարությունը: Լենինի քաղաքը նա ավելի լավ գիտե, քան ուղածդ վաղեմի լենինգրադցին, և ամեն տեղ, ուր նա դցում է իր սրտտես աչքը, աշխատանքն առաջ է դնում ավելի լավ, մարդիկ

լցվում են նոր յեռանդով, բոլոր դժվարությունները լուծվում են արագ:

Անհնար է այստեղ թվարկել այն հարցերից նույնիսկ ամենախոշորները, վորոնք հերթի յեն դրված և մասնակիորեն կամ լրովին լուծված են Սերգեյ Միրոնովիչի մասնակցութեամբ, ցուցումներով և խորհուրդներով, իսկ յերբեմն եւ ուղղակի նրա ղեկավարութեամբ:

Կիրովի աշխատանքները՝ Մոսկւիի նրա կարիներում—այդ մի ամբողջ լաբորատորիա յէ. այստեղ կան նոր ներկեր դործվածքների համար և տներ ներկելու համար, խորհրդային ալյումինի առաջին ձուլածոներ, կոքսացած տորֆ, ձուլած չուգունն շինվածքներ, Կոլա թերակղզու հաղվադուտ հանածոների նմուշներ. այդտեղ կան փայտի թերուկներից առաջին անգամ ստացված եթիլալիտ փոքրիկ շէի մեջ լցված, սինթետիկ կաուչուկի դոյացման բոլոր բաղադրիչ տարրերը և անցման բոլոր ստադիաները ցուցադրող փորձանոթների մի ամբողջ կոլեկցիա:

Կիրովի կարիներն այն կենտրոնն են, ուր միակցվում եյին Լենինգրադի և Լենինգրադի մարզի վիթխարի շինարարութեան բոլոր թեւերը:

Լենինգրադում և Լենինգրադի մարզում չկար աշխատանքի տառացիորեն և վոր մի ճյուղ, վորտեղ չգլացվէին Կիրովի սրատես աչքն ու ամուր ձեռքը, նրա լրջմիտ ու պարզորոշ ցուցումները:

Բայց ամենից ավելի շատ և ամենից ավելի սիրով Կիրովը մտածում և հոգս եր քաշում կենդանի մարդկանց մասին:

Բանվորական մատակարարումը, բանվորների համար, մասնադեմների համար տների կառուցումը, բանվորների, կոլտնտեսականների, խորհրդային ինտելիգենցիայի կյանքի և կենցաղի հարցերը, քաղաքի և կոլտնտեսային դյուղի աշխատավորների կուլտուրական պահանջները—միշտ եւ կարեւորագույն տեղ եյին դրւում Կիրովի աշխատանքում:

«Բանվոր դասակարգը սկսում է ինչպես հարկն է նվաճել կուլտուրայի աշտարակները, և շատ ժամանակ չի անցնի, յերբ ժամանակակից կուլտուրայի ամբողջ զինանոցը կգտնվի բանվոր դասակարգի ձեռքում»,—ասում եր Կիրովն արդեն 1930 թվին:

Կիրովի խոշոր ձեռնարկումներից մեկը հանդիսանում է կղզիների (այժմ՝ Կիրովյան կղզիներ) վրա կուլտուրայի և հանգրստի հսկայական պարկի ստեղծումը Լենինգրադի աշխատավոր-

ների համար: Կյանքն ուրախ ու յերջանիկ դարձնել հարյուր-հազարավորների համար, միլիոնավորների համար—այդ Կիրովի մշտական մտածումն եր, նրան վորէնչոյ նվիրական իղձը:

Նրա հոգացողութեւնը յերիտասարդութեան մասին, յերեսաների մասին, դպրոցի մասին, նրա հսկայական սերը դեպի յերեսաները—հանրահայտ են:

Յերեսաները Սերգեյ Միրոնովիչին են դիմում իրենց կարիքներով, իրենց հարցերով: Կիրովը զգայուն կերպով պատասխանում է յերեսաների նամակներին, տալիս է նրանց դործնական, հարկավոր խորհուրդներ:

«Համերաշխ կուլեկտիվով, ձեր ուսուցիչների ղեկավարութեամբ տիրապետեք դիտություններին,—դրում է Կիրովը Լենինգրադի պիոներներին և դպրոցականներին,—ուսման մեջ մրցեցեք մեկմեկու հետ, ողնեք հետ մնացողներին: Հաստատակամորեն, պիոներական համառութեամբ ուսումնասիրեք մաթեմատիկան, ֆիզիկան, քիմիան, հասարակագիտութեւնը, պատմութեւնը, մայրենի և ոտար լեզուները:

Ուսումնասիրեք մեր մեծ սոցիալիստական շինարարութեւնը...

Սմբապնդեք կարգապահութեւնը դպրոցում: Պահպանեք դպրոցական ունեցվածքը և ուսումնական պիտույքները»:

Սերգեյ Միրոնովիչը խիստ կշտամբում է ծուլերին, պրոգուլչիկներին, դասերից ուշացողներին, դպրոցական նստարանները, սեղանները, պատերը, դատախտակները փչացնողներին:

«... միայն այն պիոները, այն պիոներուհին, վորոնք լավ են սովորում, ապագայում կդառնան իսկական մարտիկ-կոմունիստներ»:

Կիրովը խորը բերկրանքով, հուզմունքով եր դիտում նոր տաղանդների աճումը, անպայման ներկա յեր դռնվում կոնկուրսներում ընտրված պատանի յերաժիշտների համերգներին. տաղանդավոր յերեսաներից շատերին ինքն անձամբ ողնում եր վոտեի կանդնելու:

Վաղ մանկութեւնից Կիրովը սիրում եր յերաժշտութեւնը, յերգեցողութեւնը. ուղերային լավ ներկայացումը նրա համար մեծ ուրախութեւն եր: Դրա փոխարեն վատ, չարլոնային կատարումը նա տանել չեր կարող:

Կիրովը չափազանց շատ եր կարդում—լրագրեր, ժուռնալ-

ներ, նոր լույս տեսած դրքեր: Նյա դիտեր դրականության և ար-
վեստի բոլոր նորությունները, դիտության և տեխնիկայի նախ-
նախնայությունը: Կիրովը բուն կերպով սիրում էր բնությունը: Հան-
դեսով սրերը Կիրովը սովորաբար անց էր կացնում վորսորդու-
թյամբ, տասնյակ կելովները վատթիվ անցնելով անտառային
մացառություններով, ճահճային մորուսներով: Լինելով տոկուն, ան-
խոնջ, ժամանակ առ ժամանակ նա կատարելագույն ուժաստի
էր անում նույնիսկ ամենադժվար ճանապարհորդակիցներին,
խել հետո ինքն էլ բարեսրտորեն ծիծաղում էր նրանց վրա:

Անցնելով մեծագույն կարգի միջով, ծանրագույն վորսու-
թյուններին միջով, Կիրովը, դուցե, հենց դրա համար էլ առանձ-
նապես վառ կերպով էր դժուար կյանքի բերկրանքը, ստեղծագոր-
ծելու բերկրանքը:

«... մենք այստեղ, յերկրի ցամաքի մեկ վեցերորդա-
կան մասի վրա տեսնում ենք,—ասում է Կիրովը 1934 թվի
հուլիսին կուսակցության Լենինգրադի մարդային կոմի-
տեյի պլենումում,—թե ինչպես որ-որի վրա, ժամ առ
ժամ կոխվում է նոր, սոցիալիստական հասարակություն-
նը, կառուցվում է աշխատավորների իրոք հզոր կյանքը,
և պետք է կույր լինել՝ չտեսնելու համար, թե ինչպես այժմ
ամբողջ յերկրագունդը բաժանվել է յերկու հսկա, բայց
վոչ հավասար կիսագնդերի. մեկում գիշեր է, խավար ու
ամայացում և մեռյալ խոսք—մահ, մյուսում—կյանք, աշ-
խատանք ու ստեղծագործություն և հաղթական խոսք—
սուղ դեպի նոր կյանք: Յեվ, բնկերներ, չկան ավելի յեր-
ջանիկ մարդիկ, քան նրանք, ովքեր կոչվում են բուլշևիկ-
ներ: Այս կիսագնդում մեմբ ձեզ հետ մեկտեղ սուղ ենք
տանում այդ հաղթական դրոշմ և մեմբ անպայման կհաղ-
թենք, յեք է հավատարիմ լինենք Լենինի պատվիրաններին,
յեք է հետևենք մեր սիրելի Ստալինի ցուցումներին»:

Հենց նույն այս 1934 թվին, իր կյանքի, իր աշխատանքի
վերջին տարում, կուսակցության XVII համագումարի, հաղթու-
թյունի համագումարի տրեքունյակից, Կիրովն ասում էր.

«Մեր հաջողություններն իրոք վիթխարի յեն: Սա-
տանան դիտե, յեթե մարդկայնորեն ասենք, այնպե՛ս ու-
զում են սարել ու սարել: Հիրավի՛, մեկ նայեցեք, ի՛նչ
է կատարվում: Իսկ այս փա՛ստ է»:

Բայց հենց այստեղ Կիրովն անհապաղ ավելացնում է.

«Բայց վտանգ կա. կարելի յե այնպե՛ս հրապուրվել

ամեն տեսակի յերգասացություններով, վոր կղաղարեն
հասկանալուց, թե ի՛նչ է կատարվում շուրջը»:

Իսկ առանց ինքնաքննադատության քեզ վոչ մի կերպ
չեն կարող կանխել գլխապտույտից:

Ինքնաքննադատությունը ամենահուսալի, միակ և
ամենամոլոր գենքն է այն հիմնադրության առաջն առնելու
համար, վորը ընկեր Ստալինն անվանեց գլխապտույտ՝ հա-
ջողություններից»:

Կիրովն իսկական բուլշևիկ էր, նա հրաշալի կերպով կարո-
ղանում էր իր շուրջը համախմբել մարդկանց, վոչ միայն կու-
սակցականներին, այլև անկուսակցականներին, միացնել, վոգե-
նչել նրանց համառ պայքարի՝ Լենինի—Ստալինի գործի համար:

Կիրովն ուներ հսկայական ուժ, վորը գեպի նրան էր ձգում
բոլոր նրանց, ովքեր նրա հետ չիմել էյին կյանքում թեկուզ մեկ
անգամ: Այդ ուժի աղբյուրը նրա անսահման նվիրվածությունն
է պրոլետարական հեղափոխության գործին, նրա խորը սկզբ-
բունքայնությունը, նրա արտասովոր տոկունությունը, վճռա-
կանությունն ու հաստատակամությունն այն խնդիրների համար
մղվող պայքարում, վորոնք դրված են կուսակցության կողմից,
նրա խորաթափանցությունն ու հեռատեսությունը:

Կիրովն անսխալորեն միշտ ընտրում էր շղթայի այն հիմնա-
կան սղակը, վորից ամենից առաջ պետք է բռնել աշխատանքի
ժամանակ: Նա որակարգի յեր գնում հենց այն խնդիրները, վո-
րոնց աջողակորեն լուծելն ապահովում էր մեր նոր վիթխարի
հաջողությունները: Հակառակ նրանց, ովքեր միշտ վախենում
են՝ «չլինի թե մի բան դուրս գա», Կիրովը համարձակորեն առաջ
էր քաշում նոր խոչորագույն պրոբլեմներ և, հաղթահարելով
վոմանց անվճռականությունը, մյուսների համոզությունն ու
պահպանողականությունը, աջողակորեն առաջ էր գնում հասնե-
լու նշված նպատակին, չնահանջելով վոչ մի խոչընդոտի առաջ:

Կիրովը կարողանում էր բուլշևիկներին դաստիարակել ինչպես
հարկն է:

Կուսակցական կյանքի, կուսակցական դաստիարակության
հարցերը նա միշտ գնում էր ամուր և սուր կերպով:

«Յուրաքանչյուր բուլշևիկի համար ամենաարժեքավո-
րը, ամենաանգր, ամենամոտիկը—այդ մեր կուսակցությա-
նեղամենքի լենինյան դաստիարակությունն է»,—

ասում էր Կիրովը և այդ հաստատում էր ամենից առաջ իր սե-
փական աշխատանքով:

«Կուսակցութեան յուրաքանչյուր զիտակից անդամ պետք է պարտադիր ուսմամբ, աշխատի իր վրա վոչ միայն դպրոցում», — շատ անգամ կրկնում է Կիրովը:

«Մեր պրակտիկայի յուրաքանչյուր ուրը կուսակցութեան ամեն մի զիտակից անդամին առաջ կընթի նորանոր հարցեր, և դրանք լուծել մենք կարող ենք միայն այն դեպքում, յերբ մեր կուսակցութեան զիտակից կադրերի համար, ղեկավար կադրերի համար այն, ինչ կոչվում է լենինիզմի հիմունքներ, իսկապես՝ պարզ կլինի, այնքան պարզ, Վոր վոչ մի թեքում, վոչ մի դալթակցութուն դեպի աջ կամ ձախ կողմ չեն կարողանա տատանել մեր առանձին ընկերներին»:

Սերգեյ Միրոնովիչը մշտապես հիշեցնում է յուրաքանչյուր կոմունիստի կուլտուրական ընդհանուր մակարդակի, ընդհանուր դարգացման բարձրացման անհրաժեշտութիւնը:

«Վերցրե՛ք այնպիսի մի բնագավառ, ինչպես դրակա-նութիւնն է... Գրականութիւնն արդեն հանդիսանում է մեր այժմյան կյանքի ղեկի, պատկառելի մասը, այժմ նա միանգամայն վորոշ ազդեցութիւն է ձեռք բերում մեր յերկրի աշխատավորների հակայական շերտերի վրա: Գիտակից, աշխատանքում իրեն հաշիվ տվող կոմունիստը կարող է արդյոք այդ բնագավառի կողքից անցնել: Իհարկէ, վոչ: Ամենաուշագիր կերպով նա պետք է գլուխ հանի այս ամենից»:

«Կուսակցութեան ամբողջ կյանքը, նրա ամբողջ աշխատանքը մարքս-լենինյան վիթխարի դպրոց է—այդպես ել պետք է լինի նա: Մենք դործն այնպես պետք է դնենք, վոր մեր ամեն մի միջոցառում—վորոշում, վճիռ, ղեկընտ ունենան լենինյան-լեւակաւ հանրամատչելի հիմնավորում, վորը մատչելի պետք է լինի լայն մասսաներին, կուսակցութեանը և անկուսակցական աշխատավորների լայն շերտերին»:

Կիրովը սովորեցնում էր ամուր պահել ձեռքում լենինիզմի հուսալի կողմնացույցը, հաստատ ու անշեղորեն ղեկալ այն ճանապարհով, վորը հարթում է Մարքսի և Լենինի արժանալոր աշակերտ և նրանց դործը շարունակող, հեղափոխութեան մեծ ստրատեգ, ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինը:

Կիրովն ասում էր, վոր կուսակցութեան յուրաքանչյուր անդամ պետք է՝

«...իր կոմունիստական ուղեղում ունենա լենինյան իտիական կողմնացույց... Այդ կլինի թանաամուր հիմքը, ամենազխամուր պայմանն այն բանի համար, վորպեսզի մեր կուսակցութեանը պահպանի միասնութիւնը, վորպեսզի մեր կուսակցութեանը, ինչպիսի փորձութիւններում ել գտնվի, կարողանա դուրս գալ ամեն տեսակ դժվարութիւններից և մնա իսկապես լենինյան, իսկապես յերկաքէ, իսկապես միասնական այն կուսակցութիւնը, վորը մեր յերկիրը կհասցնի հաղթանակի»:

Այսպես էր ասում Կիրովը 1926 թվին յելույթ ունենալով Լենինգրադում՝ ողակային կուսակազմակերպիչների ժողովում: Նույն այդ միտքը նա համառ կերպով կրկնում է իր շատ ճառերի մեջ:

Կոմունիզմին անսահմանորեն նվիրվելու վորով էր դաստիարակում Կիրովը կոմյերիտականներին, սովորեցնում նրանց պայքարել լենինյան ուսմունքի անաղարտութեան համար:

«Սովորել կոմունիզմը և տիրապետել մարդկութեան կողմից կուսակազմ ղիտութիւնների ամբողջ գումարին, ամենուրեք և ամեն ինչում լինել հետևողական մարտիկ կոմունիզմի համար, լենինիզմի անաղարտութեան համար, միջադրային պրոլետարական հեղափոխութեան համար,— այս է լենինյան կոմյերիտիութեան կենտրոնական խնդիրն ընթացիկ ժամանակաշրջանում»:

Կիրովը շատ անգամ է ընդդժում կոմյերիտիութեան բոլշևիկյան դաստիարակութեան ամենասուր անհրաժեշտութիւնը:

1934 թվի հոկտեմբերին կուսակցութեան Լենինգրադի մարդկումի պլենումում իր արտասանած ճառում Սերգեյ Միրոնովիչը հիշեցնում է 1912 թվին ծնվածների հենց նոր միայն ավարտած գորակոչի մասին:

«Այս գորակոչիկները ծնվել են համաշխարհային պատերազմից յերկու տարի առաջ: Այսօրվա գորակոչիկը յերկամյա ճատիկ էր, յերբ սկսվեց համաշխարհային պատերազմը, հնգամյա յերեխա յեր, յերբ սկսվեց ոռոսական մեծ հեղափոխութիւնը: Այս մարդն այժմ դնում է պաշտպանելու մեր հայրենիքը: Նա 22 տարեկան է: Զորակոչիկները կոմյերիտիութեան ծաղիկն են, մեր յերիտասարդութեան ծաղիկը, այդ մեր յերկրի ապագան է, այդ ամենաուժեղն է, ամենաարժեքավորը, ինչ մենք այժմ ունենք... Յեւ վորպեսզի այսպիսի մարդկանցից աճեն

խոհական, տոկոսն բոլշևիկներ, ամբաբար հեղափոխականներ, վորոնք խոհապես ընդունակ են պաշտպանելու մեր յերկիրը ինչպես պետքն է, թե՛ Ֆիդիկապես և թե՛ իդեապես, անհրաժեշտ է լավ դրոված լենինյան դաստիարակութունը: Չե՞ վոր մենք, ավագ սերնդի մարդիկ, մենք ասլորում ենք, յես ուղղակի պիտի ասեմ, թող ինձ ուղղեն իմ հասակի մարդիկ,—մենք 90%-ով ասլորում ենք այն բազաժով, վորը մենք ստացել ենք հին, ընդհատակյա ժամանակներում: Յե՛վ այստեղ ճիշտ են ասում. վոչ մի այն դրքույկները, այլ բանտի ամեն մի ավելորդ տարի տալիս եր չափազանց շատ բան—այնտեղ կիսորհես, կիլիլի-սոփայես, ամեն ինչ 20 անգամ կկշռադատես, և յերբ կուսակցական վորեն յերդում ես ընդունում, ապա դիտես, թե ինչի՛ յե այդ պարտադրում, ի՛նչ է այդ նշանակում: Իսկ կոմյերիտականները—դրանք ծիլեր են, վորոնք աճել են արդեն խորհրդային արտում, սքանչելի ծիլեր, և դրա համար ել նրանց հարկավոր է առանձին ուշադրութուն հատկացնել, նրանց հարկավոր է այնպիսի դպրոց, վոր նրանցից աճեն սոցիալիզմի խոհական կառուցողներ»:

Կիրովը շարունակ մտրակում է դանդաղաշարժութունը, ավարայութունն ու ինքնահանգստացումը, վորոնք գնում են ձեռք ձեռքի տված և հաճախ հանդիսանում են մեր աշխատանքում յեղած խոշոր ճեղքվածքների սկզբնապատճառը:

Իր վողբերդական մահվանից մի քանի շաբաթ առաջ Սերգեյ Միրոնովիչը կուսակցության Լենինգրադի մարզկոմի և քաղկոմի պլենումում արտասանած ճառում առանձնապես կանգ է առնում այս հարցերի վրա: Նա ընդգծում է մեծ վտանգն այն բանի, վոր «մեր մի ամբողջ շարք աշխատողների մոտ—թե՛ այստեղ, մարդում և թե՛ ձեզ մոտ, ուսյոններում գոյութիւն ունի մեր աշխատանքի համար խորապես վնասակար մի տրամադրութիւն, վորը կարելի յե կոչել ինֆանտիլիզմի տրամադրութիւն»:

Այնուհետև 1934 թվի բացառիկ լավ բերքի հավաքման վատ աշխատանքի կոնկրետ որինակների վրա Կիրովը ցույց է տալիս, թե «ինչպես ինքնահանգստացման շնորհիվ նույնիսկ հրաշալի ուրյեկտիվ պայմանների ժամանակ կարելի յե կուսակցության առաջադրած խնդիրների լուծման մեջ անհաջողութիւն կրել»:

«Ինֆանտիլիզմի տրամադրութիւնը մեր աշխատանքի ամենավտնեւրիւմ բշմամիւն է,— ասլորում է Կիրովն իր զեկուցման այդ մասը:—Հարկավոր է, վորպեսզի ամենորայ գործնական

աշխատանքի ժամանակ մեզ միշտ ուղեկցի կուսակցության գործի համար բոլշևիկյան, շիտակ, ազնիվ ներքին տագնապը»:

Ուսորտունիդմն իր բոլոր տեսակներով, ինքնահոսի վրա հույս դնելը Կիրովն անողոք կերպով մերկացնում էր թե՛ իր ճառերում և թե՛ իր գործնական աշխատանքում:

«Պա՛ֆոս ու խանդավառութիւն և վո՛չ թե հանգի՛ստ ու ինքնահո՛ս: Նա, ով հույս է դնում յերկրորդ հնդամյակի առաջին տարվա պլանը կատարել ձեռքերը ծալած, ինքնահոսի արիքների վրա,—վատ տնտեսաւար է և վատ կոմունիստ»,—

ասում է Կիրովը 1933 թվի հունվարին Լենինգրադի ակտիվի ժողովում:

Իր ճառերում Կիրովը տասնյակ անգամներ ասացուցում է, վոր ինքնահոսի վրա հույս դնելը—այդ աջերի բնորոշ դիժն է: 1931 թվի հունիսին շրջկոմների քարտուղարների և շրջգործկոմների նախագահների խորհրդակցությանն արտասանած իր ճառում Կիրովը, իր ամբողջ սրությամբ դնելով վառելիքի ֆրոնտում առաջացած ճեղքվածքի հարցը, բացահայտում է դրված առաջադրանքների չկատարման պատճառները:

«Չե՛ վոր, մի լա՛վ մտածեք, ընկերներ, յեթե մենք, շնորհիվ մեր անկարողության, անկադմակերպվածության, անշնորհքության այդ 30 հազար բանվորներին չկարողանանք նետել փայտամթերման, չկարողանանք հարկավոր չափով բանվորական ուժ առանձնացնել տորֆի համար,— ի՞նչ կստացվի: Իսկ դրանից հետո կասենք. «Մենք, իհարկե, կուսակցության գլխավոր գծի կողմն ենք, մենք, ամբաբար բոլշևիկներ, խորտակիչ հակահարված ենք տալիս «ձախ» և աջ ուկլոնիստներին»: Իսկ իրականում ի՞նչ կստացվի: Աջ թեքման ավելի վատթար արտահայտում, քան ուսորտունիստական ինքնահոսի հետեւանքով բանվորների և արդյունաբերության զրկումն է վառելիքից, դըժվար թե դանես»:

Խարաղանքով ուսորտունիստներին և ինքնահանգստացողներին, Կիրովը հաստատորեն հարց է դնում բոլշևիկյան վճռական ինքնաքննադատության անհրաժեշտության մասին:

«Միքանի ընկերների դատողութիւններն այն մասին, թե չափազանց շատ չե՞ արդյոք ինքնաքննադատութիւնը,—չափ վնասակար բան է,—ասում է Կիրովը կուսակ-

ցության XVII համագումարում:—Իրոք, յեթե վատ է, յեթե անպետք է, ապա ել վո՞րտեղ կարելի չէ խոսել այդ մասին, յեթե վոչ մեր կուսակցության միջախառնում: Յեթե յես այսոր իրրե թե վոչինչ, սերունատես եմ, իսկ վաղը դարձա անբարետես,—կուսակցությունից զատ ել ո՞ր կարող եմ յես դեռել բժշկվելու համար: Միայն այս կարգով կարելի չէ կուսակցությունը մոբիլիզացիայի յենթարկել: Այստեղ յերբեմն յես, մեղավորս, մտածում եմ՝ սարսափելի չէ նույնիսկ, յեթե չափից անցնես. այստեղ անհամեմատ ավելի վտանգավոր է, յեթե չհասնես, վորովհետեւ «Ժընեյա՛ն» ինքնաքննադատությունը, վորով աշխտեղ զբաղվում են,—և՛ այսպես, և՛ այնպես, վորտեղ չես հասկանա՝ վատ է, թե լավ,—մեղ սաղական չես, այդպիսի քննադատություն մեղ պետք չէ՝:

Մեզ, բոլշևիկներին մոտ, այսպես է լինում—յեթե ինքնաքննադատություն ե՛ւ հասցրու մինչև վերջ: Յեմ այստեղ վոչինչ չի պատահի, վոչ վոք վոչ մի տեղ այստեղ չի տապալվի: Այդ միայն կողմի շտկելու գործը, և կուսակցությանը այդ կապահանի գոռոզամտության վտանգից, վորի մասին նախազգուշացնում եր ընկեր Մալինը»: Համառորեն, հաստատակամորեն և հետևողականորեն է պայքար մղում Սերգեյ Միրոնովիչը նրանց դեմ, ովքեր հանդես են գալիս լենինյան կուսակցության դեմ՝ աջերի, «ձախերի» և աջ-«ձախիկ» ճիւղաճյուղների դեմ: Լենինգրադի բոլշևիկներն առաջ և ամբողջ կուսակցության առաջ, համակուսակցական համագումարների տրիբունայից նա անդադար մերկացնում է ամեն դույնի և յերանդի ոսկողիցիայի հակահեղափոխական եյությունը:

Կուսակցության XV համագումարում, վորպես յեզրափակություն իր խորունկ ճառի, վորը լի չէ կծու ուրիշումով տրոցկիսական-դիմոկրատական հակակուսակցական բլոկի հացեյին, Կիրովն ասում է.

«...յես կարծում եմ, այժմյա XV համագումարում պետք է իսկապես ամբարտեղ այն, ինչ չախարաղեց կուսակցության XIV համագումարում. մեր ոսկողիցիային հարկավոր է կտրել-դեն գցել ամենամոռական, ամենահատուտուն և ամենաանխնա կերպով: Այդ է սպասում մեր կուսակցությունը, ա՛յդ է սպասում մեզանից բանվոր դասակարգը, ա՛յդ է սպասում մեզանից, ընկերներ, նաև միջազգային պրոլետարիատը...»

Այն ամենը, ինչ վոր վոտեքի տակ խնկվում է, ինչ վոր տատանվում ու տարակուսում է, պիտի քողովի պատմական անդունդում, իսկ մեր ու ձեր մանապարհը տանում է միայն դեպի առաջ և միայն դեպի հաղթանակները¹:

Կիրովը վճռական պայքար էր մղում կուսակցության ներսում բուրժուազիայի և, առաջին հերթին, կուլակության ազնւոտւրան հանդիսացող աջերի դեմ, վորոնք կատաղաբար դիմադրում էին կուսակցության ծավալած սոցիալիստական հարձակմանը:

Սերգեյ Միրոնովիչը ցասկոտությամբ մերկացնում էր աջերի դավաճանական դիրքը, վորոնք ձգտում էին, ինչպես և տրոցկիսաները, մեր ժողովրդի վրա նորից դնել կապիտալիստական ստրկության լուծը:

Կուսակցական XVI համագումարում Կիրովն իր խորտակիչ արդումենտների ամբողջ ծանրությամբ հարձակվում է աջերի դեմ.

«...դուք պետք է,—դիմում է Կիրովն աջ ոսկողիցիայի ձարադուլներին,—բոլշևիկներն փրակեք ձեր ծրագրերը և չընկնելով թերթիական պրպտումների խորքը, ուղղակի ասեք, վոր ձեր ծրագրերն ըստ բանի եյության կուլակային ծրագիր է, վորի կատարումը վերջին հաշվով կկործաներ պրոլետարիատի դիկտատուրան և կհասցներ կապիտալիզմի ռեստավրացիային:

...մեր կուսակցության XVI համագումարում մենք պետք է միանգամայն հաստատորեն, վնասկանորեն և անդառնալիորեն վերջ տանք աջ քեֆմանը¹: Վճռականորեն, հաստատորեն և անդառնալիորեն»:

1932 թվի հոկտեմբերին Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի արդյունքների մասին Լենինգրադի կուսակցական կազմակերպության ակտիվին արած իր գեկուցման մեջ Կիրովն առավելագույն պարզորոշությամբ դրեց ամեն տեսակ ներկուսակցական ոսկողիցիաների ուղիները վերաբերյալ հարցը.

«Կար ժամանակ, յերբ մենք կուլում էինք ներկուսակցական զանազան խմբավորումների դեմ այն հարցերի շուրջը, վորոնք սկզբունքորեն պարզ ու անվիճելի էին մեր կուսակցության անդամների հսկայական մեծամասնության համար, բայց վորոնք վիճելի էին թվում այս կամ այն

1) Ընդգծումը Ս. Մ. Կիրովինն է:—Խմբ.:

ոպողիցիոն խմբի համար: Այն ժամանակ մենք նրանց դեմ կոպում եյինք մեր կուսակցութեան ներսում, բայց միևնույն ժամանակ մենք նրանց նախազգուշացնում եյինք, վոր պայքարն ունի իր տրամաբանութիւնը, վոր ամեն մի խումբ, վորը կհամառի կուսակցութեան և նրա կենտրոնի գլխավոր դէմ դեմ մղած իր ոպողիցիոն պայքարում, միանգամայն անխուսափելի կերպով տրամաբանորեն կգլորվի հակահեղափոխութեան բանակը: Այժմ այն բոլոր հարցերը, վորոնց մասին մենք մի ժամանակ վիճում եյինք «ձախ» և աջ ոպողիցիոններն են, սոցիալիզմի հաղթական կառուցմամբ լուծված են հոգուտ կուսակցութեան լենինյան գծի»:

«Սոցիալիզմի թշնամիների հետ, այն մարդկանց հետ, վորոնք հանդես են դալիս Հոկտեմբերի նվաճումների դեմ, մենք չենք վիճում և մտադիր չենք վիճել:

Մենք նրանց դեմ պայքար ենք մղում վորպես թշնամիների դեմ, վորոնք վերջնականապես անցել են սպիտակ-գվարդիականների կողմը, սրբապետական դիկտատուրայի բացահայտ թշնամիների բանակը:

Իր ժամանակին մենք աջ և «ձախ» ոպողիցիայի առաջնորդներին նախազգուշացնում եյինք... վոր յեթե նրանք ժամանակին կանգ չառնեն, ապա կգնան հակահեղափոխութեան քանակը: Մենք նրանց նախազգուշացնում եյինք, վոր իրենց սխալների մեջ համառելով, նրանք անխուսափելիորեն գլորվում են Տրոցկու ուղին, այն մարդու ուղին, վորը գտնվեց բարեկազմի մյուս կողմը, բանվոր դասակարգի չարագույն թշնամիների բանակատեղում: Յեւ այժմ ամեն վոր կարող է տեսնել, վոր մենք լիովին իրավացի եյինք, վոր ինչքան ավելի հեռու են շարժվում սոցիալիզմի կառուցման փառապարհով, այնքան ավելի վառ կերպով է հանդես գալիս ամեն տեսակ ոպողիցիոն հոսանքների հակահեղափոխական բնույթը¹:

Վերջին ժամանակներս կուսակցութեան կողմից ջանքերով և ոպողիցիաների անանկացած թափափուկները, աջ և «ձախ» ոպորտունիստները համախմբվել են մի միավորված հակահեղափոխական խմբում, վորն իրեն խնդիր է դրել բուրժուա-կապիտալիստական կարգի վերականգնում:

մը: Այդ խմբում մենք գտնում ենք վոր քիչ քանակութեամբ մարդիկ, վորոնց մի մասը դուրս է չպրտվել կուսակցութիւնից, մի մասն էլ յերկերեսանութեան շնորհիվ մնացել է նրա շարքերում:

Այդ վորումեղի անանկները վորձում եյին խախտել սրբապետական դիկտատուրայի յերկաթյա հզորութիւնը:

Նրանք կհանդիպեն կուսակցութեան և բանվոր դասակարգի խորտակելի հակահարվածին, նրանք ստորագրեցին իրենց վերջնական դատաւճիւրը, նրանք դարձան քաղաքական մեռելներ»:

Կիրովի կողմից ավելի քան վեց տարի սրանից առաջ ասված այս նշանակալից խոսքերը բնորոշում են Սերգեյ Միրոնովիչի քաղաքական խորաթափանցութիւնը: Կուսակցութեան XVII համագումարում արտասանած իր սքանչելի ճառում ընկեր Կիրովը խաբանում է «արդեն ինչպիսիք», յերկես անվաճ տրոցկիստական-բուխարինական բանդիտներին:

Անդուլ և անհաշտ պայքար մղելով ընդդէմ կուսակցութեան թշնամիների, ընդդէմ սոցիալիզմի թշնամիների, ընդդէմ ժողովրդի թշնամիների, Կիրովը կենդանուրի կուսակցական և անկուսակցական բոլշևիկներին համախմբում էր մեր կուսակցութեան կենտրոնական Կոմիտեի շուրջը, Ստալինի շուրջը:

Կիրովը խորունկ սեր, անսահման նվիրվածութիւն էր տաճում դեպի աշխատավորների մեծ առաջնորդ, ուսուցիչ և բարեկամ ընկեր Ստալինը:

Որքան հուզմունքով, վիթխարի ուժով էր խոսում Կիրովը ընկեր Ստալինի մասին:

«Իժիվար է մարդ իրեն պատկերացնում այդ գիղանտի կերպարանը, վորպիսին հանդիսանում է Ստալինը: Վերջին տարիների ընթացքում, սկսած այն ժամանակից, յերբ մենք աշխատում ենք առանց Լենինի, մենք չգիտենք մեր աշխատանքում կատարված վոչ մի շրջադարձ, վոչ մի քիչ քիչ շատ խոշոր ձեռնարկում, լիզուկ, ուղղութիւն՝ մեր քաղաքականութեան մեջ, վորի հեղինակն ընկեր Ստալինը չլինէր, այլ ուրիշ վորեւէ մէկը: Ամբողջ հիմնական աշխատանքը—այս պետ է իմանա կուսակցութիւնը—ընթանում է ընկեր Ստալինի ցուցումներով, նախաձեռնութեամբ և ղեկավարութեամբ: Միջազգային քաղաքականութեան մասին»

1) Ընդգծումը Ս. Մ. Կիրովին է:—Խմբ.:

1) Ընդգծումը Ս. Մ. Կիրովին է:—Խմբ.:

նամեծ հարցերը մնալու են նրա ցուցումներով և մոչ մի-
այն այս մեծ հարցերը, այլ և, ըստ յերևութիւն, յերրոր-
դական և նույնիսկ տասերորդական նշանակութիւն ունեցող
հարցերը հետաքրքրում են նրան, յեթե նրանք վերաբերում
են մեր յերկրի բանւորներին, գյուղացիներին և բոլոր աշ-
խատավորներին:

Յեւ պետք է ասեմ, վոր այդ վերաբերում է մոչ միայն
սոցիալիզմի շինարարութեանն ամբողջութեամբ, այլև
մեր աշխատանքի առանձին հարցերին: Որինակ, յեթե
վերցնենք մեր յերկրի պաշտպանութեան վերաբերյալ հար-
ցը, ապա պետք է ամբողջ ուժով ընդգծել, վոր մեր բոլոր
հաջողութիւնները, վորոնց մասին յես խոսեցի, մենք ամ-
բողջութեամբ ու լիովին պարտական ենք Ստալինին:

Այս մարդու ուժեղ կամքը, կազմակերպչական վիթ-
իսարի տաղանդը կուսակցութեան համար ապահովում են
պատմական այն մեծ շրջադարձերի ժամանակին անցկա-
ցումը, վորոնք կապված են սոցիալիզմի հաղթական շինա-
րարութեան հետ»:

«Ընկեր Ստալինը, — ասում է Կիրովը, — դա բոլշևիկի
արինակ է այս բառի լիակատար մոխով ու նշանակու-
թեամբ: Այդ պատճառով ել պատահական չէ, վոր քշնամի-
ներն իրենց նետերն ամենից առաջ ուղղում են դեպի ընկեր
Ստալինը, վորն իր մեջ մարմնացնում է բոլշևիկյան կու-
սակցութեան անպարտելիութիւնն ու մեծութիւնը»¹:

Խորը, անսահման եր Կիրովի նվիրվածութիւնը Լենինի—
Ստալինի գործին, համաշխարհային պրոլետարական հեղափոխու-
թեան գործին:

Համկ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան միացյալ պլենումի
արդշունքների մասին 1933 թ. հունվարի 17-ին Համկ(բ)Կ Լենին-
գրադի կազմակերպութեան կուսակցական ակտիվի ժողովին արած
էր վոգեչունչ զեկուցման մեջ Սերգեյ Միրոնովիչն ասում եր.

«Ընկերներ, սրանից շատ դարեր առաջ մեծ մաթեմա-
տիկոսը յերազում եր գտնել հենման կետը, վորպեսզի,
հենվելով նրա վրա, շուտ տար յերկրագունդը: Անցան դա-
րեր, և այդ հենակետը մոչ միայն գտնված է, այն ստեղծ-
ված է մեր ձեռքերով: Շատ տարիներ չեն անցնի, յերբ
մենք, ձեզ հետ մեկտեղ, հենվելով սոցիալիզմի՝ մեր խոր-

հրդային յերկրում ձեռք բերած նվաճումների վրա, յեր-
կու կիսագնդերն ել շուտ կտանք դեպի կոմունիզմի նանա-
պարհը»¹:

Լինելով Քաղբյուրոյի անդամ և մեր կուսակցութեան Կենտ-
կոմի քարտուղար, Կիրովն անմիջականորեն ակտիվ մասնակցում
էր Խորհրդային Միութեան ներքին կյանքի և միջազգային քաղա-
քականութեան բոլոր խոչորագույն հարցերի լուծմանը:

Մեր կուսակցութեան Կենտկոմը Կիրովի վրա յե դնում է
չարք գծվարագույն և ամենապատասխանատու հանձնարարու-
թիւններ:

Այսպես, 1930 թվի աշնանը Կենտկոմի հանձնարարութեամբ
Կիրովը մեկնում է Անդրկովկաս, վորպեսզի վերականգնի Անդըր-
կովկասի բոլշևիկյան կազմակերպութիւնների շարքերի՝ ստոր
յերկերեսանի Լոմինաձեյի խախտած միասնականութիւնն ու
համախմբվածութիւնը: Կիրովն ամենակարճ ժամկետում հա-
ջողութեամբ կատարում է այս առաջադրանքը:

1934 թվին Ղազախստանի կուսակցական կազմակերպութեան
Թուլութեան և չիթմիվածութեան հետևանքով ստեղծվեց Խորհրդ-
դային Միութեան շտեմարաններից մեկի հարստագոյն բերքը
կորցնելու սպառնալիքը: Կուսակցութեան Կենտկոմը Ղազախստան
է ուղարկում Կիրովին, և Սերգեյ Միրոնովիչը կարճ ժամանա-
կում կազմակերպում է բերքի բոլշևիկյան հավաքը, ապահովելով
ամենակարճ ժամկետում հացամթերման հաջող ավարտումն ու
հավաքված հացի պահպանումը:

Հսկայական նշանակութիւն տալով հեղափոխական թեորիա-
յի հարցերին, Կիրովը մասնակցում էր թեորիական մի շարք մեծ
պրոբլեմների մշակմանը (ԽՍՀՄ-ի պատմութեան ուսումնասիրու-
թեան հարցերը և այլն):

«Բոլշևիզմի պատմութիւնը, — ասում է Կիրովը 1932
թվի հունվարին Համկ(բ)Կ Լենինգրադի մարդային և քա-
ղաքային IV միացյալ կոնֆերենցիային արած իր զեկուց-
ման մեջ, — միջազգային պրոլետարիատի մարտական զենքն
և կոմունիզմի համար մղվող պայքարում, ԽՍՀՄ-ի բանւոր
դասակարգի անպարտելի զենքն է սոցիալիզմի կառուցման
մեջ: Մեր կուսակցութեան պատմութիւնը սովորեցնում է
այն, թե ինչպես ազատագրել աշխատավորներին կապիտա-

1) Ընդգծումը Ս. Մ. Կիրովինն է:—Խմբ.:

1) Ընդգծումը Ս. Մ. Կիրովինն է:—Խմբ.:

լի ճնշումից, ինչպես նվաճել բանվոր դատակարգի ղեկաւորութեան:

Մեր կոմունիստական կուսակցութեան պատմութիւնը պրոլետարական հաղթական հեղափոխութեան և սոցիալիզմի շինարարութեան պատմութիւնն է: Մեր կուսակցութեան պատմութեան յուրաքանչյուր եջը, յուրաքանչյուր տողը—այդ վոչ թե դեպքերի պարզ խորնիկն է, այդ վիթխարի խորը գիտութիւնն է, վորը չիմանալով, չի կարելի պրոլետարական հեղափոխութիւն կատարել»:

Կիրովը խորապես հետաքրքրւում էր միջազգային բանվորական շարժման հարցերով և լավ գիտէր այն: Մեր հեղափոխական պայքարը, մեր նվաճումները, մեր հաղթանակները նա միշտ անխզելիորեն կապում էր պրոլետարիատի պայքարի հետ կապիտալիզմի յերկրներում:

«Բոլոր ժողովուրդները, ընկերներ, ամբողջ աշխարհի աշխատավորները գիտեն,—ասում է Կիրովը Լենինի հիշատակումը՝ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխութեան տասնամյակին նվիրւած հանդիսավոր նիստում,—վոր Հոկտեմբերյան հեղափոխութիւնը—այդ միայն մեր հեղափոխութիւնը չէ, վոր Հոկտեմբերյան ուղին—այդ միայն մեր ուղին չէ. յուրաքանչյուր ճնշւած, յուրաքանչյուր շահագործւող, յեթե նա իրոք լընդունէ և ուզում դուրս գալ այն ուղին, վորտեղ նա կիշրի և կխորտակի ստրկութեան շղթաները, պետք է իմանա, վոր այդ՝ Հոկտեմբերի ուղին է և է միայն մի ուղի»:

«Այդ հեղափոխութեան սկիզբը դրվեց մեզ մոտ, բայց նա մեր սոցիալիստական հայրենիքի սահմաններով վոչ մի չափով չի սահմանափակւում, նա վաղ քեռու, բայց դուրս կգա մեր յերկրի սահմաններից և անկասկած իր կարմիր ալիքներով կվազողի ամբողջ աշխարհի յերկրները և անկասկած պատմական դժոխքը կհաղթէ կապիտալիստներին և իմպերիալիստներին, աշխարհի բոլոր յերկրների կեդեքիչներին»:

Կիրովն ամբողջ կուսակցութեան սիրելին էր, վայելում էր մեծերի և յերեսաների, կուսակցական և անկուսակցական բոլրջեկներին, բանվորներին, կոլտնտեսականներին, խորհրդային ինտելիգենցիային, բոլոր աշխատավորների հսկայական, բացառիկ սերը:

Կիրովը ղեկավարեց տրոցկիստական-գինովյեւական բանդայի ջախջախումը Լենինգրադում, ոպողիցիոն գեներալներին թողնելով առանց զորքի: Կիրովը կուսակցութեան միասնականութեան համար պայքարող մարտիկների առաջին շարքում էր, անխնայ մերկացնում էր բոլոր և ամեն տեսակ ուկրոնիստներին և ոպողիցիոններներին, անողոք պայքար էր մղում լենինյան կուսակցութեան թշնամիների դեմ, հանդիսանում էր մեծ Ստալինի գինական ու բարեկամը, սոցիալիստական մեծ շինարարութեան ղեկավարներից մեկը, մեկը նրանցից, ով դնում էր խորհրդային ժողովրդին յերջանիկ և ուրախ կյանքի հիմքը:

Այդ պատճառով էլ նա ատելի յեր տրոցկիստական-գինովյեւական, աջ և բոլոր այլ բանդիտների համար, ժողովրդին թշնամիների համար: Այդ պատճառով էլ Կիրովին վրա ուղղվեց ֆաշիզմի անարդ վարձկանների հարվածը:

1934 թվի դեկտեմբերի 1-ին, հենց այն ժամին, յերբ Լենին-գրադի բոլշեւիկները համալքվել էին Ուրիցկու անվան պալատում լսելու Կիրովի ղեկուցումը կուսակցութեան Կենտկոմի վերջին պլենումի մասին, Կիրովը Սմոլնիում, իր կարինետի դռան մոտ սպանվեց թիկունքում ստորաբար թագնւած ֆաշիստական նողկալի վարձկանի, տրոցկիստական-բուխարինական բանդիտի չարագործ գնդակից:



Կիրովի չարագործ սպանութեան դաժան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց քաղաքներով և գյուղերով, գործարանների և ֆաբրիկաների ցեխերով, կոլտնտեսականների խրճիթներով, գիտնականների լաբորատորիաներով, մանկական դպրոցներով, կարմիր-բանակային զորանոցներով մեկ: Այն սուր ցավով խոցեց մեր յերկիրը, ծանր վշտով համակեց աշխարհի բոլոր յերկրների աշխատավորներին սրտերը:

Անիոխարինելի կորստի ցավով և վշտով լեցուն, մեծ ցասմամբ, բոլոր ատելութեամբ՝ դեպի ֆաշիստական մարդասպանները—ժողովրդին թշնամիները—միացան բոլոր նրանք, ովքեր խզել են կապերը բռնութեան, թշտութեան, ճնշման աշխարհի հետ, ովքեր Լենինին—Ստալինին դրոշի ներքո գնում են առաջ, դեպի սոցիալիզմ, դեպի յերջանիկ և ուրախ կյանք:

Մեր յերջանիկ յերկրում՝ վարձու ստրկութիւնը վերականգնել ցանկացող հակահեղափոխական կատաղած ճիւղաղների հար-

վածին մեր մեծ ժողովուրդը տվեց հաստատուն պատասխան:

Յերկաթյա շարքերով նա ե'լ ավելի սերտ համախմբվեց մեր կուսակցութեան շուրջը, մեր առաջնորդ և բարեկամ—սիրելի Ստալինի շուրջը: Ստալինական շարժման մեջ ունեցած խանդավառութեան և յեռանդի չտեսնված վերելքով նա ցույց տվեց իր կամքն ու անսասան վճռականութիւնը՝ հաղթական վախճանին հասցնելու սոցիալիզմի շինարարութիւնը, Լենինի—Ստալինի մեծ գործը, համաշխարհային պրոլետարիատի գործը, վորի համար Կիրովը նվիրեց իր կյանքը: Անվահեր մարտիկի, բոցավառ արիւրունի, իսկական պրոլետարական առաջնորդի՝ Կիրովի պայծառ կերպարանքը կապրի գալիք սերունդներին հիշողութեան մեջ, նո'ր հաղթանակների կվոգեշնչի՝ ուրախ, յերջանիկ կյանքի համար մղվող պայքարում:

Լենինգրադի կուսակցական կազմակերպութեան ակտիվիստ արտասանած իր ճառում ընկեր ժդանովը պայծառորեն արտահայտեց ամբողջ կուսակցութեան, մեր ամբողջ մեծ ժողովրդի մտքերն ու զգացմունքները:

«Ընկեր Կիրովի կյանքի թելը կտրվեց չարագործի դավաճանական զնգակից՝ հանդուցյալ Սերգեյ Միրոնովիչի ստեղծագործական ուժերի լիակատար ծաղկման ժամանակաշրջանում: Նրա ստեղծագործական ուժերի այդ ծաղկումը սերտորեն կապված էր սոցիալիզմի բուռն ծաղկման հետ, վորը տեղի յե տեսնում մեր յերկրում, վորն այնպես պայծառորեն ծաղկում է Լենինգրադում, կոմունիզմի այս առաջավոր ֆորպոստում:

Ամբողջ կուսակցութիւնը, ամբողջ բանվոր դասակարգը, ամբողջ յերկիրն այդ ուրերին քարացել էր համաժողովրդական մի վշտի մեջ: Ճմլվեց կուսակցութեան և բանվոր դասակարգի սիրտը, ճմլվեց ամբողջ ժողովրդի սիրտը: Յեւ ամբողջ ժողովուրդը կուսակցութեան և բանվոր դասակարգի գլխավորութեամբ ընկեր Կիրովի դազադի առաջ յերգվեց՝ վրեժխնդիր լինել նրան սպանող չարագործներից, վոչնչացնել մեր յերկրում հակահեղափոխութեան թափթիւռեկներին, տականքներին, ավլել—թափել մեր հողից ամբողջ աղտեղանքը, վորն ապարդյուն կերպով փորձում է հետ շուռ տալ պատմութեան անիվը, վորը կրակում է մեր կողմից ստեղծված մարդկային նոր հասարակութեան նոր մարդկանց վրա, և մեր յերկրում հաղթականորեն ավարտել կոմունիզմի գործը, վորի համար այնպես բոցավառ պայքարում էր ընկեր Կիրովը:

Ամբողջ կուսակցութիւնը, ամբողջ բանվոր դասակարգը և մեր Խորհրդային Միութեան ամբողջ ժողովուրդը սրբութեամբ կմեծարի, աչքի լույսի պես կապահարանի ընկեր Կիրովի հիշատակը, և նա, մեր ժողովուրդը մեծ հուշարձան կկանգնեցնի ընկեր Կիրովին: Այդ կլինի վոչ միայն նրա հիշատակի անհրաժեշտ հավերժացումը, վորը կապված է քաղաքները, մարդերը, ֆաբրիկավերժացումը, վորը կապված է քաղաքները, մարդերը, ֆաբրիկաներն ու գործարաններն ընկեր Կիրովի անվամբ կոչելու հետ: Մենք, կուսակցութիւնն ու բանվոր դասակարգը, Սերգեյ Միրոնովիչի հուշարձանը կկանգնեցնենք սոցիալիզմի գործերում, կոմունիզմի առաջնութեան հաղթական յերթում»:

Կուսակցութեան կազմակերպութիւններին ուղղած իր նամակում, վորը հրապարակված է Ս. Մ. Կիրովի չարանեղ սպանութեան կապակցութեամբ, կուսակցութեան Կենտկոմը մտանշանում էր:

«Մեզ վոչ թե բարեհոգութիւն է հարկավոր, այլ զգաստութիւն, իսկական բողջեկիյան հեղափոխական զգաստութիւն: Պետք է հիշել, վոր վորքան ավելի անհուսալի յե թշնամիների դրութիւնը, այնքան նրանք ավելի սիրով են գիմելու «ծայրահեղ միջոցի», վարպես դատապարտվածների միակ միջոցի՝ Խորհրդային իշխանութեան դեմ իրենց մղած պայքարում: Պետք է հիշել այդ և զգաստ լինել»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Մանկությունը և պատանեկության փառինները	5
Ռուսական առաջին հեղափոխության տարիններին:	
1905—1907 թ.թ.	12
Հյուսիսային Կովկասում: 1909 թ.—փետրվար 1917 թ. . .	21
Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման և անցկացման ժամանակաշրջանում	30
Աստրախանի հերոսական պաշտպանության գլուխ անցած .	44
Նորից Հյուսիսային Կովկասում, Թբիլիսիում	56
Ադրբեջանի աշխատավորների ղեկավարը	64
Լենինգրադի բուլեվարների գլուխ անցած	75

Թարգմանիչներ Ռ. Վարդապետյան, Ռ. Փարսուդյան, Հ. Հասրաբյան
 Հայերեն թարգմանության խմբագիր Վ. Փիմաչյան
 Տեխ. խմբագիր Ս. Խաչատրյան
 Մրբագրիչ Վ. Զիդեշյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավիլիաի լիազոր № Ն. 2834, հրատ. № 665
 Պատվեր № 68, տիպատ 5000
 Թղթի չափեր 84/100 1/16 (38.490 տպ. նիշ մեկ տպ. մամուլում)
 7 տպ. մամուլ, 3 1/2 թերթ թուղթ.
 Հանձնվել է արտադրության 25/III 1939 թ.
 Ստորագրվել է տպելու 3/V 1939 թ.
 Գինը 1 ռ., կազմը—լիդերներին՝ 1 ռ. 50 կ., կալենկորին՝ 1 ռ., հասարակը՝ 75 կ.

Պետհրատ—Փաղաքական գրականության հրատարակչության տպարան,
 Շիրան, Ալլանվերդյան № 65



Եջ	տալ	վրիգիկներ տպված է	պետք է լինի առնենում հարցաբ.-հաղաբախ
77	11 վ.	առնում	
79	1 ռ.	հարցաբ.-հաղաբախ	

17
215

ՀՀ Ազգային գրադարան



NL0185815

